

338(47.925)

5-24

1927







ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1924-25 ՅԵՎ 1925-26 Թ. Թ.

ՅԵՐԵՎԱՆ — 1927

338/47-925  
2-11



03.06.2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈ

338(47.925)

Հ-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1924-25 ՅԵՎ 1925-26 Թ. Թ.

ՅԵՐԵՎԱՆ — 1927



ԳՐԱՌ. № 182 (Բ). ՏԻՐԱԺ 850. ՊԱՏ. № 2109.  
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

Գրքից ողջովն ու անհատական և ուղղել հետևյալ

### ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Տ ե ք ս տ ու մ

| Եջ | Տող                 | Ցպված է | Պես է լինի |
|----|---------------------|---------|------------|
| 16 | 21 վերից            | 12.883  | 13.583     |
| 19 | 11 վարից            | 87      | 76         |
| 26 | » (վերջ. սյուն.)    | 1.196,5 | 1.962,5    |
| 31 | 9 » (առաջ. սյուն.)  | 701,5   | 1.701,5    |
| 58 | 7 վերից             | 1925    | 1926       |
| 59 | 18 »                | 301,8   | 3.018,8    |
| »  | 24 »                | 470     | 771        |
| 68 | 5 » (յերկր. սյուն.) | 6.307   | 6.407      |
| 76 | 13 վարից            | 26,1    | 22,1       |

Հավելվածում (աղյուսակներ)

|    |                    |                      |                |
|----|--------------------|----------------------|----------------|
| 4  | 7 վերից            | Ֆին. Ժող. Կոմ. լիազ. | Ֆին. Ժող. Կոմ. |
| 20 | 5 տ. 4-րդ. սյուն.  | 6                    | 296            |
| »  | 4 տ. 9-րդ. սյուն.  | 343                  | 36.343         |
| 28 | 3 տ. վարից 1-ին տ. | 71,5                 | 75,1           |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                            |       |
|------------------------------------------------------------|-------|
| Հառաջաբան                                                  | 5     |
| ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ                                         | 7—21  |
| Հողագործություն                                            | 7     |
| Կենդանաբուծություն                                         | 14    |
| Դյուղատնտեսությունն իր ամբողջությամբ                       | 16    |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ յեվ ԱՇԽԱՏԱՆՔ                            | 22—43 |
| Արդյունաբերությունը մինչև 1924/25 թ.                       | 22    |
| Արդյունաբերությունը 1924/25 յեվ 1925/26 թ.թ.               | 26    |
| Աշխատանք                                                   | 37    |
| ԱՌԵՎՏՈՒՐ յեվ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ                                    | 44—56 |
| Առեվտուր յեվ կոոպերացիա                                    | 44    |
| Գները յեվ ինդեքսները                                       | 54    |
| ՎԱՐԿ, ԲՅՈՒՋԵ յեվ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ                      | 57—70 |
| Վարկը                                                      | 57    |
| Հ.Ս.Խ.Հ. պետական յեվ տեղական բյուջեյի յեկամտա-<br>յին մասը | 62    |
| Հիմնական ներդրումներ                                       | 66    |
| ԱՄՓՈՓՈՒՄՆ յեվ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ                                  | 71—77 |

ՀԱՎԵԼՎԱԾ (ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ) 1—31



## ՀԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողի ուշադրութեանն առաջարկվող տեսութիւնը հանդիսանում է Հայաստանի ժողովրդական տնտեսութեան վերլուծութեան առաջին փորձը: Վորպես մի տարվա նյութերի սիստեմատիկ կուտակման յեվ կոնյունկտուրային աշխատանքի արդյունք՝ ներկա տեսութիւնը տալիս է, թերեւս վոչ լրիւ, Հայաստանի ժողովրդական տնտեսութեան անցած ճանապարհի, մասնավորապէս 1925/26 թ. ժամանակաշրջանի վերլուծութիւնը:

Սակայն, աշխատանքի շտապողականութեան պատճառով (տեսութիւնը պետք էր անպատճառ հրատարակել խորհուրդների V համագումարի նախորդակին), Կոնյունկտուրային խորհրդի Բյուրոյին չհաջողվեց լիակատար կերպով ոգտագործել այն բոլոր նյութերը, վորոնք գտնվում էին իր տրամադրութեան տակ: Այդ բացն, անշուշտ, դրել է իր կնիքն աշխատանքի վրա:

Յերկրորդ բացը կայանում է նրանում, վոր անցյալ ու նույնիսկ 1925/26 թվականի վերաբերմամբ տվյալներ ունեյինք, տեսութեան վոչ բոլոր բաժինների համար, կամ ունենալով այդպիսիք, չեյինք կարող վրստահել՝ նրանց վատորակութեան պատճառով: Եզրակացութիւնները կարող էյին պատահական լինել: Մենք աշխատել ենք տեսութեան հիմք ընդունել ըստ հնարավորութեան ստուգված տվյալները: Գերատեսչութիւնների, յեվ մասնավորապէս կենտրինիւրի լայն մասնակցութեամբ մի քանի անգամ վերահաշվարկել, շտկել են գյուղատնտեսութեան տվյալները, մի քանի անգամ ստուգել են արդյունաբերութեան տվյալները յեվ այլն, — այնուամենայնիւ, նկատի ունենալով նախապատերազմյան վիճակագրութեան բացակայութիւնը յեվ մեր վիճակագրութեան յերիտասարդ լինելը — այս տվյալները չենք կարող համարել բացարձակորեն ճշգրիտ, բայց նրանք հանդիսանում են Հայաստանի եկոնոմիկայի վերաբերյալ միակ հաւանական ղեկավարող նյութը: Անհրաժեշտ է շատ տվյալների ճշտումն յեվ ուղղումն, մանավանդ գյուղատնտեսութեան բնագավառում: Այս տեսակետից 1926/27 թ. տեսութիւնը կը կազմվի ավելի բարենպաստ պայմաններում:

Ներկա տեսութեան հավելվածում զետեղված աղյուսակները մշակվել



ու կազմվել են ըստ Պետականի Տնտեսա-վիճակագրական սեկցիայի չեվ  
Կոնյունկտուրային Խորհրդի Բյուրոյին գերատեսչությունների կողմից ներ-  
կայացված ամսական ու տարեկան նյութերի. (աղյուսակները տես հա-  
վելվածում):

Այս հրատարակության ընդհանուր ղեկավարությունը պատկանում  
է Ս. Քարամյանին չեվ Գ. Քոչարյանին: Վերջինս գրել է տեքստի մեծ  
մասը: Աղյուսակները կազմել է Հր. Սարգսյանը:

Հայաստանի Պետական Կոնյունկտուրային  
Խորհրդի Բյուրո

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելի ժամանակաշրջանում Հայաստանի գյուղատնտեսությունը  
պատերազմի չեվ հեղափոխության ընթացքում մեծ փոփոխություններ  
կրեց: Այդ փոփոխությունները տեղի ունեցան յերկու ուղղությամբ. մի  
կողմից՝ ցանքսերի տարածությունը կրճատվեց, անասունների քանակը  
նվազեց, բերքը վատացավ, մյուս կողմից՝ փոփոխություն առաջացավ  
առանձին մշակույթների փոխհարաբերության մեջ:

Շուկայական շատ աշխատանք պահանջող (թանկարժեք) մշակույթ-  
ները հետզհետե կրճատվեցին չեվ տեղի տվին սպառողական-պարենային  
մշակույթներին: Իմպերիալիստական պատերազմը, դաշնակցականների վա-  
րած անընդհատ կռիվները ներսում չեվ դրսում՝ բայրաչելով ամբողջ տըն-  
տեսական փոխհարաբերությունը չեվ խորտակելով տնտեսական բարեկե-  
ցությունը՝ դրդեցին գյուղական ազգաբնակչությանը, վոր իր ույժերի ամ-  
բողջ մնացորդը հատկացնի հացահատիկի մշակույթին, վորպեսզի սովից  
չմեռնի: Բամբակի ցանքսը բոլորովին կրճատվեց, վորովհետեւ բամբակի  
սպառողը սահմաններից շատ հեռու չիր:

Այգետունկն ընկավ, տեղ-տեղ նույնիսկ վոջնացավ: Մենք, դժբախ-  
տաբար, տվյալներ չունենք ցույց տալու համար, թե ինչպես է աստիճա-  
նաբար բայրաչվել տնտեսությունը, վորովհետեւ այդ շրջանը վիճակա-  
գրական տվյալներ չի թողել: Գյուղատնտեսության անկման պրոցեսսը  
կանգ առավ միայն յերկրի խորհրդայնացումով: Ուժասպառ ընակչու-  
թյունը հնարավորություն ստացավ նորից ձեռնամուխ լինելու խաղաղ  
աշխատանքի:

Այդ ժամանակվանից անկումը կանգ է առնում չեվ սկսվում գյու-  
ղատնտեսության վերականգնումը: Տեսնենք՝ ինչ դրություն եր Հայաստա-  
նի գյուղատնտեսությունը նախապատերազմյան շրջանի համեմատու-  
թյամբ:

## ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՑԱՆՔՍԵՐԻ  
ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ցանքսերի տարածութ. հազար դեսյատ. \*)

| Մշակույթների անունը     | 1909—1913 | 1923  | 1924  | 1925  | 1926  |
|-------------------------|-----------|-------|-------|-------|-------|
| Հացաբույսեր . . . . .   | 280,6     | 208,0 | 219,0 | 237,0 | 253,0 |
| Տեխնիքակ. մշակույթներ   | 18,8      | 9,7   | 21,2  | 20,6  | 17,9  |
| Վորից՝ բամբակ . . . . . | 14,0      | 4,0   | 15,0  | 14,7  | 11,7  |
| Այլ դաշտային մշակույթ.  | 15,2      | 10,1  | 11,4  | 13,5  | 14,5  |
| Այգիներ . . . . .       | 12,0      | 8,8   | 9,5   | 10,2  | 10,5  |
| Վորից խաղողի այգիներ    | 9,0       | 7,0   | 7,5   | 8,0   | 8,2   |

\*) Տես ընկ. Մ, Ներսիսյանի հոդվածը «Экономический Вестник Армении» 1927 թ, № 1



Հացաբույսերի ցանքների տարածությունը՝ 280,6 հ. դես.՝ վոր չափազանց նվազել էր, հասավ 1923 թ. մինչև 208,0 հազ. դես. ուրիշ խոտերով՝ նախապատերազմյանի 74,1 տոկոսին: Բամբակներ 14,0-ից գրեթե զերոյի հասնելով, բարձրացավ մինչև 4,0 հ.դես., այսինքն՝ 28,6 տոկոսի. յազգիների յեվ մասնավորապես խաղողի այգիների տարածությունը 12,0 հազար էր, իսկ հիշված տարում՝ 8,8 հ. դ.: Այդպիսով, ցանքսի ամբողջ տարածությունը 314,6 հազարից 1923 թ. հասավ 227,8 հազար դես.: Այդ են 1923 թ. արդյունքները:

Հետագա տարիներն արդեն ցույց են տալիս վերականգնող տնտեսության ամրացման պատկերը: 1924 թ. ցանքսերի տարածությունը հասնում է նախապատերազմյան շրջանի 80 տոկոսին, 25 թ.<sup>1</sup> 86,3 տոկոսին, 26 թ.<sup>1</sup> 90,7 տոկոսին:

26 թ.՝ 90,7 տոկոսին։  
Մշակման տարածությունն ավելացման հետ պակասում է վերականգնման պրոցեսի արագությունը։ 1924 թ. ամռանը 10 տոկոս է, 1925 թ. 8 տոկոս, իսկ 1926 թ.՝ արդեն 5 տոկոս։ Յեվ այդ դանդաղումը միանգամայն որինչափ է. վորքան մենք առաջ ենք ընթանում, վորքան մոտենում ենք նախապատերազմյան մակարդակին, այնքան սպառվում են վերականգնման պրոցեսի աղբյուրները, յեվ յուրաքանչյուր քայլ դեպի առաջ դառնում է ավելի դժվարին։

Յանքսի տարածությունն առնալով ընթացքն անհամաչափ է առանձին մշակույթներին նկատմամբ: Բավական համաչափ է առնում հացաբույսերի տարածությունը:

[illegible]

որքերը:

Վերականգնման պրոցեսսի այդ առաջին տարիներում ամենից շատ գարի յեր ցանվում, վորովհետեւ գարին չորության ավելի յե դիմանում, համեմատաբար ավելի յե բերք տալիս յեւ մեծ խնամք չի պահանջում (հատկապես լեռնային շերտում, վորտեղ վեգետացիոն ժամանակամիջոցը կարճ ե): Գարին գործ եր ածվում իբրեւ հաց՝ գուտ, կամ ցորենի հետ խառնած: Այդ պատճառով եւ վերականգնման ժամանակաշրջանի սկզբներում գարու ցանքսը գերակշռում եր: Հետագայում գարու դերը մի քիչ նվազեց:

Տեխնիքականներն ու ծիթաբույսերն ավելի ինտենսիվ են անում բան հացաբույսերը, դեռ 1924 թ. նրանք բարձրանում են նախապատերազմյան մակարդակից: Դրա մեջ արտահայտվում է մեր տնտեսության ինտենսիֆիկացիայի ձգտումը, վորը 1926 թ. խախտվում է բամբակի պատճառով: Բամբակի ցանքեր 1926 թ. իջնում է մինչև 11,7 հազար դեցյատին: Դրա պատճառը հանրաժանությամբ հացի անբավարար մատակարարումից առա-

ջաղած բամբակի յեւ հացի զների աննորմալ հարաբերությունը, վորի հետեւանքով տեխնիքական մշակույթի ցանքսի տարածությունը կրճատվեց:

Տեխնիքական յեվ ձիթաբույսերի մշակույթների աղյուսակում գետեղված մյուս մշակույթներից հիշենք նայեվ ծխախոտինը, վոր մեզանում նոր և յեվ ընդամենը 3—4 տարվա գոյություն ունի։ Բոլոր տվյալներին նայած կարելի յե յինթադրել, վոր այդ մշակույթը մեր տնտեսության մեջ պետք և աչքի ընկնող տեղ բունի։ Ներկայումս (1926 թ.) ծխախոտի ցանքսը աննշան չափի յե՝ 500 դեսյատին, ուստի գարմանալի չե, վոր տարածության աճումը տարեցտարի հարյուրավոր տոկոսներով և արտահայտվում։

Վերջապես ծիթաբույսը՝ նույնպես զգալի չափով աճել և յեվ բարձրացել նախապատերազմյան մակարդակից: Պատերազմի յեվ ազգամիջյան ընդհարումների ժամանակ բոլոր շուկաներից կտրված լինելու յեվ մի շարք բուսական յուղերի կարիք ունենալու պատճառով, գյուղացիներն սկսում են ծիթաբույսերի մշակույթը զարգացնել, վորը պատվաստվեց յեվ սովորական դարձավ գյուղացիական տնտեսության մեջ:

Բուսաբուծության մյուս ճյուղերից ուշադրության արժանի չե կարտոֆիլի մշակույթը: Կարտոֆիլի ցանքսը 1926 թ. նախապատերազմյանից 17 տոկոսով բարձրացավ:

Այսպիսով բաժնեակիր (բացառությամբ 1926 թ.), կարտոֆիլի, ծիլթաբույսերի յեվ ծխախոտի ցանքսի տարածությունը նախապատերազմյան մակարդակից բարձրացել ե. այդ իրավունք ե տալիս ասելու, թե մեր գյուղատնտեսությունը վոչ միայն վերականգնվում ե, այլ յեվ ծգաում ե քնդարծակվել տեխնիքական բույսերի յեվ ծիլթաբույսերի զարգացման ուղյությունը:

Անմահ ընթացքի դանդաղություն և ունեցել խոտացանությունը, վոր նախապատերազմյան մակարդակից բավական յետ և մնացել.—խոտամարզերի տարածությունը 1926 թ. հասել և նախապատերազմյանի միայն 75 տոկոսին: Այդ՝ կապ ունի այն վնասի հետ, վոր կրել և մեղանում անասնաբուծությունը:

Յեթե այգեգործությունն ու խաղողաբուծությունն առանձին ղիտելու լինենք, կտեսնենք վոր այդ հյուղերը միակերպ չեն վերականգնում: Այգեգործությունը մեծ վնաս եր կրել, ուստի դանդաղությամբ ե վորտի կանգնում. լրված այգիներում, ուր ծառերը կտրատել են, վերականգնումը բավական յերկարատեվ պրոցեսս ե: Պտղատու այգիների տարածությունը 1926 թ. քնդամենը նախապատերազմյան շրջանի 76,7 տոկոսն եր: Մինչդեռ խաղողի այգիները 8,2 հազար դեա. եին բռնում, այսինքն՝ նախապատերազմյանի 91,1 տոկոսը: Չնայած այդ յետամնացությանը (տեխնիքական մշակութիւնների համեմատությամբ)՝ պետք ե այնուամենայնիվ ընդունել, վոր այգիների յեվ մասնավորապես խաղողի այգիների հիմնական մասը քայքայումից գերծ ե մնացել, թեյեվ անբարենպաստ ժամանակներ ե ապրել: Բնական ե, վոր հետագայումն ել անման ընթացքը վորոշ չափով դանդաղ կլինի, վորովհետեվ տարածության ընդարձակումն այստեղ բավական յերկար ե տեվելու:

Պետք է նկատել յեվ այն, վոր աշգինների տարածությունը Պետպլանի այս աշխատության մեջ, զգուշության համար, յեղած տվյալներից նվազագույնն են ընդունված (այդ վերաբերումն բոլոր տարիներին), յեվ վստահ կարելի չես ասել, վոր հետագա նշտման ընթացքում, վոր կատարվում և Պետպլանում խաղողի աշգինների տարածության վերաբերմամբ, յեղած







նել և տալիս իրան: Գոնե մի 2—3 տարի յե պետք, վոր խաղողաբու-  
ծությունը բերքատվության կողմից նախկին դրությանը հասնի: Բեր-  
քատվ. մասին արած ընդհանուր գիտողություններից հետո անցնենք այժմ  
բնական արտադրանքին:

1926 թ. հացաբույսերը տալիս են ընդհանուր առմամբ 15,460 հազար փ., այսինքն՝ համարյա մոտենում են նախապատերազմյանին (16,019 հազար փութ)։ Հացահատիկներից գարնանացանն է աչքի ընկնում, վորի արտադրանքը նախապատերազմյանից բարձր է։ Բամբակագործությունը տալիս է 468,0 հազ. փութ՝ հնդավոր բամբակ նախապատերազմյանի 798,0 հազարի դիմաց, վոր հետեվանք է, ինչպես տեսանք, ցանքսի տարածության կրճատման յեվ բերքատվության անկման։ Արագ առաջ է գնում ծխախոտը, վորի ընդհանուր արտադրանքը վերջին տարում յեղել է 25,3 հազար փութ՝ նախապատերազմյան շրջանի 4,5 հազար փթի դիմաց։ Յեթն նկատի առնենք, վոր պատերազմից առաջ բացառապես «դոյլատար» եր մշակվում, մինչդեռ 1926 թ.՝ համարյա բացառապես բարձրորակ դեղին ծխախոտ, — պապ պետք է ընդունենք ծխախոտագործության խոշոր հաջողությունները։

Կարտոֆիլը տալիս է 4845 հազ. փ. նախապատերազմյանի 4160 հազ. փ. դիմաց: Արտադրանքի աճումն այստեղ ցանքսի տարածության ընդարձակման հետեւանք է, վորովհետեւ կարտոֆիլը լավ բերք տալու կողմից դեռ յետ է նախապատերազմյան շրջանից: Յերբ բերքատու- թյան կողմից կարտոֆիլը նախապատերազմյան մակարդակին հասնի, այն ժամանակ մեր նվաճումները փոչ թե հարաբերական արժեք կունենան, այլ յեւ բացարձակ: Պաղովը 4500 հազար փթից իջնում է 1640 հազ. փթի:

ՀՈՂԱԳԻՐԾՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿՐԱՆՔԻ ԱՐԺԵ-  
ՔԱՅԵՆ ԱՐՏԱՀԱՅ-  
ՏՈՒԹՅՈՒՆԸ:

Մինչև իմա մենք քննում եյինք բնական ար-  
տադրանքը, մի կողմ թողնելով նրա արժեքային  
արտահայտությունը: Մինչդեռ հետաքրքրական է  
տեսնել, թե արժեքի տեսակետից ինչպես է ար-  
տահայտվում հողագործություն ընդհանուր արտադրանքը, յեվ արժեքա-  
յին փոխհարաբերությունները զանազան մշակույթների միջև ինչպես  
փոփոխվեցին նույն ժամանակաշրջանում:

Հողագործության ընդհանուր արտադրանքի արժեքային արտահայտութիւնը:

(Նախապատ. գներով, հազ. ռուբլ.)

| Մշակույթներ              | 1909—13 թ. | 1923 թ. | 1924 թ. | 1925 թ. | 1926 թ. |
|--------------------------|------------|---------|---------|---------|---------|
| Հացաբույսեր (հարդի հետ)  | 16468,5    | 10826,8 | 11287,9 | 12093,6 | 15826,3 |
| Տեխնիքական և ձիթբույսեր  | 3190,9     | 976,4   | 2984,9  | 3443,7  | 2361,8  |
| Այլ դաշտային մշակույթներ | 2848,0     | 1723,1  | 1758,4  | 2336,2  | 2873,8  |
| Բնական խոտ               | 1430,6     | 1584,7  | 1240,2  | 1364,9  | 1806,3  |
| Այդեգործ.                | 4950,0     | 1800,0  | 2525,0  | 1696,0  | 2120,0  |
| Ընդամենը                 | 28888,0    | 16911,0 | 19796,4 | 20934,4 | 24988,2 |

(Ժամանակակից գներով, հազար չերվ. ռուբլ.)

| Մշակույթներ                | 1923 թ.  | 1924 թ. | 1925 թ. | 1926 թ. |
|----------------------------|----------|---------|---------|---------|
| Հացաբույսեր (հարդի հետ)    | 17.238,9 | 20142,8 | 24427,3 | 27172,9 |
| Տեխնիքական յեվ ձիթաբույսեր | 1350,6   | 3969,7  | 4667,0  | 3218,5  |
| Այլ դաշտային մշակույթներ . | 2582,0   | 2976,2  | 4418,7  | 5569,0  |
| Բնական խոտ . . . . .       | 2641,1   | 2430,0  | 3072,3  | 3612,6  |
| Այգեգործ . . . . .         | 2264,0   | 3375,0  | 2672,0  | 4076,0  |

|                 |          |          |         |         |
|-----------------|----------|----------|---------|---------|
| Բնդամենը՝ . . . | 26.076,6 | 32.893,7 | 39156,3 | 43649,0 |
|-----------------|----------|----------|---------|---------|

Աղյուսակը յերկու ձեւով և մշակված՝ ամբողջ ընդհանուր արտադրանքը արտահայտված և նախապատերազմյան յեւ չերվոն ոււրլիններով։ Նախապատերազմյան ոււրլինների վերածելով՝ մենք ուզեցել ենք քանակական մոմենտը շեշտած լինել։ Չերվոնի գները մեկակ՝ քանակական մոմենտը ստվերի տակ թողած կլինեյին, յեւ մենք գների հարաբերության փոփոխման դեպքում վորյեւ յեզրակացության հանգել չէինք կարող։ Ներկա աղյուսակում մենք ունենք թե այս, թե այն, յեւ այդ մեզ հնարավորութիւն և տալիս համեմատութիւն կատարելու։

Նախ տեսնենք՝ պատերազմից առաջ առանձին մշակույթների մեջ ինչ հարաբերությունն գոյություն ունեւ: Հիմնական տեղը զբաղում են ինչպես յեւ պաասելի յեր, հացաբույսերը, վորոնց արտադրանքի արժեքը 16,468 հազ. ռուբլի յե, ըստ վորում այդ գումարի մեջ և մտնում նայեւ հարդի (դարմանի) արժեքը: Հացահատիկները (հարդի հետ միասին) կազմում են հողագործությունիւ ամբողջ արտադրանքի արժեքի 57 տոկոսը: Այդ տոկոսը, ինչպես յեւ պաասելի յեր, տվյալ ժամանակաշրջանում ցուցաբերում և անում, յեւ այդ բոլորովին համապատասխանում և վերելի աղյուսակին: Մենք գիտենք, վոր հացաբույսերի բերքատվությունն ու ցանքսերի տարածությունը ավելի յեն մոտեցել նախապատերազմյան մակարդակին, բան մյուսները: Միայն թե՛ յերը տոկոսային հարաբերությունները համեմատելու լինենք, վորոշ անհամապատասխանություն կնկատենք: Հացաբույսերի մշակույթի տեսակարար կշիռը չերվոն ռուբլիներով ավելի բարձր և, կյսինքն, այլ կերպ ասած՝ արժեքային տեղաշարժություն և տեղի ունեցել. հողագործության մյուս նյութերի հետ համեմատած՝ հացահատիկը բարձրացել և: Այս յերելությունը նկատվում և մինչև 1925 թ.: 1926 թ. շրջադարձի տարի յե. այստեղ, ըստ յերելությունիւ, լավ բերքի պատճառով զներն ընկնում են, յեւ չերվոնով զնահատելու համեմատությունը նախապատերազմյանի հետ արդեն հոգուտ առաջինի չի խոսում: Պետք և կարծել, վոր այդ առողջ տենդենց և, վոր իր նշանակությունը հաջորդ տարվա համար եւ պահելու յե յեւ դրանով մեծ խթան և հանդիսանալու տեխնիքական մշակույթների զարգացման:

Յերկրորդ տեղն ըստ արժեքի ընկնում է այգեգործության յեվ խաղողաբուծության արտադրանքը: Այս մշակույթները տալիս են 4950 հազար ո. արտադրանք, վորից միայն խաղողաբուծությանն ընկնում է 4050 հազար: Այդ՝ հողագործության արտադրանքի ընդհանուր արժեքի 17, 1 տոկոսն է կազմում:

Ցանքսի տարածության յեւ ըբերբատության պակասման հետ միասին ընկնում ե խաղողաբուծության ընդհանուր արժեքի կշիռը: Այդ անկումը ժամանակակից արժեքով ավելի ուժեղ ե, վոր ցույց ե տալիս, թե արտադրանքը վորոշ չափով (թեյեւ անշան) արժեքազուրկ ե դարձել: Միայն վերջին տարին ե, վոր հարաբերությունը հոգուտ խաղողի յե, վորի արժեքը, նախապատերազմյան ուուրլիներով, հողագործության ամբողջ արժեքի 8,5 տոկոսն ե կազմում, իսկ չերվ. ուուր., 9,3 տոկոս:

Յերրորդ տեղն ըստ արժեքի բռնում են տեխնիքական յեվ ձիթա-  
բույսերի մշակույթները: Այստեղ, իհարկե, վնասական նշանակությու-  
ն ունեցել բամբակը: Այս մշակույթների ընդհանուր արժեքը հավասար է  
3.190 հազ. ռ., վոր ընդհանուր գումարի 11 տոկոսն է: Յերկու տեսակ  
գների՝ նախապատերազմյան յեվ չեքվոնի՝ համեմատու-  
թյունը ցույց է տա-  
լիս, վոր բամբակի այժմյան գինը նախապատերազմյանից զգալի ցած է:



Այսպես, որինակ՝ 1925 թ. բամբակի գինը ամբողջ գումարի 14, 7 տոկոսն է նախապատերազմյան ռուբլիներով, իսկ չերվոն ռուբլիներով 10,4 տոկոսը: Բամբակի գների անհամաչափությունը անցյալ տարիներում սովորաբար փոխհատուցվել է հացի մատակարարումով յեվ հացի ու բամբակի նախապատերազմյան գների հարաբերությունը համապատասխանող արժեքով հոսք վաճառելով, բայց 25/26 թ. հացի անբավարար ներածման հետևանքով բամբակի ցանքսի տարածությունը նվազեց:

Մշակույթների վերջին խումբը, վորի մեջ մտնում են կարտոֆիլը, ցանովի խոտը, բանջարանոցային արտադրանքները, բոլոր արտադրանքի արժեքի 10 տոկոսն է կազմում: Այստեղ խոշոր տատանումներ չեն նկատվում:

### ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՍՆԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ Գյուղատնտեսության յեվ վոչ մի նյութ աշխարհի չի տուժել իմպերիալիստական յեվ ազգամիջյան կռիվներից, ինչպես անասնապահությունը, վորի ստացած վնասն, արտահայտվում է թե՛ անասունների բանակի նվազմամբ յեվ թե՛ նրանց վորակի վատացումով: Անասնապահության առանձին նյութերը միատեսակ չեն տուժել:

Անասունների թիվը Հայաստանում (հազար գլուխ)

|                         | 1913 թ. | 1924 թ. | 1925 թ. | 1926 թ. | 1927 թ. *) |
|-------------------------|---------|---------|---------|---------|------------|
| Զի . . . . .            | 51,5    | 21,8    | 26,2    | 29,0    | 31,9       |
| Խոշ. յեղջ. անաս. վորից՝ | 893,0   | 632,6   | 702,8   | 781,0   | 858,5      |
| ա) լծկան                | 294,7   | 185,2   | 205,7   | 234,7   | 257,7      |
| բ) կթան                 | 267,9   | 183,8   | 204,3   | 217,2   | 238,9      |
| Վոչխար . .              | 1.378,6 | 910,0   | 1.011,2 | 1.125,6 | 1.237,9    |
| Այծ . . . . .           | 186,0   | 185,8   | 206,4   | 260,0   | 286,0      |
| Խոզ . . . . .           | 23,6    | 27,2    | 30,2    | 33,5    | 36,8       |

Իր բացարձակ կրճատմամբ ամենից շատ վնասվել է ձիաբուծությունը. 1913 թ. 51, 5 հազար ձիու փոխարեն մենք 1924 թ. ունենք 21,8 հազար, այսինքն 42,3 տոկոս: Այդ հետեվանք է բազմաթիվ բռնազրավումների, զորակոչների, վորոնք տեղի ունեցան 1914-20 թ.թ.: Յերբ յերկիրը խաղաղվեց, տնտեսության մյուս նյութերի նման ձիաբուծությունն էլ սկսեց վերականգնել, թեյեվ դանդաղ յեվ մեծ դժվարություններով: Այդ դժվարությունները բացատրվում են նրանով, վոր Հայաստանում, ինչպես յեվ առհասարակ Անդրկովկասում, ծին ծառայում է գլխավորապես վոչ թե դաշտային աշխատանքների, այլ հեծնելու յեվ կառքի համար: Մինչդեռ լծկանների նկատմամբ վերականգնման պրոցեսը մեծ թափով եր առաջ գնում: Անհրաժեշտ եր նախ լծկան ունենալ հողը մշակելու համար, հետո

\*) 1927 թ. անասունների բանակն առնվում է յենթադրաբար

միայն ձի պահել: 1927 թ. ձիերի բանակը արդեն նախապատերազմյան շրջանի 61,9 տոկոսին է հասնում: Վերականգնման այդ դանդաղ ընթացքի պատճառով ել ձիաբուծությունն տեսակարար կշիռը յերկրում մի քիչ իջել է: Վերածելով խոշոր անասունների՝ ձիերն ամբողջ տավարի 4,6 տոկոսն էլին կազմում—1924 թ. այդ տոկոսն իջնում է 2,9-ի, իսկ 27 թ. մենք ունենք արդեն 3,1 տոկոս:

Խոշոր յեղջուրավոր անասունը, վոր մեր գյուղատնտեսության հիմքն է կազմում, ընդհանուր առմամբ մեծ վնաս է կրել: 1913 թ. 893 հազար գլուխ տավարի փոխարեն մենք 1924 թ. ունենք 632 հազ., այսինքն՝ 70,8 տոկոս: Թվերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, վոր անասնապահության կրած վնասն ավելի խոշոր է, բան այդ թվերն են ասում, վորովհետեվ կրճատումն ավելի լծկանին յեվ կթանին է վերաբերում, բան մատաղ տավարին:

Նայենք ըստ հասակի:

Ամենից շատ տուժել է լծկանների թիվը. 1924 թ. այն վերականգնել է մինչեվ 62,8 տոկոս: Այնուհետեվ վերականգնումն ավելի արագ թափով է առաջ գնում յեվ 1927 թ. կհասնի 87,4 տոկոսի: Կթանը մի քիչ ավելի լավ դրությունն է, վերականգնել է 89,2 տոկոսով: Վերականգնման կազմը նախապատերազմյան մակարդակից նույնիսկ 24 տոկոսով գերազանցում է: Հորթերը վերականգնել են 97,2 տոկոսով:

Այսպիսով պետք է ընդունել, վոր, չնայած մեր անասնապահության կրած վնասի մեծության, վերականգնումն արագ թափով է տեղի ունենում, յեվ կարելի յե յենթադրել, վոր իրերի բնականոն ընթանալու դեպքում, 1928 թ. զարնանը տավարի բոլոր տեսակների նկատմամբ նախապատերազմյան մակարդակը կանցնենք:

Անասնապահության զարգացման հեռանկարները՝ նպաստավոր համարելով, մենք պետք է մատնանշենք նայեվ այն վտանգը, վոր մեր բոլոր հաշիվներին սպառնում է: Այդ՝ ժանտախտի զարգացող համաճարակն է, վոր խոշոր կորուստներ է պատճառում յեվ վորի դեմ Անդրկովկասի հանրապետությունների միահամուռ ջանքերով պետք է կռիվ մղել:

Մանր յեղջուրավոր անասունները, վոր խոշորի վերածած, բոլոր անասունների 15 տոկոսն են կազմում, նույնպես զգալի պակասել են: Սակայն, վերականգնումն արագ է ընթանում յեվ հասել է համարյա 91 տոկոսի: Այծերի նկատմամբ նախապատերազմյան մակարդակին դեռ 1924 թ. ելինք հասել:

Արագ զարգանում է խոզաբուծությունը, վոր նախապատերազմյան մակարդակից 56 տոկոսով բարձրացել է: 1927 թ. անասունների բանակը խոշոր յեղջուրավոր անասունների վերածած՝ առհասարակ վերականգնել է 92,4 տոկոսով:

Յեթե նկատի առնենք վերականգնման բավական կայուն ընթացքը 10-11 տոկոս առ նախընթաց տարին, ապա իրավունք ունինք ասելու, վոր մոտակայում լիովին կվերականգնի անասնապահությունը:

ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒՆ Մանրամասն կանգ չառնելով կենդանաբուծության թՅԱՆԱՐՏԱԴՐԱՆՔԸ մյուս նյութերի վրա՝ անցնենք նրա ընդհանուր արտադրանքի արժեքային արտահայտությունը. 1913 թ. անասնապահության ընդհանուր արտադրանքի 12.249 հազար նախապատ. ռուբ. արժեքի կեսից ավելին ընկնում եր կաթին (հաշվելիս կաթի արժեքն են վերցնում յեվ վոչ



նրանից պատրաստված միջոցների արժեքը): Բավական խոշոր տեղ է ընդունում նախել հարպի յեվ մսի արժեքը՝ 2.698 հազար ու: Ամբողջ կենդանաբուծության արժեքի համեմատությամբ՝ անասնապահության արտադրանքի ընդհանուր արժեքը կազմում է 79,4 տոկոս: Թռչնաբուծության արտադրանքը կենդանաբուծության ընդհանուր արտադրանքի արժեքի 10,6 տոկոսն է կազմում: Համարյա նույն տեղն ունի նախել մեղվաբուծությունը՝ 9,4 տոկոս: Վերջապես, աննշան արժեք է ունեցել շերամապահությունը՝ 90 հազ. ուրբի, վոր ամբողջ կենդանաբուծության արժեքի 0,6 տոկոսն է:

Վերականգնման շրջանում տեղի ունեցած տեղաշարժությունն արտահայտվել է գլխավորապես նրանով, վոր անասնապահության արտադրանքի տեսակարար կշիռը բարձրացել է ի հաշիվ կենդանաբուծության մյուս ճյուղերի՝ 79,4 տոկոսից 85,8 տոկոսի: Առանձնապես տուժել է մեղվաբուծությունը:

Թռչնաբուծության արտադրանքի արժեքը նույնիսկ մի քիչ բարձրացել է, մի հանգամանք, վոր արտադրանքի թանկացմանը պիտի վերագրել, վորովհետև նախապատերազմյան ուրբիներով հաշվելիս այդ չի նկատվում:

1927 թ. մեր վերահսկիչ թվերի համաձայն ամբողջ կենդանաբուծության արտադրանքի արժեքը նախապատերազմյան ուրբիներով կանի 13,583 հազար, 15,423 հազ. ուրբու դիմաց, այսինքն՝ կր վերականգնի 88,1 տոկոսով:

Վերականգնման ընթացքը միջին հաշվով տարեկան 10 տոկոս է, վոր բնական է, վորովհետև անասնապահությունն էլ, ինչպես նախորդ աղյուսակից տեսանք, նույն տեմպով է վերականգնել, իսկ անասնապահության արտադրանքն ամբողջ կենդանաբուծության արտադրանքի արժեքի 80 տոկոսից ավելին է տալիս:

Կենդանաբուծության յերկրորդական ճյուղերը հետագայում իրենց զարգացման տեմպը կարագացնեն անասնապահությունից. թե մեղվաբուծությունը, թե թռչնաբուծությունը, յեվ թե շերամապահությունը մեղվաբուծությունը բոլոր տվյալներն ունեն զարգանալու: Մեր տնտեսության մեջ ունեցած նրանց կարեվոր նշանակությունն, արագ անելու ունակությունը, նպատավոր կլիմայական պայմանները, ազատ ձեռքերի ներկայությունը—այս բոլորը շատ բարենպաստ պարագաներ են, վոր զարգացմանը զարկ պիտի տան:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄ

Այժմ դառնանք գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի աղյուսակի (արժեքային արտահայտությ.) բնությանը:

Գյուղատնտեսության ընդհ. արտադր. նախապատերազմյան հազ. ուրբ.:

|                                    | 1909—13 թ. | 23/24 թ. | 24/25 թ. | 25/26 թ. | 26/27 թ. |
|------------------------------------|------------|----------|----------|----------|----------|
| Հողագործություն                    | 28.888,0   | 16.911,0 | 19.796,4 | 20.934,4 | 24.988,2 |
| Ընդհանուր գումարի վոր տոկոսն է . . | 64,3       | 62,5     | 63,9     | 62,6     | 63,9     |
| Կենդանաբուծութ.                    | 15.422,4   | 9.876,8  | 10.871,5 | 12.024,6 | 13.583,1 |
| Ընդհանուր գումարի վոր տոկոսն է . . | 34,3       | 36,5     | 35,1     | 36,0     | 34,8     |

Անտառ. ձկնորսութ.

|                                    |          |          |          |          |          |
|------------------------------------|----------|----------|----------|----------|----------|
| վորտորդութ. . .                    | 648,8    | 272,4    | 319,0    | 465,1    | 526,5    |
| Ընդհանուր գումարի վոր տոկոսն է . . | 1,4      | 1,0      | 1,0      | 1,4      | 1,3      |
| Ընդհանուր գումար                   | 44.959,2 | 27.060,2 | 30.986,9 | 33.424,1 | 39.097,8 |
| Ընդհ. գում. տոկոս                  | 100      | 100      | 100      | 100      | 100      |

Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքն արտահայտվում է 44.959 հազ. ու: Այստեղ հիմնականը հողագործությունն է, վորին ընկնում է 28.888 հազ., այսինքն՝ 64,3 տոկոս: Կենդանաբուծության արտադրանքի արժեքը 15.422 հազար է, վոր ամբողջ արժեքի 34,3% է կազմում: Մնացածը՝ 649 հազ. ու. ընկնում է անտառապահությանը, վորտորդությանը յեվ ձկնորսությանը, վոր ամբողջի 1,4 տոկոսն է:

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, վոր գյուղատնտեսության այս յերկու հիմնական ճյուղերի փոխհարաբերության մեջ տվյալ ժամանակաշրջանում մեծ տատանումներ չկան: Վերջին՝ 1926/27 թ. այդ փոխհարաբերությունը շատ մոտ է նախապատերազմյանին—63,9 տոկոսն ընկնում է հողագործությանը, 34,8 տոկոսը՝ կենդանաբուծությանը:

1909—13 թ. բնակչության ամեն մի հոգուն ընկնում էր իր գյուղատնտ. արտադրության 46 ու. 34 կ.: Աղքատացման հետեվանքով 1923/24 թ. այդ գումարն իջնում է 32 ու. 55 կ.:

Մեր տնտեսության վերականգնման համընթաց հետզհետե բարձրանում է գյուղատնտեսության արտադրանքը: 1925/26 թ. գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքից մի հոգուն ընկնում էր 37,85 ու., 1926/27 թ.՝ 42,96 ու.: Համեմատելով մեր տվյալները միութենական տվյալների հետ (Միություն մեջ գյուղատնտ. ընդհ. արտադր. մարդագլուխ ընկնում է՝ 91,81 ու.)՝ կտեսնենք, վոր մեզանում մի հոգուն 2 անգամ ավելի պակաս է ընկնում, քան Միության մեջ: Այս հարաբերությունը թեթեւ տատանումներով մինչեւ հիմա էլ պահպանվում է:

1903—13 թ. 23/24 թ. 24/25 թ. 25/26 թ. 26/27 թ.

| Գյուղատնտ. արտ.                    | Միություն մեջ |       |       |        |        |
|------------------------------------|---------------|-------|-------|--------|--------|
| նախապատ. միլ. ոբ.                  | 12.826        | 8.858 | 9.535 | 11.306 | 11.902 |
| Մի հոգուն ընկնում է նախապատ. ոբ. . | 91,8          | 65,71 | 69,04 | 79,95  | 82,12  |
| Հայնաստանում                       |               |       |       |        |        |

| Գյուղատնտ. արտադր.              |          |          |          |        |          |
|---------------------------------|----------|----------|----------|--------|----------|
| նախ. հազար ոբլ. .               | 44.959,2 | 27.060,2 | 30.986,9 | 33.424 | 39.097,8 |
| Մի հոգուն ընկն. է նախապ. ոբլ. . | 46,34    | 32,55    | 36,41    | 37,85  | 42,96    |
| Շնչաբաժին % առ                  |          |          |          |        |          |
| ԽՍՀՄ-ի շնչաբաժինն               | 50,47    | 49,53    | 52,73    | 47,34  | 52,26    |

Ահա Հայաստանի գյուղատնտեսության վիճակը հաշվետու ժամանակաշրջանում:

Փորձենք գյուղատնտեսությունը բնորոշել նրա ապրանքայնության տեսակետից:



**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒ-** Մեր գյուղատնտեսության ապրանքայնության  
**ԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅ-** հարցը ամենից անմշակ յեվ թույլ լուսարանված  
**ՆՈՒԹՅՈՒՆԸ** հարցերից մեկն է: Մենք չունենք բիշ թե շատ հա-  
 վաստի վիճակագրական նյութեր նախապատերազմյան շրջանի մասին:

Նույնը պետք է ասել նայել ժամանակակից նյութերի մասին, վո-  
 ռոնք դեռ կարոտ են մշակման յեվ խիստ քննադատական գնահատման  
 կարիք ունեն: Ուստի մեր դիտողությունների մեջ մենք հենվում ենք կո-  
 պիտ տվյալների վրա, վորոնք հետագայում յենլիակա յեն ճշտման յեվ  
 խորացման:

Բնութագրելով մեր գյուղատնտեսությունը նրա ապրանքայնու-  
 թյան տեսակետից, պետք է նշենք, վոր, չնայած մեր յետամնացու-  
 թյանը Միության համեմատությամբ, չնայած մեր գյուղատնտեսության  
 եքստենսիվությանը, մենք այնուամենայնիվ, բարձր ապրանքայնության  
 յերկիր ենք:

Այդ, Հայաստանի եկոնոմիկայի պարադոքսներից մեկն է:

Քննության առնենք գյուղատնտեսության առանձին ճյուղերը:

Հողագործության մեջ ապրանքայնության բարձր տոկոս են տալիս  
 բամբակը, խաղողը յեվ ծխախոտը: Բամբակի ապրանքայնության տոկոսը  
 97 է: Այս թիվն անվիճելի յե յեվ բոլորովին համապատասխանում է Մի-  
 ության այլ բամբակագործական շրջանների ապրանքայնության վերաբե-  
 րող տվյալներին:

Խաղողի ապրանքայնության տոկոսը տատանվում է 70-ի յեվ 80-ի  
 միջև:

Ծխախոտի ապրանքայնությունը տարեց տարի աճում է յեվ 26/27  
 թվականին հասնում 70 տոկոսի: Այդ լիովին համապատասխանում է այն  
 պրոցեսներին, վոր ծավալվում են մեր ծխախոտաբուծության մեջ (ան-  
 ցումն ղուլլասարից դեպի ծխախոտի բարձրորակ շուկայական տեսակ-  
 ները):

Հացահատիկներից ապրանքայնության բավական բարձր տոկոս է  
 տալիս գարին (7 տոկոսից մինչև 10 տոկ.): Ցորենն ունի 4% ապրանքայ-  
 նություն: Այդ կարող է տարբերակ թվալ, վորովհետև Հայաստանն  
 սպառող յերկիր է յեվ տարեկան 1 յեվ կեսից մինչև 2 յեվ կես միլիոն  
 փութ հաց է ներմուծում, սակայն, ինչպես ասել ենք, Հայաստանը  
 գյուղատնտեսական տեսակետից միանման չէ, — սպառող շրջանների հետ  
 կան նայել հացառատ շրջաններ:

Հողագործության մյուս արտադրանքները չենք բերի՝ նրանց ցած  
 տեսակարար կշիռն ի նկատի առնելով: Բերած մշակույթների ազդեցու-  
 թյունը բավականին նշանակալից է:

Բիշ ավելի բարդ է կենդանաբուծության ապրանքայնության վորո-  
 շումը: Այստեղ մանրամասն տվյալներ չենք բերի, վորպեսզի ընթերցողի  
 ուշադրությունը չձանրաբեռնենք թվերով, վորոնց ճշտությունը դեռ  
 պետք է ստուգել: Միայն կասենք, վոր անասնապահությունը բարձր ապ-  
 րանքայնություն է ցուցաբերում:

Նկատի առնելով, վոր այժմ ամբողջ բաղադրականությունը հիմնված  
 է գյուղատնտեսության ապրանքայնացման ուժեղացման վրա՝ բարձրար-  
 ժեք մշակույթներին (վորոնք միաժամանակ յեվ ամենից ապրանքային են)  
 զարկ տալու ուղղությամբ, պետք է կարծել, վոր՝ յեթե վոչ 1928 թվին,

ապա 1929 թվին, մեր տնտեսության ապրանքայնությունը կանցնի նա-  
 խապատերազմյան մակարդակից, դժբախտաբար, մեր մթերման որգան-  
 ների տվյալները, վորոնցով կարելի կը լինի մեր յենթադրությունն ապա-  
 ցուցել, պատկեր չեն տալիս: Այնուամենայնիվ, քննության առնենք վեր-  
 ջին յերկու տարում կատարված մթերումների տվյալները:

Այստեղ մենք տեսնում ենք, վոր 1924/25 թ. մթերված է 7.411 հազ.  
 գումարի արտադրանք: Հետեվյալ տարում՝ 7.963 հազար. համարյա կեսը  
 բամբակին է ընկնում (ըստ արժեքի), մոտ մի քառորդը խաղողի, գինու  
 յեվ ողու: Բավական աչքի յե ընկնում կենդանաբուծության արտա-  
 դրանքների մթերումը՝ կաշի, միս, բուրդ յեվ այլն: Աղյուսակն ընդհանրա-  
 պես ընորոշում է մեր մթերող շուկան ապրանքների տեսակների կողմից,  
 սակայն բնավ նյութ չի տալիս պարզելու, թե վորքան ապրանք են ընդ-  
 գրվում մթերումները, յեվ ամբողջ արտադրանքի ապրանքային մասի վոր  
 տոկոսն են կազմում: Այդ հնարավորություն չի տալիս վորոշելու մաս-  
 նավոր առեւտրականի դերը մթերման ասպարիզում:

**ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԿՈՈՊԵ-** Գյուղկոոպերացիան սկսում է Հայաստանի գյու-  
**ՐԱՑԻԱՆ ՈՒ ԳՅՈՒ-** ղատնտեսական կյանքում նկատելի դեր խաղալ:

**ՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ** Վերջին տարիներին ընթացքում գյուղագաղաղություն  
**ՎԱՐԿԸ** կոոպերացման գործում Հայաստանը բավական զգալի  
 հաջողություններ է ունեցել: Ահա մի քանի տվյալներ գյուղատնտեսական  
 կոոպերացիայի կարեւորագույն տեսակների աճման մասին:

Գյուղատնտեսական ընկերությունների աճումը

24 թ. 1 հոկտ. 25 թ. 1 հոկտ. 26 թ. 1 հոկտ.

|                         |    |    |    |
|-------------------------|----|----|----|
| Գյուղատնտես. վարկ. ընկ. | 16 | 30 | 36 |
| Գյուղատնտես. խառն ընկ.  | 8  | 15 | 12 |
| Այգեգործական ընկ.       | 8  | 9  | 12 |
| Ծխախոտագործակ. ընկ.     | 1  | 2  | 5  |
| Բամբակագործակ. ընկ.     | —  | —  | 12 |
| Մեղվաբուծական ընկ.      | 9  | 16 | 18 |
| Կաթնարտերներ            | 33 | 71 | 72 |

24 թ. հոկտեմբերի 1-ին կոոպ. կազմակերպությունների բոլոր տե-  
 սակների թիվը 766, 25 թ. հոկտեմբերին 147, 26 թ. հոկտեմբերի 1-ին՝  
 205:

Զարգացման ընթացքի վորոշ դանդաղությունը վերջին տարում կո-  
 ոպերատիվ շինարարության թուլացման հետեւանքը չէ, այլ կատարվում  
 է գիտակցաբար, վորովհետև այժմ մեզանում, ինչպես յեվ ամբողջ Միու-  
 թյան մեջ իշխող կուրսը յեղած ցանցի ամրացումն է հետապնդում: Կո-  
 ոպերատիվ տնտեսությունների թվի աճումը, ընկերությունների շրջանա-  
 ռության ընդարձակումը պարզ ապացույց են այդ կուրսի ճշտության:

|                  |           |                           |
|------------------|-----------|---------------------------|
| 24 թ. 1 հոկտեմբ. | կար 9,179 | կոոպերացված տնտեսություն. |
| 25 »             | » 19,153  | »                         |
| 26 »             | » 30,075  | »                         |



Ըստ բանակի առաջին տեղը բռնում են, ինչպես յերեվում ե նախորդ աղյուսակից, կաթնարտեղները, այնուհետեւ գալիս են վարկային ընկերութիւնները, վերջերս առանձին թափով զարգացող մեքենադատագործման, մեղվաբուծական, բամբակագործական, ծխախոտային ընկ. յեւ այլն:

Առանձին տեսակների աճումը ավելի բան համապատասխան ե մեր տնտեսութեան ճշմարիտ կարիքներին: Գյուղատնտեսական վոչ միայն բանակապես ե աճում, այլ յեւ վորակապես ամրապնդվում ե: Հայգյուղկոտայի ամբողջ միութեան յեւ առանձին ընկերութիւնների շրջանառութիւնը տարեց տարի, յեւամայակից յեւամայակ աճում ե: Գյուղատնտեսական կոտայերացիայի ֆինանսական դրութիւնն ամրանում ե:

Հայգյուղկոտայի յեւ գյուղատնտ. կոտայերացիայի սկզբնական ցանցի ֆինանսական դրութիւնը հետեւյալ պատկերն ե ներկայացնում (հազ. ուրբ.):

Առ 1/X 1925 թ. Առ 1/X 1926 թ. 1/X 1926 թ. %  
առ 1/X 1925 թ.

| Հայգյուղկոտայի   |         |         |     |
|------------------|---------|---------|-----|
| Սեփական միջոցներ | 73,6    | 299,5   | 407 |
| Փոխառիկ միջոցներ | 656,2   | 1.574,5 | 240 |
| Ընդամենը . .     | 729,8   | 1.874,0 | 257 |
| Սկզբնական ցանցի  |         |         |     |
| Սեփական միջոցներ | 230,1   | 376,5   | 164 |
| Փոխառիկ միջոցներ | 1.263,3 | 2.663,7 | 211 |
| Ընդամենը . .     | 1.493,4 | 3.040,2 | 204 |

Այստեղ մենք տեսնում ենք գյուղատնտեսական դրամական միջոցների արտասովոր աճում, վորն հատկապես աչքի յե ընկնում Հայգյուղկոտայի նկատմամբ:

Գրեթե նույնը նկատվում ե նայելով ընկերութիւնների առանձին տեսակների վերաբերմամբ: Որինակ՝ գյուղատնտ. վարկային ընկերութիւնները առ 1-ն հոկտեմբերի 1924 թ. 281 հազ. ուրբ. սեփական յեւ այլ միջոցներ ունեյին, առ 1-ն հոկտ. 1925 թ. 1.266 հազ. ուրբ. իսկ առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. արդեն 2,304 հազ. ուրբ.: Մինչդեռ այդ ժամանակամիջոցում վարկային ընկերութիւններն աճեցին յերկու անգամից մի քիչ ավելի (16-36): Միջոցների աճմանն ուղեկցում ե ապրանքաշրջանառութեան աճումը: Ըստ Հայգյուղկոտայի տվյալների նրա առեւտրական շրջանառութիւնը 1924/25 թ. 258 հազ. ուրբի ե յեղել, իսկ 1925/26 թ. 1,363 հազ. ուրբ.: Նույնն ե նայելով առանձին տեսակների նկատմամբ:

Գյուղվարկային յեւ այգեգործ. ընկ. ապր. շրջանառութիւնը.  
(հազ. ուրբ.)

|                    | 1924/25 |       | 1925/26 |         |
|--------------------|---------|-------|---------|---------|
|                    | Մուտք   | Յելք  | Մուտք   | Յելք    |
| Գյուղվարկային ընկ. | 1.085,8 | 882,9 | 1.896,0 | 1.866,7 |
| Այգեգործական ընկ.  | 99,0    | 96,5  | 195,7   | 191,0   |

Գյուղատնտեսական կոտայերացիայի աճումը հետագայում, անտարակույս, մեծ խթան պիտի հանդիսանա մեր գյուղատնտեսութեան մեջ ապրանքային մշակույթների ընդարձակման:

Սրանով վերջացնելով գյուղատնտեսութեան ընդհանուր տեսութիւնը, ամբողջական պատկեր տալու համար մի բանի տեղեկութիւններ տանք գյուղատնտեսութեան վարկավորման աճման մասին վերջի յերկու տարում:

Գյուղատնտ. վարկավորումը հետեւյալ պատկերն ե տալիս

|                   | 24/25 թ. | 25/26 թ. |
|-------------------|----------|----------|
| I յեւամայակ . . . | 680      | 2,135    |
| II » . . .        | 730      | 2,332    |
| III » . . .       | 1,247    | 2,717    |
| IV » . . .        | 1,759    | 3,216    |

Տեսնում ենք, վոր գյուղատնտեսութեան վարկավորումը անշեղ աճում ե, այն ել՝ աճում ե վոչ միայն քաղաքային, այլ նայել հարաբերաբար: Յերկրի ունեցած միջոցներից քանի գնում, այնքան ավելի մեծ չափերով գյուղատնտեսութեանն ե հատկացվում: 1924/25 թ. գյուղատնտեսութեանը հատկացված վարկերը մուրհակների գեղջի յեւ փոխառվական բոլոր գործառնութիւնների 22 տոկոսն եյին, իսկ 25/26 թ. այդ տոկոսը բարձրանում ե 32-ի:

Այսպիսով, տնտեսական բաղաբականութեան բոլոր միջոցները ուղղված են գյուղատնտեսութեան բարձրացման, նրա վերականգնման յեւ նոր ավելի ռացիոնալ սկզբունքներով գյուղի տնտեսութիւնը վերակառուցելու վրա:



# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 1924/25 ԹՎԱԿԱՆԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒՄ Հայաստանը գյուղատնտեսական յերկիր է, չնաթՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՅԱԾ յաժ այն հանգամանքին, վոր, մի կողմից մեր ՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆ սակավահողության պայմաններում գյուղատնտեսությունը չի կարողանում կլանել բանվորական ույժի պահեստը, իսկ մյուս կողմից, մեր յերկիրը արդյունաբերական զանազան ճյուղերի զարգացման համար տվյալներ ունենալով, արդյունաբերական արտադրության ձեռնտու ասպարեզ պիտի հանդիսանար:

Մինչդեռ հայտնի յե, մինչեւ համաշխարային պատերազմը, ուրեմն առավել յեվս նրա ընթացքում, Հայաստանի արդյունաբերական պոտենցյալ հնարավորությունները վոչ միայն չեն ոգտագործվել հնարավոր չափով ու նպատակահարմար ձեւով, այլ նույնիսկ խնամքով չեն ուսումնասիրվել:

Ի՞նչ եր ներկայացնում ցենզային արդյունաբերությունն 1913 թվականին Հայաստանի Մ.Խ.Հ. ներկա սահմաններում:

Ահա նրա սխեմատիկ պատկերն ըստ ընդհանուր արտադրանքի արժեքի (հազ. ռբ.) յեվ բանվորների թվի:

|                      | Բացարձակ քվե    |                          | սուկոս առ գումար |                |
|----------------------|-----------------|--------------------------|------------------|----------------|
|                      | Բանվորների թիվը | Արտադրանքի արժեքը հազ.ռ. | Բանվ. թիվը       | Արտադր. արժեքը |
| Պղնձի արդյունաբեր.   | 4.400           | 3.421.0                  | 84,4             | 34,2           |
| Գինու-սպիրտի-կոնյակի | 175             | 1.745.1                  | 3,4              | 17,5           |
| Բամբակազտման         | 200             | 3,247,5                  | 3,8              | 32,5           |
| Պանրագործարաններ     | 60              | 500,0                    | 1,2              | 5,0            |
| Կաշվի մշակման        | 100             | 400,0                    | 1,9              | 4,0            |
| Մնացած արտադրություն | 281             | 684,9                    | 5,3              | 6,8            |
| Ընդամենը             | 5,216           | 9,998,5                  | 100              | 100            |

Պետք է նկատի ունենալ, վոր լրիվ պատկեր ստանալու համար այստեղ հաշվի յեն առնված նայեւ այնպիսի ձեռնարկություններ, վորոնք չեն բավարարում ցենզին, այլ միայն յերկրի համար վորոշ նշանակություն ունին \*) (պանրագործարաններ, դինգեր, ոճառի գործարան, փայտասղոցարաններ, բամբակազտիչ գործարանների ճնշող մեծամասնությունը յեվ այլն):

\*) Ինչպես այստեղ ե հետագայում, այնպես ել աղյուսակներում, «ցենզային» արդյունաբերությունը նկատի ունենք այս առումով:

Այսպիսով, նախապատերազմյան արդյունաբերության մեջ փաստորեն յեղել են յերեք աչքի ընկնող ճյուղեր, վորոնք ընդգրկել են արդյունաբերության մեջ զբաղված բանվորական ույժի 91,6%, տալով ընդհանուր արտադրանքի 84,2%: Դրանք են՝ պղնձի, բամբակազտման յեվ գինու-սպիրտի-կոնյակի արտադրությունները:

Ընդհանուր արտադրության մեջ գերակշռող տեղ բռնելով, նրանք կարեւոր են յեղել նայեւ այն իմաստով, վոր նշանակություն են ունեցել վոչ միայն տեղական, այլ առավելագուս արտաքին շուկայի համար:

Յերկրորդական նշանակություն են ունեցել կաշվի յեվ պանրի արտադրությունները, իսկ մնացած մանր արտադրությունների տեղն արտահայտվել ե բանվորների թվի 5,3% յեվ արտադրանքի արժեքի 6,8%:

Զիտսելով սրանց մասին, յեթե խորանանք առաջինների վորակական գնահատության մեջ, ապա կտեսնենք, վոր նրանց շարքում պատկառելի տեղ գրավող բամբակազտման արդյունաբերությունն այն ժամանակ, բացառությամբ մի բանի համեմատաբար խոշոր ձեռնարկությունների, կաշված ե յեղել բազմաթիւ փոքրիկ միավորներից՝ պրիմիտիւ սարքավորումով յեվ չնչին արտադրողականությամբ:

Հաշվի առնված գինու-կոնյակի 14 գործարանից միայն 4-5-ն եյին տեխնիքագես բավարար. նրանք այժմ մտել են «Արարատ» տրեստի մեջ:

Նույնպես փոքրիկ միավորներ եյին հանդիսանում պանրագործարանները՝ թվով 30 յեվ 2 կաշեգործարանը, վերջինները, ազգայնացվելուց հետո վերասարքավորվելով այժմ ոգտագործվում են ժողտնտխորհի կողմից:

Մնացած արտադրությունները սպասարկում եյին զուտ տեղական պահանջներին յեվ իրենց արտադրության ծավալով ու նշանակությամբ մեծ չեյին:

Հետեւապես, գինու-կոնյակի վերոհիշյալ մի բանի գործարանը, Ղաթարի յեվ Ալլահվեդու պղնձահանքերն ու 2 պղնձածուլարանն եյին, վոր իրենց տեխնիքական արտադրական մակարդակով կարող եյին համարվել արդյունաբերական ձեռնարկություններ: Այսպես ուրեմն, իսկական ցենզային արդյունաբերության արտադրանքը նախապատերազմյան շրջանում չի անցել 8,0 միլլ. ռուբլուց:

Հայաստանի արդյունաբերության ընական արտադրանքի մոտավոր պատկերը տալու համար ստորեւ բերվում են մի քանի տվյալներ արդյունաբերական գլխավոր ապրանքների նախապատերազմյան միջին արտադրության չափերի վերաբերյալ:

|                     |       |             |
|---------------------|-------|-------------|
| Կարմիր պղինձ        | 342,1 | հազար փուլթ |
| Կոնյակի սպիրտ       | 4,810 | » աստիճ.    |
| Ռեկտիֆիկացիոն սպիրտ | 3,881 | » »         |
| Ողի                 | 352   | » »         |
| Գինի                | 155,2 | » դույլ     |
| Զտած բամբակ         | 239,4 | » փուլթ     |
| Մանր կաշի           | 160   | » հատ       |

Այսպիսով, նախապատերազմյան կապիտալը մեզանում չի ստեղծել արդյունաբերական հիմնական ֆոնդեր:



**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՆԿՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՐԱ-  
ԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋԻՆ  
ՓՈԽԼԸ**

Նման կառուցվածք ունեցող արդյունաբե-  
րության համար բնական է, վոր պղնձի արդյու-  
նաբերության փլուզումը յեւ գյուղատնտեսու-  
թյան անկումը հակառակ դեր պիտի  
կատարեին:

Բամբակազտման, ինչպես յեւ պղնձի արտադրության բացարձակ դա-  
դարումով դաշնակցականների որոք ցենզային արդյունաբերությունն արդեն  
կորցրեց նախապատերազմյան արտադրանքի 66,7 տոկոսը: Կաշվի յեւ պան-  
րի արդյունաբերությունը հասավ աննշան մինիմումի, իսկ գինու—կոնյակ-  
կի արտադրության 1—2 գործող ձեռնարկությունները շարունակում էին  
իրենց խղճուկ գոյությունը փաստորեն անցյալի մնացորդներով: Խորհրդ-  
դայնացման նախորդակին Հայաստանի արդյունաբերական արտադրու-  
թյունն իջավ մինչեւ նախապատերազմյան մակարդակի 9—10 տոկոսը:  
Նմանորինակ անկում տեղի չի ունեցել Միության Հանրապետություննե-  
րից թերեւս յեւ վոչ մեկում:

Խորհրդային իշխանությունը սկզբնական շրջանում տնտեսական շի-  
նարարության ասպարիզում, առաջին հերթին, պետք է զբաղվեր գյուղա-  
տնտեսությունը վերականգնելու խնդիրներով:

Հասկանալի չէ վոր, արդյունաբերության վերականգնման սկզբնա-  
կան փուլն առաջին հերթին ընդգրկում է վերականգնող գյուղատնտե-  
սության հետ անմիջական առնչություն ունեցող, այսինքն գյուղատնտե-  
սական նյութեր վերամշակող, արտադրությունները, վորոնք սկսում են  
վերականգնել 1923 թվականից:

Հետեւյալ թվերը բնորոշում են արդյունաբերության կացությունը  
1923/24 թվին.

|                          | Բացարձակ քվեր |                   | Տոկոսներ առ 1913 թ. |                   |
|--------------------------|---------------|-------------------|---------------------|-------------------|
|                          | Բանվ.<br>թիվը | Արտադր.<br>արժեքը | Բանվ.<br>թիվը       | Արտադր.<br>արժեքը |
| Պղնձի արդյունաբերություն | 145           | 65,6              | 3,3                 | 2,0               |
| Գինու—սպիրտի—կոնյակի     | 54            | 456,1             | 30,9                | 26,1              |
| Բամբակազտման             | 52            | 751,0             | 26,0                | 23,1              |
| Պանրագործարաններ         | 60            | 390,5             | 100                 | 78,1              |
| Կաշվի մշակման            | 104           | 188,7             | 104                 | 47,2              |
| Մնացած արտադրութ.        | 350           | 555,8             | 125                 | 81,2              |
| Ընդամենը՝                | 765           | 2,407,7           | 14,7                | 24,1              |

Այս թվերը բնորոշում են արդյունաբերության վերականգնման պը-  
րոցեսի սկզբնական փուլը:

Դեռ յեւս նախախորհրդային շրջանում կատարելապես բայրալված  
բամբակազտման արդյունաբերությունը 1923/24 թվականին վերըստին  
սկսում է իր աշխատանքը, քանի վոր նրան սնող բամբակագործությու-  
նը նույնպես հենց այդ 1923 թվականից է իրապես սկսում իր վերելքը:  
Ճիշտ է, առաջին բամբակացանքսը սահմանափակ տարածությամբ կա-  
տարվեց դեռ 1922 թվին, սակայն ստացված հում նյութի քանակը հա-  
մեմատաբար չնչին էր:

1923/24 թվի արդյունաբերության վերականգնման ընդհանուր ցու-  
ցիչին (24,1 տոկոս) զրեթե զուգահեռում են գինու—սպիրտի յեւ բամ-

բակազտման արդյունաբերության ցուցիչները, վորոնք, չնայած սկսած  
առաջին թաց ընդհանուր շարժմանն արտադրում են տեխնիքական—ար-  
դյունաբերական մշակությունների, հատկապես բամբակագործության յեւ խա-  
ղողաբուծության ծանր կացությունը:

Հիշյալ ցուցիչների զուգահեռման պատճառով այդ յերկու ճյուղերի  
տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ համեմատն է նախա-  
պատերազմյանին, այն է՝ առաջինի համար ունենք 19,9 տոկոս, իսկ յեր-  
կորդի՝ 31,2 տոկոս: Խաղողի սակավ բերքի պատճառով 1923/24 թվին  
արտադրվել է 1,108 հազար աստիճան ռեկտիֆիկացիոն սպիրտ, 18,3 հա-  
զար աստիճան ողի, 79,7 հազար դույլ գինի յեւ 10,1 հազար դույլ դո-  
շաք, իսկ կոնյակ բուրդովին չի արտադրվել:

Նախկին մանր-մուկ բամբակազտիչ գործարաններին խորհրդայնա-  
ցումից հետո փոխարինել է Գռախտի Յերեվանի նորակառույց № 2 գոր-  
ծարանը՝ կատարելագործված սարքավորումով վորի հետ աշխատել է  
ազգայնացված յեւ վերասարքավորված № 1 գործարանը (նախկին Քյա-  
զումովի) նույնպես Յերեվանում: Այդ տարում ստացվել է 54,9 հազար  
փութ զտած բամբակ:

1923/24 թվին պղնձի արդյունաբերությունը գտնվում էր տակավին  
անկման վիճակում: Ղաթարի պղնձահանքերն ու պղնձածուլարանը չեն  
աշխատել: Ալլահվերդու խումբը գտնվում էր գրեթե կոնսերվացիայի վի-  
ճակում յեւ ուներ չնչին արտադրություն: Պղնձի արդյունաբերության  
արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ նախա-  
պատերազմյան 34,2 տոկոսից ընկել էր մինչեւ 2,7 տոկոս: Բուն պղնձի  
արտադրությունը, վորով միայն զբաղվում էին այդ ձեռնարկություն-  
ները պատերազմից առաջ, կազմում էր նախապատերազմյան արտադրու-  
թյան միայն 0,6 տոկոսը, կամ բացարձակ թվերով՝ 2,2 հազար փութ  
կարմիր պղինձ 22,0 հազար ուրբուլ արժողությամբ—նախապատերազմ-  
յան զներով:

Մնացած 43,6 հազար նախապատերազմյան ուրբուլ արտադրանքն  
ստացվել են կարբիդի, պղնձի հրաքարի յեւ պղնձի արջասպի արտադրու-  
թյունից: Այդ տարի պղնձի նոր հանածո չի ստացվել, յեւ ոգտագործվել  
են հանածոյի հին մնացորդները: Կաշվի գործարանները յեւ վորոշ չափով  
պանրագործարանները համեմատաբար ավելի լավ դրության մեջ են յեղել:

Ինչ վերաբերում է մնացած արտադրություններին, ապա նրանք ա-  
վելի բիչ են յենթարկվել մեզ հայտնի բայրալից գործոններին յեւ մինչ  
այդ վորոշ չափով վերականգնված են յեղել: Այդ հասկանալի կը դառնա,  
յեթե մենք նկատի ունենանք հետեւյալ հանգամանքները:

Նրանք մեծ մասամբ այնպիսի արտադրություններ են, վորոնք ըս-  
պասարկում են բնակչության անմիջական կարիքներին՝ (դինգեր, զարե-  
քրի, ռճառի գործարաններ, ելեկտրակայաններ յեւ այլն): Կարելի է  
նշել, վոր 1923/24 թվին պոլիգրաֆային արտադրությունը նախապա-  
տերազմյանի համեմատությամբ յեւ ապառկվել էր, իսկ ելեկտրաներգի-  
այի արտադրությունը կազմում էր նախապատերազմյանի 135 տոկոսն,  
այսինքն անցել էր նրանից 35 տոկոսով: Դա իր հերթին բացատրվում է  
նրանով, վոր նոր ստեղծված մամուլը, կուլտուրան (դասագրքեր, զրա-  
կանություն), զարկ տվին տպագրական գործին, իսկ ամող բաղադրներն էլ  
ելեկտրամատակարարման ուժեղացման կարիք էին զգում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի արդյունաբերությունը Խորհրդա-



յին Միության յեվ մյուս հանրապետութիւնների բաղադրամասը իր վերականգնման պրոցեսին սկսել է թե ավելի ուշ, յեվ թե ավելի ցած մակարդակից: Այսպես, 1923—24 թվին Խորհրդային Միության ցենզային արդյունաբերութիւն ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյանի 46,7 տոկոսը, Ուկրաինայինը 32 տոկոսը, մինչդեռ Հայաստանի ցենզային արդյունաբերութիւնն այդ ցուցիչն, ինչպես տեսանք, հասնում էր միայն 24,1 տոկոսի: Սա, իհարկե, հետեւեալն է մեր արդյունաբերութիւնն ուրույն կառուցվածքի, վորի մասին ասել ենք, յեվ այն ավելի հանգամանքների, վորոնք ավելի բազմաթիւ յեվ ուժեղ լինելով, բան Խորհրդային Միության վորյեվե այլ վայրում, կործանարար թափով հարվածել են մեր արդյունաբերութիւնը:

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1924/25 ՅԵՎ 1925/26 Թ. Թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՑՈՒՆ 1924/25 թվից արդյունաբերութիւնը թեւա-  
թՅՈՒՆ կոխում է վերականգնման հաստատուն շրջանը: Այդ յեվ հետեւյալ 1925/26 թվին անցնում են բուն վերելքի նշանի տակ: Հիշյալ ժամանակաշրջանում վերականգնման պրոցեսին ընդգրկում է նա-  
յեվ պղնձի արդյունաբերութիւնը: Միաժամանակ կազմակերպվում են մի քանի նոր արտադրութիւններ, ու զգալի աշխատանք է կատարվում գոյութիւն ունեցող ձեռնարկութիւններն ընդարձակելու յեվ վերասար-  
քավորելու ուղղութիւնը: Ձեռնարկումներն արդյունաբերական շինարա-  
րութիւնն ասպարիզում ստանում են ավելի կազմակերպված ու նպատա-  
կադրված բնույթ:

Նախ բերենք արդյունաբերութիւնն վերաբերյալ հիմնական տվյալները\*):

| Արդյուն.<br>նյութեր  | Բանվոր. միջին |        | Ընդ. արտադր.  |         | արժեքը (հազ. ո.) |          |
|----------------------|---------------|--------|---------------|---------|------------------|----------|
|                      | թիվը          |        | նախապ. գներով |         | ժաման. գներով    |          |
|                      | 24/25         | 25/26. | 24/25         | 25/26   | 24/25            | 25/26    |
| Պղնձի արդյունաբեր.   | 792           | 2.082  | 449,4         | 583,9   | 717,3            | 1.101,0  |
| Գինու-սպիրտի-կոնյակի | 101           | 114    | 965,6         | 789,3   | 1.839,9          | 1.962,5  |
| Բամբակազտման         | 81            | 59     | 2.645,0       | 3.325,1 | 3.980,5          | 4.427,8  |
| Պանրագործարաններ     | 162           | 180    | 541,6         | 558,8   | 849,0            | 1.192,7  |
| Կաշվի մշակման        | 108           | 96     | 264,6         | 396,0   | 455,2            | 782,0    |
| Մնացած արտադրութ.    | 594           | 1.272  | 1.076,0       | 1.771,3 | 1.973,6          | 3.439,4  |
| Ընդամենը             | 1.838         | 3.803  | 5.942,2       | 7.324,4 | 9.815,5          | 12.905,4 |

Յեթե համեմատենք վերը բերած թվերը 1913 թ. տվյալների հետ, ապա կստանանք հետեւյալ տոկոսային հարաբերութիւնը (տոկոսներ առ 1913 թ.):

\*) Հետագա կրճատումները՝ «նախապատերազմյան գներով» և «ժամանակ. գներով» համապատասխան իմաստով պետք է հասկանալ «նախապատերազմյան գներով» նախապա-  
տերազմյան ուղղվածքով» և «ժամանակակից գներով» չեղված ուղղվածքով:

|                      | Բանվ. միջին թիվը |         | Ընդհան. արտադր. նախապ. գներ. |         |
|----------------------|------------------|---------|------------------------------|---------|
|                      | 1924/25          | 1925/26 | 1924/25                      | 1925/26 |
| Պղնձի արդյունաբեր.   | 18,0             | 47,3    | 13,1                         | 17,1    |
| Գինու-սպիրտի-կոնյակի | 57,7             | 65,1    | 55,3                         | 45,2    |
| Բամբակազտման         | 40,5             | 29,5    | 81,5                         | 102     |
| Պանրագործարաններ     | 270              | 300     | 108,3                        | 111,8   |
| Կաշվի մշակման        | 108              | 96,0    | 66,2                         | 99,0    |
| Մնացած արտադրութ.    | 211              | 453     | 157                          | 259     |
| Ընդամենը             | 35,2             | 72,9    | 59,4                         | 73,3    |

Հետեւելով այս թվերին, մենք անմիջապես նկատում ենք, վոր նա-  
խապատերազմյան մակարդակից շատ յետ են մնացել պղնձի յեվ գինու-  
սպիրտի-կոնյակի արդյունաբերութիւնը:

Առաջինն այն պատճառով, վոր ուշ է սկսել իր վերականգնումը յեվ  
պատերազմի ընթացքում բացառիկ քայքայիչ փոփոխութիւն է կրել,  
վորի հետեւանքները վերացնելու համար պահանջվում են խոշոր միջոցներ  
ու տեվողական ժամանակաշրջան: Պղնձի արդյունաբերութիւնն նախա-  
պատերազմյան արտադրանքի մակարդակին հասնելն անմիջական կախում  
ունի մի շարք նախադրյալներից, վորոնցից ամենակարեւորներն են՝ ա-  
վերված հանքերի վերականգնումը շահագործման համար, արտադրական  
յեվ ոժտնդակ կառուցվածքների հիմնական նորոգումը յեվ փչացած սար-  
քավորման լրացումը: Վերջին 2 տարվա մեջ վերականգնման աշխատանք-  
ներն ընթացել են գլխավորապես այդ ուղղութիւնը, ուստի բուն ար-  
տադրութիւնը չէր կարող այնպիսի եփփեկտիվ աճում ունենալ, վորպի-  
սին դիտվում է մյուս արտադրութիւնների մեջ:

Գինու-սպիրտի-կոնյակի արդյունաբերութիւնն յետ մնալու պատճառ-  
ները բոլորովին այլ են: Այստեղ, ընդհակառակը, գոյութիւն ունեցող  
ձեռնարկութիւնների արտադրական կարողութիւնն անհամեմատ ավելի  
մեծ է, քան այժմ, ոգտագործվում է, յեվ փաստացի արտադրութիւնն  
ցածր մակարդակը բացատրվում է միմիայն այգիների վատ դրութիւնը  
ու խաղողի ցած բերքով, վորը դեռ շատ հեռու չեն նախապատերազմյանից:

Բամբակազտման արդյունաբերութիւնը շնորհիվ բամբակագործու-  
թիւնն լրիւ վերականգնման նույնպես հասել է նախապատերազմյան մա-  
կարդակին յեվ 2 տոկոսով անցել նրանից: Այստեղ յեվ պիտի ասել, վոր  
գործարանների այժմյան արտադրական կարողութիւնն ավելի գերազանց  
է, սակայն փաստացի արտադրութիւնն արտահայտվում է միայն բամ-  
բակի բերքով:

Պանրագործութիւնն իր չափերով անց է նախապատերազմյանից  
(11,8 տոկոսով): Այդ հավելումն ամբողջովին պիտի վերագրել նոր պան-  
րագործարաններին, վորոնք հիմնվել են Խորհրդայնացումից հետո:

Կաշվի արտադրութիւնը վերջացրել է իր վերականգնումը:

Ինչ վերաբերում է արդյունաբերութիւնն մնացած մասին, ապա  
այստեղ նկատվում է ավելի ինտենսիվ աճում, վորը տարբեր է զանա-  
զան նյութերի համար: Այս արտադրութիւններից փաստորեն նախապա-  
տերազմյան մակարդակից անցել են՝ ոճառի արտադրութիւնը 1924/25  
թվին 18 տոկոսով, վորը սակայն 1925/26 թ. նորից նվազում է յեվ կազ-  
մում նախապատերազմյան 94,4 տոկոս, պոլիգրաֆային արտադրութիւնն,  
միջապես տեսանք, նպաստավոր պայմանների շնորհիվ շարունակում է



ընդարձակվել յեվ 1925/26 թ. նախապատերազմյանի համեմատությամբ գրեթե տասնապատկվում է (957 տոկոս), իսկ ելեկտրաէներգիայի արտադրությունը յեռապատկվում է (286 տոկ.) նման անում է ցույց տալիս նաեւ փայտասղոցարանների արտադրանքը, վորը կազմում է նախապատերազմյանի 363 տոկոսը:

Բայց հավելումի մնացած մասը պետք է վերագրել նոր կազմակերպված արտադրություններին, վորպիսիք են՝ հացի մեծ փոքրը, ծխախոտի գործարանը, պեմզայի արդյունահանությունը, մանածագործարանը յեվ Լենինականի մեխանիզական գործարանը:

Ընդհանրապես, արդյունաբերության ժամանակակից զարգացումը չի սահմանափակվել վերականգնման պրոցեսով, այլ նրա մեջ մեծ դեր են խաղացել ստեղծագործական նոր տարրերը, վորոնք հեազհետեւ ավելի մեծ տեղ են զբաղում այդ զարգացման մեջ: Բայց ներկայումս ներդրված կապիտալների արտադրական եփֆեկտն անմիջապես չի կարող արտահայտվել, նա յերեւման կգա առաջիկա տարիների ընթացքում:

Ակնհայտ է, վոր նախապատերազմյան արդյունաբերության լրիվ վերականգնումը գրեթե բացառապես կախված է պղնձի յեվ գինու-սպիրտի-կոնյակի արդյունաբերության վերականգնումից:

Զբաղված բանվորական ույժի բանակի վերականգնման խնդրում բացառիկ նշանակություն ունի պղնձի արդյունաբերությունը, վորի մեջ 1913 թ. զբաղված էր արդյունաբերական բանվորների ընդհանուր թվի 84,4 տոկոսը, կամ 4.400 բանվոր. այդ թվի դիմաց 1925/26 թ. կար 2.082 բանվոր, այսինքն նախապատերազմյան թվի 47,3 տոկոսը: Արդյունաբերության մյուս ճյուղերը, համեմատաբար փոքրաթիվ բանվորական ույժ ունենալով, մեծ դեր չեն խաղում այս խնդրում:

Նախապատերազմյանի համեմատությամբ բանվորների թվի նվազում է նկատվում գինու-սպիրտի-կոնյակի արդյունաբերության մեջ՝ արտադրության կրճատման պատճառով յեվ բամբակազտիչ գործարաններում՝ արտադրության կենտրոնացման ու վերակառուցման հետեւանքով: Ընդհանրապես, բանվորների նկատելի անում են ցույց տալիս պանրագործարանները յեվ պոլիգրաֆիան արտադրությունը: Նոր արտադրությունների բանվորների մեծագույն մասն աշխատում է պեմզայի արդյունահանության մեջ յեվ մանածագործարանում:

Արդյունաբերության վերելքի դինամիկան բնորոշվում է հետեւյալ թվերով՝ (ընդհանուր արտադրանքի արժեքը տոկոսներով):

|                  | Տոկոս ըստ արտադր. նախապ. արժեքի |                  |                  | Տոկոս ըստ արտադ. ժամ. արժեքի |                  |                  |
|------------------|---------------------------------|------------------|------------------|------------------------------|------------------|------------------|
|                  | 1924/25                         | 1925/26          | 1925/26          | 1924/25                      | 1925/26          | 1925/26          |
|                  | տոկ. առ. 1923/24                | տոկ. առ. 1924/25 | տոկ. առ. 1923/24 | տոկ. առ. 1923/24             | տոկ. առ. 1924/25 | տոկ. առ. 1923/24 |
| Պղնձի            | 685                             | 130              | 889              | 448                          | 154              | 688              |
| Գինու-սպիրտի-կոն | 212                             | 81,7             | 173              | 225                          | 109              | 240              |
| Բամբակազտման     | 352                             | 126              | 443              | 289                          | 111              | 322              |
| Պանրագործարան.   | 138                             | 103              | 143              | 150                          | 141              | 211              |
| Կաշվի մշակման    | 140                             | 150              | 210              | 139                          | 172              | 240              |
| Մնացած արտադր.   | 193                             | 165              | 319              | 200                          | 174              | 348              |

Այս ցուցիչների մեջ գտել է իր արտահայտությունը վերականգնողական պրոցեսի այն որինաչափությունն, ըստ վորի ամենից շատ բայրաված ու իրենց վերելքն ուշ սկսող արդյունաբերությունն ճյուղերին ավելի յեռանդուն տեմպ են ցույց տալիս: Դա առաջին հերթին վերաբերվում է պղնձի արդյունաբերության, վորի արտադրանքը յերկու տարվա ընթացքում անել է 9,9 անգամ:

Բայց թյուրմեթոդության տեղի չտալու համար պետք է նկատել, վոր այս չափանիշը պայմանական է վորովհետեւ պղնձի արդյունաբերության համար 1923/24 թվականը վերականգնման սկզբնական բնորոշ մոմենտ ծառայել չի կարող. քանի վոր այդ ժամանակ պղնձի արդյունաբերությունն ըստ ելույթյան դեռ չեր սկսել վերականգնել: Դա նույնն է, ինչ վոր բամբակազտման համար 1922/23 թիվը:

Ըստ վերականգնման թափի յերկրորդ տեղը զբաղում է բամբակազտման գործն, (իսկ ըստ վերոհիշյալ արդարացի նկատողության, սրան պետք է հատկացնել առաջին տեղը), ապա գինու-սպիրտի-կոնյակի արդյունաբերությունը, վորի վայրեքը 1925/26 թվին զգալիորեն նվազեցնում է այդ թափը: Մյուս ճյուղերի դինամիկայի վրա կանգ չենք առնում, վորովհետեւ նախորդ հատվածում կատարված վերլուծումը բավարար չափով լուսաբանում է նրանց զարգացման տեմպը:

Համադրելով Հայաստանի արդյունաբերության դինամիկայի ընդհանուր ցուցիչները Խ. Ս. Հ. Մ. յեվ Ուկրաինայի նույն ցուցիչների հետ, կը ստանանք՝ (արդյունաբերության արտադրանքն ըստ նախապատերազմյան արժեքի՝ տոկոսներով):

|             | 1924/25          | 1925/26          | 1925/26          |
|-------------|------------------|------------------|------------------|
|             | տոկ. առ. 1923/24 | տոկ. առ. 1924/25 | տոկ. առ. 1923/24 |
| Խ. Ս. Հ. Մ. | 155              | 142              | 220              |
| Ու. Ս. Հ.   | 141              | 173              | 252              |
| Հ. Ս. Ս. Հ. | 247              | 123              | 304              |

1924-25 թիվը նախորդի նկատմամբ մեր արդյունաբերության զարգացումն ավելի ուժեղ թափ է ունեցել, բայց 1925/26 թվի մեր դինամիկ ցուցիչը բերված թվերի շարքում նվազագույնն է: Այնուամենայնիվ, 2 տարվա ընդհանուր ցուցիչներից Հայաստանինը վերջին հաշվով առավելագույնն է: Անհրաժեշտ է նկատել յեվ այն, վոր 1925-26 թվի անման նվազումը տեղի չէ ունեցել բացառիկ պայմանների հետեւանքով յեվ հետագայում, անշուշտ, այդ անումը կրկին պրոգրեսիվ է դառնալու:

Հասկանալի չէ, վոր Խորհրդային Հայաստանի արդյունաբերության կառուցվածքը հիմնովին փոխված պիտի լինի՝ մասամբ այն պատճառով, վոր վերականգնման պրոցեսը տարբեր ճյուղերի համար տարբեր ընթացք է ունեցել յեվ մասամբ էլ շնորհիվ այն հանգամանքի, վոր տեղի ունեցած նոր պրոցեսների հետեւանքով կատարվել է վորոշ վերախմբավորում:

Արդյունաբերության գլխավոր ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր արտադրանքի մեջ պատկերացվում է հետեւյալ աղյուսակով՝ (տոկոսներով):



Ըստ նախապատերազմյան արժեքի Ըստ ժամանակ. արժեքի

|                       | 1913 | 1924/25 | 1925/26 | 1924/25 | 1925/26 |
|-----------------------|------|---------|---------|---------|---------|
| Պղնձի արդյունաբ.      | 34,2 | 7,6     | 8,0     | 7,3     | 8,5     |
| Գինու-սպիրտի-կոնյակի  | 17,5 | 16,2    | 10,8    | 18,7    | 15,2    |
| Բամբակազտման          | 32,5 | 44,5    | 45,4    | 40,6    | 34,3    |
| Պանրագործարաններ      | 5,0  | 9,1     | 7,6     | 8,7     | 9,3     |
| Կաշվի մշակման         | 4,0  | 4,5     | 5,4     | 4,6     | 6,6     |
| Պղնձագրաֆային         | 0,5  | 4,8     | 5,9     | 4,5     | 6,0     |
| Ելեկտրաէներգիայի      | 0,4  | 1,5     | 1,7     | 2,0     | 1,9     |
| Մանածագործարան        | —    | 0,4     | 3,3     | 0,7     | 4,9     |
| Մնացած արտադրութ. 5,9 | —    | 11,4    | 11,9    | 12,9    | 11,4    |
| Ընդամենը՝             | 100  | 100     | 100     | 100     | 100     |

Այսպիսով, պղնձի արդյունաբերությունը չժայր աստիճանի հասնող բայրայման պատճառով կորցրել է իր գերակշռող տեղը: Ժիշտ է, նա նորից սկսում է տեղ նվաճել ու ձգտել նախկին դիրքին, բայց վերջին հաշվով դժվար թե վերականգնվի պղնձի արդյունաբերության նախապատերազմյան տեսակարար կշիռը, քանի վոր Հայաստանի վերածնվող արդյունաբերության մեջ ստեղծվել են նոր նյութեր՝ արտադրական նույնպիսի խոշոր ծավալով:

Գինու-սպիրտի-կոնյակի արտադրությունը խաղողի միջին բերքի դեպքում միայն պահպանում է իր տեսակարար կշիռը յեվ աճող արդյունաբերության ֆոնի վրա նա չի անցնի այդ մակարդակից: Բամբակազտման արդյունաբերությունը, շնորհիվ արագ վերելքի, արտասովոր կերպով բարձրացրել է իր տեսակարար կշիռը, բայց նախապես կարելի չէ ասել, վոր 1925/26 թվին գրաված դիրքը կլինի առավելագույնը: Հետագայում նա յեվս զիջելու չէ իր տեսակարար կշռի նշանավոր մասը նոր բարգավաճող արդյունաբերական նյութերին:

Նախապատերազմյան արդյունաբերության մյուս նյութերից պանրագործությունն ու կաշվի մշակումն են, վոր նկատելի աճումն են ցույց տվել ըստ տեսակարար կշռի, սակայն այդ յեվս ժամանակավոր յերեվույթ պիտի նկատել, քանի վոր նրանք յեվս մասամբ տեղի պիտի տան նոր արտադրությունների ծավալման շնորհիվ:

Մյուս կողմից, պղնձագրաֆային յեվ էլեկտրաէներգիայի նախապատերազմյան աննշան արտադրություններն այժմ նկատելի յեն դարձել իրենց տեսակարար կշռով: Ուշադրության արժանի յե հատկապես էլեկտրաէներգիայի արտադրությունը, վորն ապագայում, անշուշտ, ավելի նշանավոր տեղ է գրավելու:

Վորպես նմուշ նոր արտադրությունների, այստեղ առանձնացված է մանածագործարանը, բայց անհրաժեշտ է ասել, վոր 1924/25 յեվ 1925/26 թվերին դեռ գործարանը չի աշխատել յեվ բերված թիվը ներկայացնում է միայն դպրոց արհեստանոցի արտադրանքի արժեքը: Ինչպես մանածագործարանը, նույնպես յեվ մի քանի այլ նոր հիմնված ձեռնարկություններ իրենց արտադրանքով հանդես կգան միայն 1926/27 թվի ընդհանուր արտադրանքի մեջ, յեվ այն ժամանակ, իրոք, արդյունաբերության առանձին նյութերի արտադրանքի փոխհարաբերությունն ավելի ուժեղ կերպով կընդգծի այժմ կատարվող վերախմբավորումները:

1925/26 թվին նոր ձեռնարկությունների արտադրանքի տեսակարար կշիռն առանց բամբակազտիչ գործարանների հասել է 17%-ի (ըստ նախապատերազմյան արժեքի), յակ յեթե սրան ավելացնենք նայել բամբակազտիչ գործարանները, վորոնք ըստ էություն նոր ձեռնարկություններ են, թեյեվ ընդգրկում են նախապատերազմյան արտադրությունը, ապա կստանանք, վոր նոր ձեռնարկություններից ստացված արտադրանքը կազմել է ամբողջ արտադրանքի 62 տոկոսը:

Սա նշանակալից ցուցիչ է այն իմաստով, վոր մեր արդյունաբերության վերելքն իսկապես կատարվում է վոչ այնքան վերականգնման, վորքան վերակառուցման ու մանավանդ նոր շինարարության գծով:

Ինչ վերաբերում է ցենզային արդյունաբերության սոցիալական կառուցվածքին, պետք է նկատել, վոր մասնավոր տիրակալությունը մեզ նում բոլորովին բացակայում է: Ցենզային արդյունաբերության մեջ վորոշ մասնակցություն ունի միայն կոոպերացիան (պանրագործարաններ, պահածոների գործարան, հացի փուեր յիվ ոճառի գործարան):

Ըստ տիրակալության ձեվերի արդյունաբերության արտադրանքը բաշխվում է հետեվյալ կերպ. (հազար ուրլի):

|             | Ըստ նախապատ. արժեքի |         |         | Ըստ ժամանակ. արժեքի |         |          |
|-------------|---------------------|---------|---------|---------------------|---------|----------|
|             | 1923/24             | 1924/25 | 1925/26 | 1923/24             | 1924/25 | 1925/26  |
| Պետական     | 1,909,7             | 4,981,0 | 6,290,2 | 3,470,2             | 8,216,1 | 10,864,1 |
| % առ գումար | 79,3                | 83,8    | 85,9    | 81,9                | 83,7    | 84,2     |
| Կոոպերատիվ  | 498,0               | 961,2   | 1,034,2 | 766,2               | 1,599,4 | 2,041,3  |
| % առ գումար | 207                 | 16,2    | 14,1    | 18,1                | 16,3    | 15,8     |

Հասկանալի է, վոր կոոպերատիվ արդյունաբերությունը, իր զարգացման տեմպով յետ մնալով արագ թափով վերականգնվող ու ծավալվող պետական արդյունաբերությունից, հետզհետե կորցնում է իր տեսակարար կշիռը:

Ըստ ժողտնտիսորհի գերատեսչության՝ արդյունաբերության դինամիկան հետեվյալ պատկերն է ներկայացնում.

|                                        | 1923/24 | 1924/25 | 1925/26 |
|----------------------------------------|---------|---------|---------|
| <b>Մ.հագրագի արժեքը հազար հա-</b>      |         |         |         |
| <b>խապատերազմյան ուրլիներով</b>        | 893,2   | 2,014,0 | 2,437,6 |
| Նույնը % առ նախորդ տարի                | —       | 225     | 121     |
| Նույնը % առ ընդհանուր արտադր.          | 37,1    | 33,9    | 33,2    |
| <b>Մ.հագրուր. արժեքը ժաման. գներով</b> |         |         |         |
| <b>հազար չեվոն ուրլիներով</b>          | 1,701,5 | 3,598,2 | 5,233,0 |
| Նույնը % առ նախորդ տարի                | —       | 212     | 145     |
| Նույնը % առ ընդհանուր արտադր.          | 40,2    | 36,7    | 40,7    |
| <b>Բանվորների միջին քիվը</b>           | 492     | 1,333   | 3,175   |
| Նույնը % առ նախորդ տարի                | —       | 271     | 238     |
| Նույնը % առ բանվ. ընդհան. թիվը         | 64,3    | 72,5    | 83,5    |

Բանվորների թիվն յեվ արտադրանքի տեսակարար կշիռների անհամապատասխանությունը տեղի ունի շնորհիվ պղնձի արդյունաբերության, վորմ մեջ ըստ արտադրության քնույթի շատ բանվորներ են գտնվում յեվ վո-



ընդ թիվն ավելի անհամապատասխան և արտադրությունը՝ վերականգնողական ու շինարարական աշխատանքների պատճառով: Արտադրանքի տեսակարար կշռի իջումը (նախապատերազմյան արժեքով) ժամանակավոր ու պատահական բնույթ է կրում, չեմ ժողտնտիսորհի արդյունաբերությունը բացահայտ ու անվիճելի տվյալներ ունի գերակշռող տեղը գրավելու համար:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ-  
ԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՃՅՈՒՂԵՐԸ** Անցնենք արդյունաբերություն գլխավոր նյութերի համառոտ տեսություն, ըստ վորում, կըրկնումներից խուսափելու համար կանգ չենք առնի նրանց արտադրանքի արժեքի վրա, վորտեղ այդ անհրաժեշտ չե, բանի վոր համապատասխան վերլուծումը կատարել ենք նախորդ հոդվածներում:

**ՊՂՆԺԻ ԳՐԱԳՈՐԾԱԲԵՐՈՒՄԸ:** Արտադրություն գլխավոր ցուցիչները հետևյալ պատկերն են ներկայացնում:

Բացարձակ թվերով (փթերով) % առ նախորդ տարի

«Կարմիր Նոյեմբեր» հաճեք

յեվ գործարաններ 1924/25 թ. 1925/26 թ. 1924/25 թ. 1925/26 թ.

Պղնձի հանածոյի ստացումն 87,460 345,846 — 395

Պղնձի հալումն 30,858 39,531 — 128

**Ալյահվերդու հաճեք յեվ  
գործարաններ**

Պղնձի հանածոյի ստացումն — 234,953 — —

Պղնձի հալումն 10,526 9,222 478 87,6

Պղնձի հրաքարի ստացումն — 248,140 — —

Կարբիդի արտադրություն 8,153 16,988 136 208

Ընդամենը

Պղնձի հանածոյի ստացումն 87,460 580,799 — 664

Պղնձի հալումն 41,384 48,753 1880 118

Հանքերի մշակում (հանածոյի ստացումն) 1924/25 թ. Ալյահվերդու խմբում ամենեվին չի կատարվել, յեվ պղնձի հալումը տեղի չե ունեցել բացառապես հանածոյի հին մնացորդներից միայն III յեռամայակում, իսկ 1925/26 թվականին՝ III յեվ IV-րդ յեռամայակներում: Պղնձի հալումը Ալյահվերդու խմբում վերջին տարում ցույց է տալիս 12,4 տոկոս նվազում նախորդ տարվա համեմատությամբ այն պատճառով, վոր հանածոյի մնացորդները սպառվել էյին, իսկ նոր հանածոյի բանակը դեռ բավարար չեր: Բացի դրանից իհարկե, յեղել են սեզոնային ու պատահական հանգամանքներ (սառնամանիքներ, բանվորների նվազումը դաշտային աշխատանքների պատճառով յեվ այլն), վորոնք ազդել են արտադրության վրա, սակայն ի մի առած նրանք չեն նսեմացնում ակնհայտ վերելքի փաստը:

Պղնձի հալումը 1924/25 թ. կազմել է նախապատերազմյան չափի 12,1 տոկոսը, իսկ 1925/26 թ. 14,2 տոկոսը:

Բանվորների թիվն ու արտադրանքի արժեքը բաշխվում են ըստ առանձին խմբերի հետևյալ կերպ:

|                             | «Կարմիր Նոյեմբեր» |         | «Ալյահվերդու» խումբ |         |
|-----------------------------|-------------------|---------|---------------------|---------|
|                             | 1924/25           | 1925/26 | 1924/25             | 1925/26 |
| Բանվորների միջին թիվը       | 556               | 1,108   | 236                 | 974     |
| Արտադրանքի արժեքը՝          |                   |         |                     |         |
| Նախապ. գներով հազ. նախ. ո.  | 308,6             | 395,3   | 472,9               | 664,9   |
| Ժամանակ. գներով հազ չերվ ո. | 140,8             | 188,6   | 244,4               | 436,1   |

Բերված ցուցիչներն, իհարկե, եֆֆեկտ կունենային, յեթե արտադրանքի մեջ հաշված լինեին նայեվ հանածոյի արժեքը, վորը, սակայն վորպես վերամշակման հում նյութ, հաշվի չի առնված: Նման ուղղումով մենք անշուշտ, կունենայինք արտադրանքի ավելի ուժեղ աճում:

Միում է նկատել, վոր զբաղված բանվորական ույժն ավելի պրոգրեսիվ կերպով է աճել, քան արտադրանքը: Որինակ՝ 1925/26 թվի արտադրանքի 30 տոկոս աճման դիմաց բանվորների տարեկան միջին թիվն աճել է 163 տոկոսով: Այդ յերեվույթի բացատրությունը մենք գտնում ենք հանքերի վերականգնման շինարարական աշխատանքների մեջ, վորոնք կլանում են բանվորական ույժի խոշոր մասը: Որինակ, միայն Ալյահվերդու հանքերի հորիզոնական նրբանցքներում (ШТОЛЬНИ) վերականգնման աշխատանքների սկզբից մինչև 1925/26 թ. վերջն անցել են 8,154 մետր:

Բուն հանքերը վերականգնելու յեվ նրանց շահագործման համար պիտանի դարձնելու հետ միաժամանակ խոշոր աշխատանքներ են կատարվել նայեվ արտադրական յեվ ուժանդակ կառուցվածքները, ուժակայանները յեվ այլն վերականգնելու ասպարիզում: Դժբախտաբար, հնարավորություն չկա ցանկալի մանրամասնությամբ կանգ առնելու այդ աշխատանքների վրա, բայց անհրաժեշտ է շեշտել, վոր սա յեվս մի կարեվոր մոմենտ է, վորն անպայման հաշվի պիտի առնվի՝ վերականգնման պրոցեսի հաջող ընթացքի լիակատար գնահատականը տալու համար:

Այսպիսով, պղնձի արդյունաբերության վերականգնման պրոցեսի հիմնական բնորոշիչ տարրերը բուն արտադրության, հանածոյի ստացման յեվ շինարարական աշխատանքների ծավալումը լիովին գտել են իրենց արտացոլումը բերված թվերի մեջ:

**ԳԻՐՈՒ-ՍԱՅԻՐՏԻ ԿՈՃՅԱԿԻ ԱՐԳՈՐԾԱԲԵՐՈՒՄԸ:** Խաղողի բավարար բերքը 1924 թվին կարելի է խթան հանդիսացավ արդյունաբերության այս նյութի համար, վորի հետեվանքով հնարավոր յեղավ բացի նախկին Շուստովի գործարանից աշխատանքի դնել մի գործարան յեվս, բայց յեվ այնպես, խաղողի այգիների այժմյան դրությունը յեվ ցած բերքը թույլ չեն տալիս լրացնելու գոյություն ունեցող գործարանների բեռնավորումը յեվ գինու-սպիրտի-կոնյակի արտադրությունը հասցնելու նախապատերազմյան չափերին:

Խաղողաբուծության կացությունը նույնությամբ անդրադառնում է արդյունաբերության այս նյութի վրա, վորը բացարձակապես կախում ունի այգիների բերքից:



«Արարատ» տրեստի արտադրանքը 1924/25 թ. և 1925/26 թ. թ. արտահայտվում է հետևյալ թվերով՝

|                  | Բացարձակ թվերով |         | Տոկոս առ նախորդ տարի |         | Տոկոս առ 1913 թ. թ. |         |
|------------------|-----------------|---------|----------------------|---------|---------------------|---------|
|                  | 1924/25         | 1925/26 | 1924/25              | 1925/26 | 1924/25             | 1925/26 |
| Կոնյակ հազ. աստ. | 1.514,4         | 1.507,5 | —                    | 99,5    | 31,4                | 31,3    |
| Ռեկտիֆ. սպիրտ    | 3.436,0         | 2.578,7 | 322                  | 67,0    | 88,5                | 66,4    |
| Գինի հազ. դուլլ  | 77,9            | 73,9    | 97,8                 | 94,9    | 50,8                | 48,2    |
| Դոշար            | 12,5            | 2,0     | 124                  | 16,0    | 176                 | 28,2    |

Այստեղ ցույց է տված կոնյակի յեվ սպիրտի զուտ արտադրությունը։ Որինակ՝ 1925/26 թ. փաստորեն արտադրվել է 1,536,5 հազ. աստ. կոնյակ յեվ 3,105,0 հազ. աստ. սպիրտ, վորից 29,0 հազ. աստ. կոնյակ յեվ 256,3 հազ. աստ. սպիրտ թողնվել է հետագա վերամշակություն յեվ հաշվի չի առնված վերը։

Ինչպես տեսնում ենք, 1925 թ. խաղողի վատ բերքի պատճառով այգիների ցրտահարության հետևանքով, վերջին տարվա արտադրությունը պակաս է յեղել։ Այս կրճատումն առանձնապես անդրադարձել է ռեկտիֆիկացիոն սպիրտի արտադրության վրա։ Գինու յեվ կոնյակի արտադրության նվազումն աննշան է, իսկ դոշարները հետզհետե կրճատվում են, հետագայում վերացնելու նպատակով։

Ողու արտադրությունը վերացված է, իսկ կոնյակները վերսկսվել են միայն 1924/25 թ. թ. թ. թ.

Արտադրության նախապատերազմյան չափերի հետ համեմատելիս նկատում ենք, վոր շատ յետ են մնացել կոնյակն ու գինին, թեյեվ վերջին տարում զգալի կերպով իջավ նայեվ սպիրտի արտադրությունը։

Այստեղ կարեվոր է շեշտել մի հանգամանք. մեր արտադրությունը զգալի չափով յետ է մնում նայեվ շուկայի պահանջից, վորի հետևանքով իրացումը (ռեալիզացիան) միշտ զերազանցում է արտադրությունից իհարկե, ի հաշիվ հին պահեստի։ Սա յերեվում է հետեվյալ համադրությունից։

|                                 | 1924/25 թ. | 1925/26 թ. |
|---------------------------------|------------|------------|
| Արտադրություն հազ. չերվ. ոք.    | 1,839,9    | 1,962,5    |
| Իրացում „ „ „                   | 1,960,8    | 2,903,3    |
| Իրացումը տոկոսով առ. արտադրութ. | 106        | 148        |

Պարզ է, վոր այս յերեվյալ ծանր կերպով է անդրադառնում «Արարատ» տրեստի ռացիոնալ նկուղային տնտեսության վրա, հնարավորություն չտալով ունենալու հին գինիների անհրաժեշտ աստորտիմենտի պահեստ։

Մյուս կողմից, շրջանառության միջոցները լրացնելու պահանջն ստիպում է ոգտվել շուկայի նպաստավոր կոնյունկտուրայից, թեկուզ վերոհիշյալ զոհողություններ, այն հույսով, վոր գալիք բերքից կարելի կլինի ավելացնել արտադրությունն ու լրացնել անհրաժեշտ պահեստի պակասը։

Բամբակագման արդյունաբերությունը ամբողջովին ընդգրկվելով բամբակի բերքի վերամշակումը յեվս առավել բան գինու—կոնյակի արդյունաբերությունը, յենթակա յետ այն փոփոխություններին, վորոնք տեղի յեն ունենում բամբակագործության մեջ։ Բամբակի բերքի պրոդրեսսիվ աճումը նույնությամբ կրկնվել է բամբակագտման արդյունաբերության արտադրանքի նկատմամբ։

Ստացված է՝

|             | Բացարձակ թվերով (հազար փթեր) տոկոս առ նախորդ տարի |         |         |         |
|-------------|---------------------------------------------------|---------|---------|---------|
|             | 1924/25                                           | 1925/26 | 1924/25 | 1925/26 |
| Զտած բամբակ | 194,3                                             | 242,4   | 354     | 125     |
| Լինտեր      | 2,6                                               | 1,3     | 520     | 50      |
| Հունդ       | 388,4                                             | 553,9   | 320     | 143     |

Շնորհիվ այն հանգամանքի, վոր Սարդարաբադի գործարանն ուշ է սկսել գործել, 1924/25 թ. բամբակի գտումը կատարվել է առաջին յեռամսյակների ընթացքում, մինչդեռ 1925/26 թ. թ. թ. ավելի մեծ բերքի գտումն ավարտվել է առաջին կիսամյակում։

1923/24 յեվ 1924/25 թ. թ. թ. թ. թ. թ. բնական է, չեն կրկնվում 1925/26 թ. թ. բանի վոր բամբակագործությունն արդեն մոտեցել էր իր վերականգնման սահմանին, սակայն վերջին տարում ցույց տված 26 տոկոս աճումն իսկ խոշոր հաջողություն է, վորով բամբակագտման արդյունաբերությունը վոր միայն հասավ նախապատերազմյան մակարդակին, այլ 2 տոկոսով զերազանցեց այն։

Այս արտասովոր վերելքը նշանակալից է վոր միայն բանակով, այլ նայեվ վորակով։ Բամբակագտման արդյունաբերությունը միակն է, վոր խորհրդայնացումից հետո յիակատար վերականգնման յենթարկվեց. յեվ նախկին փորը ու անպետք բազմաթիվ ձեռնարկությունների փոխարեն այժմ ունի կենտրոնացված արտադրություն 2 նորակառույց գործարաններում (կատարելագործված սարքավորումով) յեվ 1 վերասարքավորված գործարանում։

Նրանց արտադրողական կարողությունն, ինչպես տեսանք, միանգամայն բավարար է առաջիկա տարիների համար, յեթե նույնիսկ բամբակագործությունը շարունակի զարգանալ նույն թափով։

Կառվի արդյունաբերությունը Հայաստանում ներկայացված է ժողտնտիստների 2 կաշեգործարանով, վորոնք պատերազմից առաջ պրիմիտիվ ձեռնարկություններ էյին, («ղաբախանա»)։ Այժմ, նրանք վերակառուցումից հետո անցել են ավելի վորակավոր արտադրության։

Բանի վոր կաշվի մշակման արդյունաբերությունը բոլոր տվյալներն ունի զարգանալու, ուստի վերականգնման պրոցեսի սկզբից այստեղ յեվս նկատվում է արտադրության նկատելի աճում։

Պատրաստված է՝

|                  | Բացարձակ թվեր (հատ.) |         | Տոկոս առ նախորդ տարի |         |
|------------------|----------------------|---------|----------------------|---------|
|                  | 1924/25              | 1925/26 | 1924/25              | 1925/26 |
| Խոշոր կաշի       | 8,920                | 10,664  | 138                  | 120     |
| Մանր կաշի        | 71,647               | 94,693  | 133                  | 131     |
| Ընդամենը վերածած |                      |         |                      |         |
| խոշոր կաշու      | 26,928               | 34,337  | 135                  | 128     |

Թեյեվ յերկու տարումն էլ արտադրանքի աճումն ինտենսիվ է յեղել, բայց վերջին տարում այդ ցուցիչն ավելի նվազ է, յեվ դա հասկանալի յետ, վորովհետեվ գոյություն ունեցող 2 գործարանն էլ արդեն մոտեցել են արտադրական լրիվ բեռնավորմանը (նախապատերազմյան 99 տոկոս), մանավանդ, վոր արտադրական պրոցեսներն այժմ ավելի բարդացել են մշակվող ապրանքի վորակի բարձրացման հետ։



Ի դեպ՝ վորպես վորակի բարձրացումն ապացուցող հանգամանք, նշենք, վոր բնական արտադրանքի անման պրոդրեստի հակառակ պատկեր ե ներկայացնում նույն արտադրանքի արժեքի անումը: Այսպես, վերը բերած թվերը ցույց են տալիս 35 յեվ 28 տոկոս հաջորդական անում, այնինչ նախապատերազմյան եկվիվալենտ արժեքները ցույց են տալիս 40 յեվ 50 տոկոս հաջորդական անում: Այստեղից հետեւում ե, վոր կաշվի արտադրանքն անում ե վոչ միայն բանակապես, այլ յեվ դեպի լավը փոփոխվող աստորտիմենտի վորակով:

Արտադրության հետագա ընդլայնումն այստեղ սերտորեն կապված ե նոր վերակառուցման աշխատանքների հետ՝ թե սարքավորման յեվ թե շենքերի նկատմամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐ- Նախ քան արդյունաբերության տեսությունը վեր-  
ԴՐՈՒՄՆԵՐ քացնելը, մի քանի խոսքով կանգ առնենք արդյու-  
նաբերության հիմնական ներդրումների վրա (капитальные вложения):

Ներդրված հիմնական կապիտալներ՝ \*)

|                      | Բացարձակ<br>1924/25 | Թվերով<br>1925/26 | (հազ. որւ.)<br>Ընդամենը | Ընդամենը<br>տոկոսով առ<br>զուամար |
|----------------------|---------------------|-------------------|-------------------------|-----------------------------------|
| Մանածագործարան       | 503,8               | 822,2             | 1,326,0                 | 14,6                              |
| Ելեքտրակայաններ      | 879,0               | 1,617,3           | 2,496,3                 | 27,4                              |
| Պղնձի արդյունաբ.     | 630,5               | 1,472,5           | 2,103,0                 | 23,1                              |
| Այլ արտադրություններ | 83,8                | 717,2             | 801,0                   | 8,8                               |
| Ընդամենը՝ ըստ ժՏԽ    | 2,097,1             | 4,629,2           | 6,726,2                 | 73,9                              |
| Բամբակազտման         | 561,0               | 1,643,8           | 2,204,8                 | 24,2                              |
| Հայանտառութեամբ      | 33,4                | 133,9             | 167,3                   | 1,9                               |
| Գումար               | 2,691,5             | 6,406,9           | 9,098,4                 | 100                               |

Այսպիսով, կապիտալ ծախսերի գումարի 90,3 տոկոսը ներդրվել ե մանածային, ելեքտրաէներգիայի, պղնձի յեվ բամբակազտման արդյունաբերության մեջ՝ ձեռնարկությունների, վորոնք կենսական նշանակություն ունին մեզ համար: Վերջինի շինարարությունը, գոնե առաջիկա տարիները համար պիտի համարել ավարտված՝ իսկ մյուսներինը շարունակվելու յե նոր թափով:

Կապիտալ ներդրումները 1925/26 թվին նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան կրկնապատկվել են:

Վերին աստիճանի հետաքրքրական պատկեր ե ներկայացնում այդ գումարների նպատակային բաշխումն ըստ հետեւյալ աղյուսակի:

|                              | Բացարձակ<br>1924/25 թ. | Թվերով<br>1925/26 | (հազ. որւ.)<br>Ընդամենը | Ընդամենը<br>տոկոսով<br>առ գումար |
|------------------------------|------------------------|-------------------|-------------------------|----------------------------------|
| Նոր շինարարություն           | 1,969,2                | 4,575,8           | 6,545,0                 | 71,9                             |
| Ընդարձակումն յեվ վերակառուց. | 485,5                  | 1,078,0           | 1,563,5                 | 17,2                             |
| Հիմնական նորոգում            | 236,8                  | 752,1             | 989,9                   | 10,9                             |
| Գումար                       | 2,691,5                | 6,406,9           | 9,098,4                 | 100                              |

\*) Այստեղ տրվում են ժողտնխորհի, Հայրամբակի և Հայանտառութեամբ հիմնական ներդրումները: Հաշվի չառած ներդրումները համեմատաբար մեծ չեն: 1925/26 թ. տրվյալները նախնական են:

Բամբակազտման արդյունաբերության կապիտալ ներդրումները — բացի հիմնական նորոգման ծախսերից — մտցված են նոր շինարարության ծախսերի մեջ: Յեթե պայմանականորեն այդ յեվս համարենք ռեկոնստրուկցիա, ապա կստանանք՝ նոր շինարարություն — 47,7 տոկոս յեվ ընդարձակում ու ռեկոնստրուկցիա — 41,4 տոկոս:

Ուրեմն, մի անգամ յեվս ապացուցվում ե այն դրությունը, վորի մասին առիթ ենք ունեցել ասելու, — այն ե, վոր մեր արդյունաբերության ժամանակակից եվոլյուցիան ընթանում ե գերազանցապես նոր շինարարության ու ռեկոնստրուկցիայի գծով:

Վերականգնողական չենք ասում, վորովհետեւ վերականգնելու քիչ քան ենք ունեցել: Յեթե վերականգնվող արդյունաբերությունից հանենք զինու-սպիրտի-կոնյակի արդյունաբերությունը, վորի արտադրական իրական կարողությունը շատ յետ չե նախապատերազմյանից, ապա կմնա վերականգնելու միայն պղնձի արդյունաբերությունը, վորը միաժամանակ պիտի ընթանա ռեկոնստրուկցիայի գծով:

## Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԲԱՆ- Աշխատանքի արտադրողականության ուսում-  
ՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆ- նասիրությունը մեր պայմաններում դժվարամատ-  
ՎԱՐՁԸ չելի յեվ վորոշ մոմենտներում նույնիսկ անմատ-  
չելի յե: Սա մասամբ վերաբերում ե նայել աշխատավարձի ու մանավանդ արտադրողականության ու աշխատավարձի փոխհարաբերության ուսումնասիրությանը:

Բազմաթիվ պատճառներից կարելի յե մատնանշել հետեւյալները. —

1. Ուսումնասիրության մեթոդությունից հետեւյալները. —  
նականապես ձեւակերպված չե յեվ շատ վիճելի կետեր ունի, իսկ գոյու-  
թյուն ունեցող մեթոդները մեզնում դեռ չեվս հետեւողական կիրառու-  
թյուն չեն գտել:

2. Հայաստանի սահմանափակ արդյունաբերությունը յեվ նրա յուրահատուկ ստրուկտուրան հաճախակի պատահականությունների առիթ են տալիս, վորոնք մեխանիքորեն աղավաղում են իրերի իսկական դրու-  
թյունը յեվ պատճառ դառնում սխալ յեզրակացությունների:

3. Ուսումնասիրության յենթակա ռեյեկտների յեվ վերոհիշյալ յերե-  
վույթների վորոշիչների բաղկացուցիչ տարրերի սահմանումն ինքնըստին-  
քյան մի դժվարին գործ ե, վորն ավելի յեվս բարդանում ե մեր, այս տե-  
սակետից տակավին անկազմակերպ արդյունաբերության մեջ, այս կարգի  
դժվարություններ գլխավորապես հանդիպում են արտադրողականության  
ու աշխատավարձի ստատիկ դրությունն ուսումնասիրելիս:

4. Նույն յերեվույթի դինամիկայի ուսումնասիրության արգելք են հանդիսանում ներքին փոփոխությունները, վորոնք արագորեն կատար-  
վում են ներկայիս անցողական շրջանում մեր արդյունաբերության մեջ  
ընդհանուր առմամբ յեվ թե ըստ առանձին եյուղերի. դրա հետ միասին  
փոփոխվում են ուսումնասիրելի ռեյեկտներն ու տարրերն յեվ նրանց  
փոխհարաբերությունները. հետեւապես ստացված դիտողություններն ըստ  
ժամանակի դառնում են անառադրելի, անհամեմատելի:

Ահա վերը թված պատճառների հետեւանքով ե, վոր այստեղ զի-



տակցաբար բաց և թողնված արտադրողականության խնդիրը, վոր մեր հետագա աշխատանքների լուրջ առարկան պիտի դառնա:

Ինչ վերաբերում է աշխատավարձին, ապա, չնայած այդ հարցի վերաբերյալ յեղած նյութերի պայմանականության, այնուամենայնիվ նրանք վորոշ չափով կարող են ամփոփ ուսումնասիրություն հիմք ծառայել:

Հավելվածի № 9 աղյուսակը ցույց է տալիս արդյունաբերական 5 ճյուղերի գործարանային բանվորների նոմինալ (անվանական) յեվ ունալ (իրական) ամսական միջին աշխատավարձի շարժումը 1924/25 յեվ 1925/26 թ. թ.:

Յեռամսյակից յեռամսյակ նկատված տատանումները ճշտորեն չեն արտացոլում աշխատավարձի շարժումը: Արտասովոր թուլիքները բացատրվում են արտաժամյա աշխատանքներով (տրեստ «Արարատ»), տարբեր վորակի բանվորների կազմի փոփոխումով (պղինձի արդ.), սեզոնային աշխատանքներով (բամբակագտման) յեվ այլն: Ռեալ աշխատավարձի մակարդակը բացի դրանից յենթակա յե նայել բյուջեական ինդեքսի (բյուջեական հավաքի արժեքի) փոփոխումներին:

Յեթե հաշվի չառնենք 1 տոկոսից պակաս փոփոխություններն ու չդիտենք այն դեպքերը, յերբ նախորդ յեռամսյակի բաղդատմամբ չի իջել վոչ նոմինալ յեվ վոչ ունալ աշխատավարձը, կամ նոմինալ աշխատավարձի իջումը փոխհատուցվել է ունալ աշխատավարձի բարձրացումով յեվ, ընդհանրապես, այն ժամանակ ունեցած յեռամսյակային 40 ցուցմունքներից կմնա միայն 4 ցուցմունք, յերբ իջել է թե ունալ յեվ թե նոմինալ աշխատավարձը:

Առաջին դեպքը վերաբերում է «Արարատ» տրեստին 1924/25 թ. II յեռամս. յեվ բացատրվում է նրանով, վոր 1-ին յեռամսյակի աշխատավարձն արհեստական կերպով բարձր է յեղել հոկտեմբեր յեվ մասամբ նոյեմբեր ամիսների արտաժամյա աշխատանքների պատճառով: Յերկրորդ դեպքը տեղի յե ունեցել պոլիգրաֆային արդյունաբերության մեջ 1925/26 թ. II յեռամսյակում յեվ բացատրվում է նույն հանգամանքով: Վերջին դեպքերը վերաբերվում են բամբակագտիչ գործարաններին 1924/25 թ. II յեվ 1925/26 թ. I յեռամսյակներում, յերբ լրիվ աշխատանքի ժամանակ ցածր վորակի բանվորների տեսակարար կշիռն ավելի մեծ է յեղել, իսկ նախորդ յեռամսյակներում տրված են յեղել կոմպենսացիոն յեվ լիկվիդացիոն վճարներ:

Նույն հանգամանքներով է բացատրվում 1925/26 թ. I յեռ. «Արարատ» տրեստի յեվ 4-րդ յեռ. բամբակագտիչ գործարանների բանվորների աշխատավարձի իջումը նախորդ տարվա համապատասխան յեռամսյակների համեմատությամբ:

Այսպիսով, կարելի յե ասել, վոր միյնվելույն կարգի յեվ վորակի բանվորների նոմինալ աշխատավարձի իջումն իրականում տեղի չի ունեցել:

Ավելի ճիշտ հասկացողություն են տալիս ամսական աշխատավարձի տարեկան միջինները, վորտեղ վերոհիշյալ պատահականությունները շատ թեք չափով հարթված են:

#### Ահա այդ տվյալները՝

|                         | Նոմ. աշխ. | Ռեալ աշխ. | 25/26 % | առ 24/25 |
|-------------------------|-----------|-----------|---------|----------|
|                         | 24/25     | 25/26     | 24/25   | 25/26    |
| Ալլահվ. հանք. յեվ գործ. | 33,77     | 38,35     | 16,47   | 17,31    |
| Գինու-կոնյակի արտադ.    | 58,72     | 61,84     | 28,46   | 27,87    |
| Պոլիգրաֆ. արտադրութ.    | 44,34     | 55,05     | 21,49   | 24,77    |
| Կաշվի մշակման           | 36,35     | 55,87     | 17,63   | 25,29    |
| Բամբակագտ. գործ.        | 48,48     | 70,42     | 23,02   | 31,22    |
|                         |           |           | 145     | 135      |

Միայն «Արարատ» տրեստի բանվորների ունալ աշխատավարձն է նվազում ցույց տալիս 1925/26 թվին այն պատճառով, վոր նոմինալ աշխատավարձի 5 տոկոս հավելումով չի փոխհատուցվել բյուջեական ինդեքսի բարձրացումից առաջացած դեֆիցիտը:

Պղնձի արդյունաբերության համեմատական փոքր հավելումը բացատրվում է նրանով, վոր վերջին տարում մեծ թվով ավելացել են հանքային բանվորները, վորոնք ցածր վորակի լինելով քիչ աշխատավարձ են ստանում:

Դրա հակառակ, կաշվի մշակման յեվ բամբակագտման արդյունաբերության մեջ նկատվող մեծ հավելումի պատճառ արտադրության ռացիոնալիզացիան է, վորի հետևանքով, չնայած արտադրության ծավալմանը, բանվորների թիվը կրճատվել է յեվ ավելի ինտենսիվ աշխատանքը թույլ է տվել զգալի չափով բարձրացնելու աշխատավարձի մակարդակը:

Վերոհիշյալ 5 արտադրությունների կշռած (ըստ բանվորների թվի) միջին ամսական աշխատավարձի հավելումը 1925/26 թ. նախորդ տարվա համեմատությամբ արտահայտվում է՝ նոմինալ աշխ. 16 տոկոս յեվ ունալ աշխ. համար 8 տոկոսով: Կրկին անգամ պիտի նկատել, վոր այս ցուցիչներն անհամեմատ ավելի բարձր կլինեն, յեթե հաշվի չառնենք պղնձի արդյունաբերության մեջ վերջին տարվա ընթացքում ավելացած 1,300 բանվորներին, վորոնք ցածր աշխատավարձ են ստանում: Այդ թիվը, կազմելով հիշյալ արդյունաբերական ճյուղերում աշխատող բանվորների թվի 50 տոկոսը կամ 1924/25 թ. նույն ճյուղերի բանվորների թվի 100 տոկոսն, անշուշտ, վեճական ազդեցություն ունի աշխատավարձի միջին չափի վրա:

Ինչ վերաբերվում է վերը թված արդյունաբերական ճյուղերի մեջ գոյություն ունեցող միջին աշխատավարձի տարբեր մակարդակներին, ապա տրված բացատրություններից հետո մնում է նկատել, վոր այդ տարբերությունները վրա ազդում են ամեն մի արտադրության սպեցիֆիկ բնույթը յեվ բանվորների խմբավորումն ըստ վորակի ու կարգի: Այդ պատճառով է, վոր նվազագույն աշխատավարձը դիտվում է մեծ թվով սեվագործ բանվորներ ունեցող պղնձի արդյունաբերության մեջ, վորը դեռեվս գտնվում է վերականգման շրջանում: Մյուս չորս արտադրություններում միջին աշխատավարձի տարբերությունը, մանավանդ 1925/26 թվին, այդքան մեծ չէ:



ԶԲԱՂՎԱԾ ԲԱՆՎՈՐ- Հայաստանի արդյունաբերական կյանքի և ժողովրդական տնտեսության վերականգման ու արտա- ՅԱՍՏԱՆՈՒՄ զրական նոր նյութերի սաղմնավորման զուգընթաց,

տարեցտարի աճում յեվ սովորաբար և զբաղված բանվորական ուժը: Հետևելով զբաղված բանվորական ուժի թվական (ըստ արտադրական խմբակների) աճման ընթացքին, հնարավոր է պատկերացնել թե յերկրի տնտեսական վերելքը յեվ թե զրա համար անհրաժեշտ մարդկային ուժե- րի ոգտագործումը:

Զբաղված բանվորական ուժի աճման բացարձակ ու հարաբերական արտահայտիչների ընդհանուր պատկերը տեսնում ենք ստորև լուսավորվող աղյուսակում

| ԺԱՄԿԵՏԵՐ        | Զբաղված բանվորա-<br>կան ուժը բացար-<br>ձակ թվերով | Նույնը % -ով առ<br>1 հունվարի<br>1923 թ. |
|-----------------|---------------------------------------------------|------------------------------------------|
| Հունվար 1923 թ. | 15.430                                            | 100.0                                    |
| Հոկտեմբեր »     | 16.312                                            | 105.7                                    |
| Ապրիլ 1924 թ.   | 19.865                                            | 128.7                                    |
| Հոկտեմբեր »     | 23.182                                            | 150.2                                    |
| Ապրիլ 1925 թ.   | 28.506                                            | 184.7                                    |
| Հոկտեմբեր »     | 32.226                                            | 208.2                                    |
| Ապրիլ 1926 թ.   | 35.950                                            | 233.0                                    |
| Հոկտեմբեր »     | 39.718                                            | 257.4                                    |

Այս աղյուսակից մենք տեսնում ենք, վոր 1923 թ. հունվարից մինչև 1926 թ. հոկտեմբերը, Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր նյութերում զբաղված բանվորական ուժն ընդհանուր առմամբ աճել է 157,4 տոկոսով:

Զբաղված բանվորական ուժն ըստ ժող. տնտեսության մեջ կատա- րած աշխատանքի բաժանվում է հիմնական հինգ խմբի.

- ա) Գյուղատնտեսական (գյուղատնտեսությունը սպասարկող հիմ- նարկներում աշխատողներ ու բաղադրիչներ)
- բ) Արդյունաբերական (ցենզային ու մանր արդյունաբ. ձեռնարկու- թյուններում, կառուցողական արտադրու- թյան մեջ զբաղվածներ)
- գ) Հաղորդակցության յեվ կապակցության (յերկաթուղի—հեռագիր ուղի—փոստ յեվ տե- ղական տրանսպորտ)
- դ) Հիմնարկային—մտավոր (պետական, հասարակական, կոոպերատիվ ու մասնավոր ամեն տիպի առևտրական հիմնարկներում մտավոր վարձու աշխա- տանքով զբաղվածներ) յեվ
- յե) Այլ (կոմմունալ ձեռնարկություններում, նույնպես յեվ ժողանդի ու հանրակացարանային աշխատավորներ):

Այս խմբերից առաջինի նկատմամբ կարելի է հետևել վերա- պահությունն անել. գյուղատնտեսության մեջ զբաղված ուժի հաշվառ- ման ժամանակ նկատի են առնվել նախ և առաջ բաղադրիչները, սակայն միայն նրանք, վորոնք Գյուղատնտես միության անդամ են յեվ սպասարկվում

են նրա կողմից: Հայաստանի բաղադրիչների թիվը անհամեմատ ավելի մեծ է, սակայն հատուկ հաշվառման նյութերի բացակայության պատճա- րով այստեղ վորյեվի ստույգ տվյալ հիշատակելու հնարավորությունից զուրկ ենք:

Զբաղված բանվորական ուժի աճման մասին ընդհանուր գաղափար կազմելուց հետո անհրաժեշտ է վերը բերված բաժանման համեմատ հե- տեվել յեվ տեսնել, թե սրանցից յուրաքանչյուրը ի՞նչ փոփոխություններ է կրել իր ու ընդհանուրի սկզբնական թվական կազմի նկատմամբ: Հա- մեմատության համար վերցնում ենք 1923 թ. հունվարից մինչև 1926 թ. հոկտեմբերի միջև համապատասխան տվյալները, վորոնք են՝

| ԽՄԲԵՐ           | 1923 թ. | 1926 թ. | % առ 1923 թ. |
|-----------------|---------|---------|--------------|
| Գյուղատնտեսական | 1.247   | 8.611   | 690.5        |
| Արդյունաբերական | 2.152   | 11.881  | 552.0        |
| Հաղորդակց. կապ  | 3.111   | 5.489   | 176.4        |
| Հիմնարկ. մտավոր | 7.808   | 12.183  | 156.0        |
| Այլ             | 1.112   | 1.554   | 139.7        |
| ԸՆԴԱՄԵՆԸ        | 15.430  | 39.718  | 257.4        |

Այս աղյուսակի բացարձակ արտահայտիչները ցույց են տալիս զբաղ- ված ուժի աճման չափերը տարբեր խմբերում:

Գյուղատնտեսական խմբի աճման պատճառը պիտի տեսնել վերև- վում նշած յերեվույթի մեջ (Գյուղատնտես միության կողմից ընդգրկված բաղադրիչների հաշվառումը, վոր առանձին թափով կատարվել է միայն 1923 թ. վերջերից): Գյուղատնտեսական խմբի աճման մյուս կարեւոր պատճառը պիտի տեսնել գյուղատնտեսության ինտենսիֆիկա- ցիայի յեվ սրա հետեւանքով նոր համապատասխան հիմնարկների բացման մեջ (շերամապահություն, պանրագործարաններ, ագրո—կայաններ, փորձ- նական—ցուցադրական դաշտեր յեվ այլն):

Զբաղված բանվորական ուժի արդյունաբերական խումբը, վոր մնացյալների նկատմամբ իր ունեցած դիրքով հիմնական նշանակություն ունի յերկրի տնտեսական զարգացման տեսակետից, իր աճմամբ զբաղվում է առաջին տեղը. նրա կողմից աստիճանական սովորաբար մասին ավելի լրիվ գաղափար կազմելու համար, բացի նախորդ աղյուսակի տվյալներից, առաջ ենք բերում նախ և առաջ հետեւյալ հարաբերական արտահայտիչները, վորոնցով բնորոշվում է նրա զբաղված տեղը մյուս չորս խմբերի նկատմամբ:

| ԺԱՄԿԵՏ            | Բացարձակ թիվը | Նույնը % -ով ընդհ. նկատմամբ |
|-------------------|---------------|-----------------------------|
| Հունվար 1923 թ.   | 2.152         | 13.9                        |
| Հոկտեմ. »         | 2.816         | 17.3                        |
| Հոկտեմբեր 1924 թ. | 3.724         | 16.1                        |
| Հոկտեմբեր 1925 թ. | 8.082         | 25.1                        |
| Հոկտեմբեր 1926 թ. | 11.881        | 29.9                        |

Հարաբերական արտահայտիչների համեմատությունը ցույց է տալիս, վոր արդյունաբերական խմբի տեսակարար կշիռը (1923 թ. 13.9 %, իսկ 1926 թ. 29.9 %) բանվորական զբաղված ընդհանուր ուժի մեջ ավելի քան յերկու անգամ բարձրացել է ի հաշիվ այլ խմբերի, գլխավորապես մտավոր—հիմնարկային խմբի, թեպետ այստեղ յեվ իր հերթին բացարձակ թվերով բանվորական ուժը աճել է:

Հաղորդակցության ու կապի միջոցների աշխատավորների թիվն աճել է ընդամենը 76,4 %: Սա բացատրվում է՝ ա) յերկաթուղային յեր-



թեմեկության կանոնավորմամբ, բ) հեռագրի, հեռախոսի, ռադիո ու փոստային փոխանակության ընդարձակմամբ ու այս կարգի նոր հիմնարկների բացումով յեզվ գ) տեղական տրանսպորտի, այն է ավտոյերթեվեկության փոխադրական գումակների ընդարձակմամբ:

Հաղորդակցության ու կապի աշխատավորների խմբակի տեսակարար կշիռը բանվորական զբաղված ընդհանուր ույժի նկատմամբ առ 1 հոկտեմբերի 1926 թ. կազմում է 13.8 %:

Ուշագրավ փոփոխություն է յենթարկվել մտավոր—հիմնարկային աշխատավորների թիվը:

Այս կարգի աշխատավորների բանակը թեպետ յեզվ բացարձակ թվերով անել է 56 %-ով, սակայն իր տեսակարար կշիռով շատ յետ է մնացել մյուս խմբերից: Այս խաչածեղ փոփոխությունը բացարձակ ու հարաբերական արտահայտությունը գտնում ենք հետևյալ թվերի մեջ.

| ԺԱՄԿԵՏ            | Զբաղված ույժի ընդ. թիվը | Մտավոր խմբի թիվը   | % առ զբաղված ույժի ընդ. թիվը |
|-------------------|-------------------------|--------------------|------------------------------|
| Հունվար 1923 թ.   | 15.430                  | 7.808              | 50.6                         |
| Հուլիս 1924 թ.    | 20.588                  | 8.062              | 39.1                         |
| Հոկտեմբեր 1925 թ. | 23.182                  | 8.518              | 36.7                         |
| Հոկտեմբ. 1925 թ.  | 32.226                  | 10.164             | 31.5                         |
| Հոկտեմբ. 1926 թ.  | 39.718                  | 12.183             | 30.7                         |
| Փոփոխություն      | + 24.288 կամ + 157.4 %  | + 4.375 կամ + 56 % | — 19.9 %                     |

Աղյուսակից պարզապես դիտվում է աստիճանական մոտեցում դեպի նորմալ թվական հարաբերությունը՝ արտադրության մեջ զբաղված բանվորական ույժի յեզվ հիմնարկային—մտավոր աշխատավորների անհրաժեշտ կադրի մեջով:

Պետք է արձանագրել այն, վոր չնայած բանվորական ույժի խոշոր աճման, կանանց թիվը աշխատողների շարքում վոչ միայն չի նվազում, այլ յեզվ ընդհանրական աճում է: Վերջին տարվա ընթացքում կանանց թիվը զբաղված բանվորական ույժի շարքում ավելացել է 3.689 հ. (առ 1 հոկտեմբերի 1925 թ.) մինչև 4663 հոգի (առ 1 հոկտեմբերի 1926 թ.): Յերկրորդ մոմենտը՝ դա անչափահասների թվի նվազումն է զբաղված բանվորական ույժի մեջ՝ 3680 հ. ընկնելով մինչև 3186 հ. նույն ժամկետներին. դա բացատրվում է նրանով, վոր չափահասության հասնող տարրերը չեն փոխարինվում անչափահասների նոր կադրերով:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ. Չնայած արդյունաբերության ու ժող. տնտեսության այլ ելուղերում զբաղված բանվորական շերտի ԱՆԴԱՄՆԵՐԻ ույժի բանակական աճմանը, աճում է նայել գործազրկությունը:

Գործազրկությունն արհմիությունների անդամների մեջ հետևյալ թվերով է արտահայտվում:

|                   | Գործազուրկների թիվը | % առ 1924 թ. հունվ. 1-ը | % առ զբաղված բանվ. ույժը |
|-------------------|---------------------|-------------------------|--------------------------|
| Հունվար 1924 թ.   | 2.139               | 100                     | 14.7                     |
| Հոկտեմբեր 1924 թ. | 2.665               | 125                     | 11.5                     |
| Հոկտեմբեր 1925 թ. | 2.314               | 108                     | 7.2                      |
| Հոկտեմբեր 1926 թ. | 4.063               | 190                     | 10.2                     |

1923—25 թ. թ. ժամանակաշրջանի հարաբերական կայունությունից հետո նկատվելի աճում է տեղի ունենում 1926 թ., վորի հետևանքով

զբաղված բանվորական ույժի բաղադրամասը մինչ այդ նկատվող գործազրկության աստիճանական նվազումը հարաբերական իմաստով, տեղի չի տալիս աճմանը՝ 7,2 %-ից բարձրանալով 10,2 %: Բայց ընդհանուր առումով գործազրկությունն ավելի պակաս չափով է աճել, քան զբաղված բանվորական ույժն ու արհմիությունների անդամների թվական կազմը:

Վերլուծելով 1924 յեզվ 1926 թ. թ. հոկտեմբերի 1-ի տվյալներն ըստ առանձին խմբերի, կարելի չի լուսաբանել թե ինչ ընթացք ունի գործազրկությունն ամեն մի խմբում:

|                     | Բացարձակ թվեր | % առ զբաղվ. բանվ. ույժը |
|---------------------|---------------|-------------------------|
| Գյուղատնտեսական     | 311 1.007     | 4,9 11,7                |
| Արդյունաբերական     | 824 1.049     | 22,1 8,8                |
| Հաղորդակց. յեզվ կապ | 261 313       | 7,0 5,7                 |
| Հիմնարկային-մտավոր  | 1.143 1.490   | 13,4 12,2               |
| Այլ                 | 126 204       | 15,6 13,1               |
| Ընդամենը            | 2.665 4.063   | 11,5 10,2               |

Ինչպես տեսնում ենք, միայն գյուղատնտեսական խմբի հարաբերական արտահայտիչն է բարձրացել, վորը մասամբ բացատրվում է գործազուրկների ավելի լայն ընդգրկումով: Դրան հակառակ, արդյունաբերական խմբի գործազրկությունը յեթե վոչ բացարձակ, գոնե համեմատական մեծությամբ զգալի չափով իջել է: Նույն յերեվույթը նկատվում է նայել գործազուրկների խմբական բաշխման մեջ ըստ տեսակարար կշռի, վորի ցուցիչները բերված են հավելվածի № 11 աղյուսակում: Հիշյալ դրական յերեվույթը հետեվանք է արդյունաբերության ու կառուցողական աշխատանքների ծավալման:

Իր ներքին ելույթյամբ մեր գործազուրկների բազմությունը ենշող մեծամասնությամբ վոչ վորակյալ անձերից է բաղկացած յեզվ դրա հետեվանքով աշխատանքի շուկան կարգավորող կազմակերպությունները շատ հաճախ պահանջված վորակի գործազուրկ չլինելու պատճառով անկարող են լինում բավարարել պահանջը:

Գործազրկությունն ըստ իր բաղկացուցիչ մասերի բաժանվում է յերկու հիմնական խմբի՝ ա. հարատեվ կամ մշտական, յեզվ բ. սեզոնային գործազուրկներ: Վերջիններիս կարգին պատկանում են այն գործազուրկները, վորոնք իրենց զբաղմունքով ու մասնագիտությամբ աշխատանք են վորոնում տարվա վորոշ—հատկապես ձմեռային—ամիսների ընթացքում: Այստեղ նկատի պիտի ունենալ գյուղատնտեսության ու կառուցողական, այլ յեզվ սննդի ու համի արտադրության ասպարիզում աշխատողներին:

Կարելի է պարզել, թե մեր գործազրկությունը ինչ աղբյուրներից է գոյանում: Վերլուծելով արդի դրությունը, մատնանշում ենք այդ աղբյուրներից հետևյալ զխավորները:

ա. Մեր գյուղի ագրարային գերաբնակությունը:

բ. Խորհրդային մյուս հանրապետություններից յեկողները, այս խումբըն ընդհանրապես բաղկացած է վորակյալ կամ կիսավորակ աշխատավորներից:

գ. Քաղաքային բնակչության միջից աշխատանքային չափահասության հասած յեզվ բնականաբար զբաղմունք ու աշխատանք վորոնողները:

դ. Առանձնահատուկ տեղ են զբաղում մնացած ծանր ժառանգությունը՝ վորբերը, վորոնք այժմ չափահասության հասնելով, զբաղմունք ու ապրուստի միջոցներ են վորոնում:



## ԱՌԵՎՏՈՒՐ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Յերկրի եկոնոմիկայի մեջ պլանային սկզբունքի ուժեղացման համար միջոց կռիվը իր արտացոլումն է գտնում շրջանառության բնագավառում: Գների բարձրացումն ու իջեցումը, ապրանքաշրջանառության լայնացումը կամ կրճատումը, նրա կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունը, — այս բոլոր շարժումները հնարավորություն են տալիս դատելու այս կամ այն ձեռնարկման ազդեցությունն առաջին, հնարավորություն են տալիս դատելու ժողովրդա-տնտեսական զանգվածի ներսում ծավալվող տնտեսական պրոցեսների մասին: Ահա թե ինչու է միշտ շրջանառության բնագավառը ուշադրության կենտրոնը կազմում պլանավորող և կարգավորող որգանների: Ահա թե ինչու գիտությունն այդ բնագավառի նկատմամբ արժանի չե ամենալուրջ ուշադրության:

Սակայն, պետք է նկատել, վոր հենց այս խնդիրն էր բնագավառում է, վոր մենք ամենից շատ դժվարություններ ենք զգում գիտությունն յեղանակների բարդության ու անմշակվածության հետևանքով: Մի ամբողջ շարք կարևորագույն հարցերի վերաբերմամբ յեղած նյութերի պակասը հերկայումս, նրանց կատարյալ բացակայությունն անցյալի նկատմամբ, հարկադրում են մեզ շատ զգույշ մոտենալ շրջանառության հարցերին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆ- Հ. Ս. Խ. Հ. Պետպլանին հետաքրքրող հիմնական ՔԱՇՐԱՆԱՍՈՒՐ հարցը յեղել է մի շարք վերջին տարիների ընթացքում մեր ունեցած ընդհանուր ապրանքաշրջանառության պարզաբանումը և նրա զարգացման բնութագիրը: Ներքո բերված աղյուսակը փոքրի շատ է գաղափար է տալիս ընդհանուր շրջանառությունների մասին 1923—26 թթ. ընթացքում\*): Մեծածախ և մանրածախ վաճառքը միջնորդական շրջանառության մեջ Հ.Ս.Խ.Հ.-ում յեղել է (հազար ուր.)

|               | 1923/24    | 1924/25 | 1925/26 |
|---------------|------------|---------|---------|
| Մեծածախ. վաճ. | 11.500 000 | 26.890  | 39.700  |
| Մանրածախ      | 19.500 000 | 24.500  | 34.200  |
| Ընդամենը      | 31.000 000 | 51.390  | 74.000  |

Շրջանառությունները (այստեղ նկատի է առնված միայն վաճառքը), ինչպես աղյուսակից յերևում է, տարեց-տարի աճում են և 1925/26 թվ.

\*) Պետք է նկատել այստեղ, վոր այս թվերը հիմնված են այն չափազանց աղքատ տվյալների վրա, վոր մենք ունենք մասնավոր առևտրի վերաբերմամբ. սակայն, նրանք միանգամայն ճիշտ են բնութագրում ապրանքաշրջանառության բնագավառում գոյություն ունեցող անդեմները:

հասնում 74 միլիոն ուրբու: Մեծածախ վաճառքն ավելի արագ է աճում քան թե մանրածախը: Աճեցման թափը շատ ուժեղ է 1923/24 թվականից 1924/25 թվականը և կազմում է 66%: Հետևյալ 1925/26 թ. շրջանառությունները աճում են արդեն դանդաղացած տեմպով, 44%-ով: Տեսնենք, թե ինչ մասնակցություն են ունեցել պետական և կոոպերատիվ որգանները ապրանքաշրջանառության մեջ: Մեծածախ առևտրի մեջ պետական որգանների գերակշռությունն ակներև է: 1923/24 թ. պետական շրջանառությունները կազմում են 8.500.000 ուրբ., այսինքն բոլոր շրջանառությունների 73,9 տոկոսը: Հետևյալ տարում մենք տեսնում ենք պետական շրջանառությունների աճումն թե բացարձակորեն և թե հարաբերական առումով՝ 8.500.000 ուրբուց շրջանառությունները հասնում են 1924/25 թ. 20.940.000 ու., կազմելով արդեն ընդհանուրի 77,8 տոկոսը: 1925/26 թ. պետական շրջանառության բացարձակ աճման հետ միասին նկատվում է նրա տեսակարար կշռի վորոշ եղբւր ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ. համապատասխան թվերն են 28.280.000 ու., վոր ընդհանուրի 71,2 տոկոսն է կազմում:

Պետական և մասնավոր առևտրականի (վորին կանցնենք ստորև) հաշվին սկսում է դարգանալ կոոպերացիան. նրա շրջանառությունները առաջին (1923/24 թվի) տարվա ընթացքում մեծածախ վաճառքի բնագավառում կազմում են ընդամենը 1.000 հազար ուրբի կամ ընդհանուր շրջանառության 8,7 տոկոսը, հետևյալ տարում տեսակարար կշռը բարձրանում է 11 տոկոսի (շրջանառություն 2.950 հազար ուրբու): Վերջին հաշվետու տարին 1925/26 — վկայում է Հայաստանում զարգացող կոոպերացիայի աչքի ընկնող հաջողությունների մասին: Նրա շրջանառությունները հասնում են 7420 հազար ուրբու, կազմելով ընդհանուր ապրանքաշրջանառության 18,7 տոկոսը: Այսպիսով պետականության ու կոոպերացիան միասին 9.500 հազար ուրբուց 1923/24 թ. հասնում են 35.700 հազար ուրբու 1925/26 թ., նրանց մասնակցության տոկոսը 82,6 տոկոսից հասնում է 88,8 տոկոսի 1924/25 թվականին և 89,9 տոկոսի՝ 1925/26 թ.:

Մասնավոր առևտրականը հանձնում է իր գիրքերը մեծածախ վաճառքի բնագավառում, վորտեղ նրա համար դժվար է մրցությունը, թեև նրա շրջանառությունները աճում են հաշվետու ժամանակաշրջանում: Այդ աճումը խիստ աննշան է, և մասնավոր առևտրականի տեսակարար կշռը տարեց-տարի ընկնում է մեծածախ վաճառքի ասպարիզում:

1923/24 թ. մասնավոր առևտրականի մասնակցությունն արտահայտվում էր 17,4 տոկոսով, հետևյալ տարում այդ տոկոսն իջնում է 11,2 տոկոսի, իսկ 1925/26 թ. — 10,1 տոկոսի:

Մեր մեծածախ ապրանքաշրջանառության մեջ զարգացող նույն պրոցեսները համապատասխանում են Միություն մեջ զարգացող նույն պրոցեսներին: Մեր տարբերությունը Միության համեմատությամբ կայանում է միայն նրանում, վոր այնտեղ մասնավոր առևտրականը մեծածախ վաճառքի բնագավառում շատ ավելի մեծ նշանակություն է ունեցել, քան թե մեզ: —միանգամայն հասկանալի պատճառներով: Միության մեջ մասնավոր առևտրականի մասնակցության տոկոսը 1923/24 թ. հավասար է յեղել 21,8-ի, մյուս կողմից, շատ ավելի ուժեղ է յեղել նաև կոոպերացիան, վոր ունեցել է 1923/24 թ. մեծածախ ամբողջ առևտրի 26,1 տոկոսը կազմող շրջանառություն: Քննության յենթակա ժամանակաշրջանում Միու-



թյան մեջ մասնավոր առևտրականի շրջանառությունները իջել են 9,4 տոկոսի 1925/26 թ. իսկ կոոպերացիայի շրջանառությունները բարձրացել են 41,2 տոկոսի:

Մեղանում, ինչպես տեսանք, կոոպերացիան նմանապես ավելի արագ է աճում, քան մասնավոր առևտրականն ու պետորգանները, բայց մեր կոոպերացիան դեռևս չի կարող նույնպիսի դիրք գրավել, ինչպիսին ունի Միության մեջ, — նրա թեքերը նոր են աճում, մեծանում:

Մասնավոր կապիտալի միջնորդական շրջանառությունը Ս. Ս. Հ. Մ. և Հայաստանի Ս. Ս. Հ. մեջ 1923/24—1925/26 թ. (տոկոսներով). — մեծածախ առևտրի շրջանառության մեջ:

|                  | 1923/24 | 1924/25 | 1925/26 |
|------------------|---------|---------|---------|
| Ս. Ս. Հ. Մ.      | 21,8    | 9,5     | 9,4     |
| Հայաստ. Ս. Ս. Հ. | 17,4    | 11,2    | 10,1    |

Պետական և կոոպերատիվ կազմակերպությունների պայքարը մեծածախ վաճառքի բնագավառում մեր տնտեսության մասնավոր կապիտալիստական հատվածի դեմ, ինչպես տեսնում ենք, զարգանում է բավականին հաջող. այստեղ բոլոր սոցալիզմություններն առաջինների կողմն են, մասնավոր առևտրականը հարկադրված է հանձնել մեկը մյուսի հետևից իր դիրքերը և վոչ մի հիմք չկա յենթադրելու, թե մասնավոր առևտրականին կհաջողվի հետ վերցնել կորցրած դիրքերը կամ կանգ տանել հետադարձ շարժման մեջ: Այլ բան է մանրածախ առևտուրը: Այս բնագավառում մասնավոր առևտրականը շատ ուժեղ է յեղել. այստեղ նրա դեմ չեն կարող կռվել պետական որգաններն իրենց ծանր ապարատներով. մանրածախի ասպարիզում կռվի ամբողջ ծանրությունն ընկնում է կոոպերացիայի ուսերին: Կոոպերացիան պետք է իր գործունեությունը ծավալի այնտեղ, վորտեղ սպառողը շփման մեջ է մտնում արտադրողի հետ, վորտեղ փոխանակություն է տեղի ունենում արդյունաբերության և գյուղատնտեսության միջև: Կոոպերացիան ու արտադրանքների: Գների իջեցման, մեծածախ և մանրածախ գների միջև սեղմելու համար մղվող պայքարի հաջողությունը նույնպես կախված է կոոպերացիայի յենանդից, նրա կազմակերպչական ընդունակություններից, ազդեցության շրջանի լայնացումից:

Ահա թե ինչու յեն առանձնապես թանկ և նշանակալից այդ ճակատում յերևան յեկող հաջողությունները:

Պետառևտրի մասնակցությունը մանրածախի մեջ 1923/24 թ. արտահայտվել է 7,7 % -ով, 1924/25 թ. պետառևտուրը մանրածախի մեջ կազմել է 9,4 % -ով, իսկ 1925/26 թ. 11,7 % -ով: Տեսակարար կշռի բարձրացման հետ միասին աճել են նաև բացարձակ թվերը՝ 1500 հազար ուրբլուց (1923/24 թ.) 4000 հազար ուրբլու (25/26 թվականին):

Կոոպերացիայի մանրածախ շրջանառությունները 1923/24 թ. հասնում էին 6000 հազար ուրբլու, կազմելով բոլոր շրջանառությունների 30,8 % -ը: Հետևյալ 1924/25 թ. կոոպերացիան ուժեղ թռիչք է գործում. նրա մասնակցությունը մանրածախի մեջ աճում է մինչ 44,9 % -ով, այն ժամանակ, յերբ շրջանառությունները հասնում են 11,000 հազար ուրբլու, 1925/26 թ. կոոպերացիայի շրջանառությունները կազմում են 49,0 % -ով, այսինքն 16,800 հազար ուրբլու. այսպիսով պետական և կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք 1923/24 թ. մանրածախի մեջ մասնակցում էին 38,5 % -ով,

բարձրացրել են հետագա յերկու տարվա ընթացքում իրենց մասնակցությունը 60,7 % -ի (1925/26 թ.): Մասնավոր առևտրականը հարկադրված էր մեծապես յիջել իր դիրքերը, — 1923/24 թ. նա 12000 հազար ուրբլու. շրջանառություն ունի, իսկ 1924/25 թ. այդ շրջանառություններն ընկան վոչ միայն հարաբերական առումով (61,5 % -ից մինչև 45,7 տոկոս), այլ և բացարձակորեն՝ յիջելով 11200 հազար ուրբլու: Միայն 1925/26 թ., կորցնելով իր տեսակարար կշռի վերաբերմամբ (մասնակցությունը 39,3 տոկոս) մասնավոր առևտրականը բացարձակ թվերով մի փոքր բարձրացրեց իր շրջանառությունները մինչև 13,500 հազար ուրբլու: Մանրածախի վերաբերմամբ մեր ունեցած շրջանառությունների համեմատությունը Միության նույն տեսակի շրջանառությունների հետ ցույց է տալիս պրոցեսների համեմատություն:

Մասնավոր կապիտալի միջնորդական շրջանառությունը Ս. Ս. Հ. Մ. և Հայաստանի Ս. Ս. Հ. մեջ 1923/24—1925/26 թ.

|                  | Տոկոսներով |         |         |
|------------------|------------|---------|---------|
|                  | 1923/24    | 1924/25 | 1925/26 |
| Ս. Ս. Հ. Մ.      | 58,6       | 44,3    | 38,8    |
| Հայաստ. Ս. Ս. Հ. | 61,5       | 45,7    | 39,3    |

Այն մի փոքր ավելի մեծ դերը, վոր մեզանում մասնավոր կապիտալը խաղում է մանրածախի բնագավառում, Միության հետ համեմատած, բացատրվում է պետական մանրածախի թույլ մասնակցությամբ: Բարենպաստ գնահատական տալով պետական և կոոպերատիվ կազմակերպությունների աճման հեռանկարին մասնավոր առևտրականի դեմ մղվող պայքարում, մենք, այնուամենայնիվ, չենք սխալվել, յեթե ընդգծենք, վոր այստեղ կռիվն անհամեմատ ավելի դժվար կլինի, քան թե մեծածախ վոր մանրածախի մեջ և հեշտությամբ փոխելով իր պայայանը շատ արագ է ոգմագործում ամեն մի սխալ, վոր անում են պետական և կոոպերատիվ կազմակերպությունները, — նա առանձնապես կենսունակ է մի քանի այնպիսի բնագավառներում, վորոնք դժվարությամբ են յենթարկվում կարգավորման, որինակ, հայթայթումների բնագավառում: Դժբախտաբար նյութերի ազքատ անկյունը հնարավորություն չի տալիս մեզ ավելի մանրամասն լուստարանելու այս կարևոր խնդիրը: Մի բան անտուրազույս է՝ պետորգաններն ու կոոպերացիան խոշոր հաղթանակներ են ունեցել մասնավոր առևտրականի վերաբերմամբ, — տնտեսության զարգացման հետ միասին կռիվը դառնալու յե ավելի դժվար, — բայց և այնպես կոոպերացիան ունենալով գրաված դիրքերը և բոլոր բարենաջող պայմաններ, այդ պայքարից զուրս կգա հաղթանակող:

Ամփոփելով մեր ասածները, տեսնում ենք, վոր 1925/26 թ. պետական և կոոպերատիվ առևտուրը միասին ունեցել են 56.500 հազար ուրբլու շրջանառություն, վոր կազմում է ընդհանուր ապրանքաշրջանառության 76,4 % -ը, մասնավոր առևտրականին մնացել է 23,6 % -ով. մինչդեռ պետական և կոոպերատիվ կազմակերպությունների շրջանառությունները աճել են 1924/25 թ. առ նախընթաց տարին 119 % -ով, մասնավոր առևտրականն աճել է միայն 1 % -ով. 1925/26 թվ. պետական և կոոպերատիվ առևտուրը աճում են 52 % -ով, իսկ մասնավոր առևտրականը 23 % -ով:



ԲՈՐՍԱՅԻՆ ԱՌԵՎ- 1924/25 թ. բորսայում արձանագրված են գործարքներ 16.076,5 հազար ռուբլի գումարի, 1925/26 թ. բորսային գործարքների գումարը աճել է 20%-ով, կազմելով 19.258,9 հազար ռուբլի: Այդ գործարքները հետևյալ կերպ են բաշխվում պայմանագրերների (контрагент) միջև՝

Լենինականի և Յերևանի բորսաների շրջանառությունները ըստ պայմանագրերների 1924/25 և 1925/26 թ. թ. ընթացքում (հազար ռուբլին.)

| Վաճառողներ      |                 |                 |
|-----------------|-----------------|-----------------|
|                 | 1924/25 թ.      | 1925/26 թ.      |
| Պետորգաններ     | 14,199,2        | 15,403,7        |
| Կոոպերացիա      | 594,6           | 1.767,0         |
| Մասնավոր առևտր. | 1.282,7         | 2.088,2         |
| <b>Ընդամենը</b> | <b>10.076,5</b> | <b>19.258,9</b> |
| Գնորդներ        |                 |                 |
|                 | 1924/25 թ.      | 1925/26 թ.      |
| Պետորգաններ     | 6.814,4         | 7.484,7         |
| Կոոպերացիա      | 6.236,3         | 7.888,7         |
| Մասնավոր առևտր. | 3.025,8         | 3.885,5         |
| <b>Ընդամենը</b> | <b>16.076,5</b> | <b>19.258,9</b> |

Աղյուսակից յերեվում է, վոր ամբողջ վաճառքը կատարվում է բացառապես պետորգանների կողմից՝ նրանց մասնակցությունը վաճառքի մեջ կազմում է 1924/25 թվ. համար 88,3 տոկ., կոոպերացիայի մասնակցությունն արտահայտվում է 3,7 տոկոսով, մասնավոր առևտրականների մասնակցությունը 8,0 տոկոսով: Հետևյալ 1925/26 թվ. այդ դրությունը առաջվա նման պահպանում է իր ուժը, թեպետև պետորգանները վորոշ չափով կորցնում են իրենց տեսակարար կշիռը՝ նախընթաց տարվա համեմատությամբ նրանց շրջանառությունները բարձրանում են 8 տոկոսով, բայց նրանց բաժինը ընդհանուր վաճառքի մեջ պակասում է, կազմելով ընդամենը 80 տոկոս: Բավական ուժեղ կերպով զարգանում է կոոպերացիան՝ նրա շրջանառությունները բարձրանում են 197 տոկոսով, իսկ մասնակցությունն բաժինը 5,4 տոկոսով (3,7 տոկոսից — 9,1 տոկոս): Մասնավոր առևտրականը ևս մի փոքր մեծացնում է իր տոկոսը 8-ից 10,4 տոկոս, ընդամենն մասնավոր առևտրականի շրջանառությունները աճում են 63 տոկոսով:

Գնումները բոլոր մասնակիցների միջև բաշխվում են հետևյալ կերպ: Պետորգաններին բաժին է ընկնում բոլոր գնումների 42,4 տոկոսը, կոոպերացիան գնում է 38,8 տոկոսը, մասնավոր առևտրականները — 18,8 տոկոս: Հետևյալ 1925/26 թ. փոքրիկ տեղափոխություն է կատարվում, վորի հետևանքով առաջին տեղն է գրավում կոոպերացիան — բոլոր գնումների 41 տոկոսը, այնուհետև գալիս են պետորգանները — 38,8 տոկոս և մասնավոր առևտրականները — 20,2 տոկոս: Այս ավյալներն, անտարակույս, թույլ չեն տալիս յեզրակացություններ անելու կատարվող պրոցեսների բնույթի մասին: Չափազանց քիչ դիտողություններ կան (ընդամենը յերեվում տարվա վերաբերմամբ) և բացի վրանից բորսային առևտուրն ինքնին ունի սպեցիֆիկ բնույթ ու իր առանձնահատկությունները, վորոնք պետք է հաշվի առնվեն վորպեսզի հնարավոր լինի ձիշտ յեզրակացությունների գալ:

Արդյունաբերական բնույթ կրող ապրանքների գործարքները կազմում են բոլոր գործարքների ավելի քան  $\frac{2}{3}$ -ը:

|                    | 1924/25 թ.   | 1925/26 թ.    |
|--------------------|--------------|---------------|
| Գյուղատնտեսական    |              |               |
| ապրանքներ          | 4.343        | 3.974         |
| % առ ընդհանուր     |              |               |
| գումար             | 27,0         | 20,6          |
| Արդյունաբերական    |              |               |
| ապրանքներ          | 11.734       | 15.284        |
| % առ ընդհան. գում. | 73,0         | 79,4          |
| <b>Ընդամենը</b>    | <b>16076</b> | <b>19,258</b> |
| % առ ընդհան. գում. | 100,0        | 100,0         |

Պետք է նշել այստեղ, վոր բամբակագործական շրջանները ներածավող հացահատիկի և Հայաստանից արտահանվող բամբակի նկատմամբ կատարվող վոշ բոլոր գործարքներն են ցուցակագրվում Հայաստանի բորսաների կողմից, — նրանց մի մասը չի հաջողվում արձանագրել, վորպիսի հանգամանքը մի կողմից՝ նվազեցնում է բորսային գործարքների չափը, իսկ մյուս կողմից՝ գերակշռություն է տալիս արդյունաբերության ապրանքներին: Այժմ տեսնենք, թե վորպիսի ապրանքներ են հանդիսանում բորսային գնումների և վաճառքի առարկա:

Հ.Ա.Ս.Հ. բորսաների շրջանառությունները 1924/25 և 1925/26 թ.թ. ըստ ապրանքների (հազար ռուբլիներով).

|                         | 1924/25         | 1925/26         |
|-------------------------|-----------------|-----------------|
| Հացամթերքներ            | 2.386,8         | 1.900,7         |
| Այլ անդամթերքներ        | 488,9           | 1.133,6         |
| Բակալ. և կոլոնյալ ապ.   | 5.410,1         | 3.540,3         |
| Մանածագործական ապ.      | 5.424,1         | 7.161,7         |
| Քիմիական և մոսկատ       | 176,3           | 724,3           |
| Քիմիական և մետաղ. իրեր  | 232,4           | 1.406,4         |
| Մետաղներ և մետաղ. իրեր  | 202,9           | 671,3           |
| Շինամիս                 | 292,5           | 353,1           |
| Այլ շինարարական նյութեր | 197,7           | 289,9           |
| Վառելիք                 | 296,6           | 834,8           |
| Կաշի և կաշվեղեն         | 968,5           | 1.242,8         |
| <b>Այլ ապրանքներ</b>    | <b>16.076,0</b> | <b>19.258,9</b> |

Այս աղյուսակի մանրագնանին քննությունը ցույց է տալիս, վոր բորսայական շրջանառության հիմնական ապրանքներ հանդիսանում են զլխավորապես մանածագործական ապրանքները, հացամթերքները և բակ-կոլոնյալ ապրանքները: Մանածագործական ապրանքների գործարքները 1924/25 թ. կազմում են բոլոր գործարքների 33,8 %-ը, իսկ 1925/26 թ. — 37,2 %: Բակ-կոլ. ապրանքները 1924/25 թ. կազմում էին 33,7 %, հե-37,2 %: Բակ-կոլ. ապրանքները 1924/25 թ. կազմում էին 18,4-ի: Հացամթերքները 14,9%-ից տեղյալ տարում այդ տոկոսն իջնում է 9,9 %-ի. ընդհանուր առմամբ թված (1924/25 թ.) նմանապես իջնում են 9,9 %-ի. ընդհանուր առմամբ թված յերեք ապրանքները տալիս են միջին թվով բոլոր գործարքների 65-ից մինչեվ 80%: 1924/25 թ. մինչեվ 1925/26 թ. աճեցումն ունի ապրանքների մեջ ուշադրություն արժանի են մետաղները և մետաղյա ապրանքները, այդ ավելացումը հաճախորեն արդյունք է մեր հիդրոկայանի պատվերների. շին-



նարարական նյութերի մասնակցությունը ածուծը ասլանքաշրջանառություն մեջ հասկանալի չէ և բացատրություն կարիք չունի:

**ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՆՅՆՆԵՐ ԿԱՐԵՐԱԳՈՒՅՆ ԱԿՏԱԿԱՆ և ԿՈՊԱԵՐԱՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Եթե ձեռնարկությունների վաճառքային շրջանառությունների շրջանառությունները, այն ձեռնարկությունների, թիվները վերջինք գործառնություններ են կատարում թե Հայաստանում և թե նրա սահմաններից դուրս:

Այստեղ մենք ոգտվում ենք ներքառողկոմատի նյութից, վոր կոնյունկտուրային տեղեկություններ են ընդգրկում 24 ձեռնարկության վերաբերմամբ \*):

Այդ ձեռնարկությունները բաժանվում են յերկու կարգի—պետական և կոպերատիվ-պետական ձեռնարկություններն իրենց հերթին ստորաբաժանվում են՝ տեղական կազմակերպություններ և ներկայացուցչություններ: Վերջապես տեղական ձեռնարկությունները մենք ստորաբաժանում ենք յերկու մասի—առևտրական և արտադրական: Սկսենք այս վերջիններից—տեղական արտադրական կազմակերպություններից: Բոլոր տեղական արտադրական կազմակերպությունները տվել են 1924/25 թ. 7241 հազար ուրբլու շրջանառություններ (այստեղ ամենուրեք նկատի են առված վաճառքային շրջանառությունները: 24 կազմակերպության վաճառքային շրջանառության մեջ դա կազմում է 31,3 տոկոս: Յեթե ավելի մանրամասն ծանոթանանք այդ խմբի շրջանառություններին, կըզտենք, վոր այստեղ կենտրոնական տեղը գրավում են Հայրամբակումի և «Արարատ» գինե-կոնյակային տրեստի շրջանառությունները:

Հայրամբակումի շրջանառություններն արտահայտվում են 4224 հազար ուրբլի գումարով, կազմելով շրջանառությունների ընդհանուր գումարի 18,3 տոկոսը (տես աղյուսակը):

Յերևան քաղաքի պետ-կոոպկազմակերպությունների վաճառքային շրջանառությունները 1924/25 և 1925/26 թ. (հազար ուրբլիներով)

|                                                   | 1924/25 թ.   | 1925/26 թ. |
|---------------------------------------------------|--------------|------------|
| Գումարը <sup>0</sup> / <sub>100</sub> առ ընդհ. գ. |              |            |
| Տեղական արտադր. սրգան. 7.240,9 31,3               | 9.006,9 25,8 |            |
| Տեղական առևտրակ. սրգան. 5.679,1 24,6              | 9.469,1 27,2 |            |
| Ներկայացուցչություններ 7.027,6 30,5               | 8.501,0 24,4 |            |
| Կոոպերացիա 3.150,2 13,6                           | 7.871,6 22,6 |            |
| Ընդամենը 23.097,8 100                             | 34.848,6 100 |            |

«Արարատ» տրեստի շրջանառությունները կազմում են 2.071 հազ. ուրբլի կամ բոլոր շրջանառությունների 9,0 տոկոսը: «Արարատ» գինե-կոնյակային տրեստի և Հայրամբակումի շրջանառությունները, վորպես

\*) Այդ ձեռնարկությունները հետևյալներն են. 1) «Արարատ» տրեստը, 2) Հայրամբակումի 3) Կաշվարգ, 4) Հայաստանառքատը, 5) Հայաստանի ժողովրդական ծխախոտի ֆաբրիկան, 6) Պոստոս, 7) Յերկոմտրեստ, 8) Գյուղատրեստ, 9) Տեղական առևտրական կազմակերպությունները 10) Հայառը 11) Գյուղատրեստ, բանկը, 12) Շինարարը, 13) Հայրամբակումի, 14) Պետրատը, 15) Անաստասյանը, 16) Համ. Տեքստիլ Սինդիկատ, 17) Շաքարատրեստը, 18) Պետրանկի հայկական գրասենյակը, 19) Վրաստանի ժողովրդական ծխախոտատրեստը, 20) Անդրպետատը, 21) Անդրպետ. մեք. (Закселемаш), 22) Հայկոպ, 23) Հայգյուղկոպ և 24) Պանիրյուղկոնտրոն:

խոշոր կազմակերպությունների՝ վորոշում են տեղական արտադրական կազմակերպությունների խմբի վիճակը, ուստի ե այդ կարգի այլ կազմակերպությունների վրա մենք կանգ չենք առնի:

1925/26 թ. ամբողջ քննվող խումբը տալիս է շրջանառությունների ավելացում 24,0 տոկոսով (7 241 հազար ուրբլուց հասնում է 9007 հազ. ուրբլ.), սակայն, այդ ավելացումն իր տեմպով յետ է մնում ընդհանուր աճումից, և տեղական արտադրական կազմակերպությունների տեսակարար կշիռը վաճառքի մեջ ընկնում է 31,3 տոկոսից 25,8 տոկոսի: Այստեղ այդ անկման պատճառ է հանդիսանում Հայրամբակումի, վոր 1925/26 թվ. միայն 3.999,9 հազար ուրբլու է բամբակ վաճառել, այսինքն ավելի փոքր գումարի, քան նախընթաց տարում: Հայրամբակումի շրջանառությունները ընդհանուր շրջանառության 11,5 տոկոսն են կազմում առաջվա 18,3 տոկոսի փոխարեն:

«Արարատ» գինե-կոնյակային տրեստը, մեծացնելով վաճառքային շրջանառությունները, 1925/26 թվին ես պահպանում է իր դրույթունը ընդհանուր շրջանառության մեջ: Նրա շրջանառությունները աճում են 53 տոկոսով (2071 հազար ուրբլուց հասնում են 3173 հազար.), իսկ մասնակցության տոկոսը ավելանում է 0,1-ով (9 տոկոսից—9,1 տոկոս):

Տեղական առևտրական կազմակերպությունները 1924/25 թ. 5679 հազար ուրբլու շրջանառություն են ունեցել, վոր կազմում է բոլոր շրջանառությունների 24,6 տոկոսը. տեղական առևտրական կազմակերպությունների մեջ աչքի չեն ընկնում: Հայառը, վորի բաժինը 2781 հազար ուրբլի չէ անում կամ ամբողջ շրջանառության 12,0 տոկոսը: 1925/26 թ. տեղական առևտրական կազմակերպությունների շրջանառությունները բարձրացան 9469 հազար ուրբլ. ըստ վորում միաժամանակ բարձրանում է և նրանց մասնակցությունը շրջանառությունների մեջ 24,6 տոկոսից 27,2 տոկոսի. այդ ավելումը ամբողջովին ընկնում է Հայառին, վոր 1924/25 թվ. համեմատությամբ մեծացնում է իր շրջանառությունները 125 տոկոսով (2781 հազար ուրբլուց հասնելով 6250 հազար ուրբլու):

Հայառի մասնակցությունը ընդհանուր շրջանառության մեջ հասնում է արդեն 17,9 տոկոսի: Ընդհանուր առմամբ տեղական առևտրական արտադրական ուղղանների շրջանառությունները կազմում են 1924/25 թ. շրջանառությունների 55,9 տոկոսը և 1925/26 թ.—53 տոկոսը: Տոբոլոր շրջանառությունների բացարձակ աճման պարագայում կոնսերի այս անկումը շրջանառությունների բացարձակ աճման պարագայում վերաբերում է արտադրական կազմակերպություններին ու նախ և առաջ Հայրամբակումին:

Ներկայացուցչությունների շրջանառությունները 1924/25 թ. հասնում են 7028 հազ. ուրբլու, կազմելով բոլոր շրջանառությունների 30,5 տոկոսը: Հիմնական տեղն այստեղ պատկանում է Համ. Տեքստիլ Սինդիկատին, վորի շրջանառությունները տոն են տալիս կազմակերպությունների այս խմբին:

Այս գումարից հիշված Սինդիկատին բաժին է ընկնում 4095 հազար ուրբլի, այսինքն բոլոր շրջանառությունների 17,7 տոկոսը: Ներկայացուցչությունների շրջանառությունների աճումը յետ է մնում ընդհանուր աճումից և զրա հետևանքով ընկնում է նրանց մասնակցությունը ընդհանուր շրջանառության մեջ 30,5 տոկոսից 24,4 տոկոսի: Շրջանառությունների դանդաղումն այստեղ կախված է BTC—ից, վոր իջեցրել է իր մասնակցությունը ընդհանուր շրջանառության մեջ 1925/26 թ. 17,7 տոկոսից մինչև 13,9 տոկոս:



Այս խմբի մնացած մասնակիցների վրա կանգ չենք առնի: Պետր-  
զաններից անցնենք կոոպերացիային:

Կոոպերացիայի շրջանառությունները 1924/25 թ. բավականին հա-  
մեատ տեղ են բռնում ընդհանուր շրջանառության մեջ: Կոոպերացիան  
վաճառում է 3150 հազար ռուբլու, վոր կազմում են բոլոր շրջանառու-  
թյունների 13,6 տոկոսը:

Այս գումարից Հայկոոպին բաժին է ընկնում 3053 հազար ռուբլի,  
Հայգյուղկոոպին՝ 97,1 հազար ռուբլի: Հետևյալ 1925/26 թ. յերևան է  
բերում կոոպերատիվ շրջանառությունների զգալի աճում: Հայկոոպի շր-  
ջանառություններն ավելանում են և հասնում 6350 հազար ռուբլու, Հայ-  
գյուղկոոպի շրջանառությունները հասնում են 1363 հազար ռուբլու, դրա  
համապատասխան բարձրանում է նաև նրանց տեսակարար կշիռը ընդհա-  
նուր ապրանքաշրջանառության մեջ՝ Հայկոոպին հասնում է 18,2 տոկո-  
սի, Հայգյուղկոոպին՝ 3,9 %: Երկուսից, ամբողջ կոոպերացիան իր մաս-  
նակցությունը ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ բարձրացրել է  
22,6 տոկոսի: Իր աճման տեմպով կոոպերացիան յետ և թողնում բոլոր  
այլ կազմակերպությունները: Առանձնապես բուռն աճում է յերևան բե-  
րում գյուղատնտեսական կոոպերացիան:

Այս և վաճառքի շրջանառության պատկերը Հայաստանում գտնվող  
24 կարևորագույն պետական և կոոպերատիվ կազմակերպությունների՝  
հաշվետու յերկու տարվա համար: Վերը քննության առնված վաճառքի  
ընդհանուր շրջանառությունների համեմատությունը կարևորագույն ձեռ-  
նարկությունների շրջանառության հետ թույլ է տալիս անել մի քանի  
հաստատուն յեզրակացություններ: Նախ և առաջ անտարակույս է, վոր  
ապրանքաշրջանառությունը ընդարձակվում է, 1924/25 թվի համեմատու-  
թյամբ ապրանքաշրջանառությունը ավելացել է մեկ և կես անգամ: Մյուս  
կողմից ապրանքաշրջանառության ընդարձակումը կատարվում է առավել-  
ապես կոոպերացիայի գծով, մասնավոր առևտրականը կորցրել է իր բոլոր  
գիրքերը մեծածախ բնագավառում, բայց դեռևս գիմանում է մանրածախի  
ապարիզում, թեև այդտեղ ևս կոոպերացիան նրան ուժեղ հարվածներ է  
հասցնում:

Նկատի առնելով կոոպերացիայի նշանակության շարունակական աճումը  
և այն կարևորագույն դերը, վոր նա պետք է խաղա և խաղում է մեր տնտե-  
սության մասնավոր-կապիտալիստական հատվածի դեմ մղվող պայքարում,  
մի փոքր ավելի մանրամասն կանգ առնենք կոոպերացիայի վրա:

**Կոոպերացիա:** Թե սպառողական և թե գյուղատնտեսական կոոպե-  
րացիան Հայաստանում վերջին յերկու տարվա ընթացքում ունեցել են  
լայն զարգացում: Բավական է միայն համեմատել կոոպերատիվ ցանցի կա-  
ցությունը յերկու-յերեք ժամկետի վերաբերյալ և մենք կհամոզվենք այդ  
բանին:

Հայաստանի գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի կա-  
ցությունը (կազմակերպ. քանակը).

|                               | I/X 1924 թ. | I/X 1925 թ. | I/X 1926 թ. |
|-------------------------------|-------------|-------------|-------------|
| Սպառող. կոոպ. խանութների թիվը | 158         | 277         | 309         |
| Գյուղատնտ. կոոպ. ընկ. թիվը    | 76          | 147         | 205         |

Առանձնապես արագ են աճում սպառողական կոոպերացիայի բնա-  
գավառում գործարանային և գյուղական կոոպերատիվները: Վերջիններիս,

այսինքն գյուղական կետերի թիվն աճել է, 91-ից (1924 թ.) հասնելով  
201-ի, գավառական կենտրոնական կետերի թիվը ավելի քան կրկնապատ-  
կվել է, 25-ից հասնելով 57-ի: Միայն բանկոոպների խանութների թիվն է  
մնացել անփոփոխ. այդ թիվը առ 1 հոկտ. 1924 թ. 34 էր, առ 1-ն հոկտ.  
1925 թվ. դարձավ 33: Գյուղատնտեսական կոոպերացիայի գծով աճում են  
ցուցահանում կաթնարտերները, 33-ից հասնելով 72-ի: Այնուհետև գա-  
լիս են վարկային ընկերությունները, ծխախոտագործների, մեղվաբուծների  
և այգեգործների ընկերությունները: Բացի դրանից յերևան են յեկել  
գյուղատնտեսական միավորների նոր տեսակներ, միավորներ, վորոնք մինչ  
այդ տարածված չեն յեղել, ինչպես բամբակագործների և մեքենագորտ-  
գործման ընկերությունները:

Կոոպերատիվների աճման հետ միաժամանակ ել ավելի արագ թափով  
աճում է կոոպերացված տնտեսությունների քանակը:

Սպառողական և գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների թիվը

|                   | 1/X 1924 թ. | 1/X 1925 թ. | 1/X 1926 թ. |
|-------------------|-------------|-------------|-------------|
| Սպառող. կոոպերատ. | 25 404      | 45.807      | 65.749      |
| Գյուղատնտես կոոպ. | 9.179       | 19.153      | 30.075      |

Շարունակաբար տնտեսությունների ավելի և ավելի մեծ քանակ է  
գրավվում կոոպերատիվ շինարարությամբ:

Սպառողական կոոպերացիայի մեջ ամենից շատ անդամ ունեն գյու-  
ղական սպառողական ընկերությունները—42,5 հազար, այնուհետև ար-  
դեն գալիս են բանկոոպներն ու կոոպերացիայի այլ տեսակները. առանձ-  
նապես ինտենսիվ աճում ունեն գործարանային և գյուղական կոոպերա-  
տիվների անդամների թիվերը: Գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ ըստ  
անդամների թվի առաջին տեղը գրավում են վարկային ընկերությունները,  
վորոնց ընկնում է բոլոր անդամների ավելի քան կեսը՝ 18.156, հետո գա-  
լիս են կաթնարտերները — 5742 տնտես: Ընդհանուր առմամբ առ  
լիս են կաթնարտական կոոպերատիվների անդամների  
1-ն հոկտ. 1925 թվ. գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների  
թիվը ավելացել է նախընթաց տարվա համեմատությամբ 109 %-ով, նույն  
ժամանակամիջոցում սպառողական կոոպերատիվների անդամների թիվը  
ավելացել է 80 %-ով: հետևյալ տարին մենք աճման դանդաղում ենք նը-  
կատում գյուղատնտեսական կոոպերացիան, տալիս է 57 % հավելում  
(1925 թվ. հոկտեմբերի տվյալների համեմատությամբ), իսկ սպառողական  
կոոպերացիան 43 %:

Աճեցողության այսպիսի դանդաղումը չի վկայում կոոպերատիվ շի-  
նարարության թուլացման մասին, ընդհակառակն, այդ դանդաղումը ամ-  
րացման և հետագա առաջընթացության համար կատարվող ուշժերի կու-  
տակման նշան է: Դրան համոզում է մեզ կոոպերացիայի ֆինանսական  
դրության վերլուծությունը:

Սպառողական կոոպերացիայի սկզբնական ցանցի ֆինանսական դրու-  
թյունը ըստ Հայկոոպի (հազ. ռուբլ.)

|                     | 1/X 1924 թ.  | 1/X 1925 թ.    | 1/X 1926 թ.    |
|---------------------|--------------|----------------|----------------|
| Սեփական միջոցներ    | 258,3        | 528,6          | 930,7          |
| Դրանց թվում փայտված | 61,3         | 136,9          | 235,3          |
| Փոխառիկ միջոցներ    | 719,3        | 1.411,1        | 1.688,7        |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>     | <b>977,6</b> | <b>1.939,7</b> | <b>2.619,4</b> |

Այդ թվում շրջանառության  
մեջ գտնվող գումարները

|  |       |         |         |
|--|-------|---------|---------|
|  | 935,2 | 1.734,4 | 2.332,1 |
|--|-------|---------|---------|



Ստորին ցանցի շրջանառություներն ըստ մանրածախ վաճառքի և  
դնման (հազար ոսկր.):

|                             | ԳՆՈՒՄՆԵՐ |          | ՎՆՈՒՄ   |          |
|-----------------------------|----------|----------|---------|----------|
|                             | 1924/25  | 1925/26  | 1924/25 | 1925/26  |
| Բանկոտայնք . . . . .        | 3.547,4  | 3.910,9  | 3.616,2 | 4.835,1  |
| Գործարան. կոոպ. . . . .     | 276,6    | 765,7    | 265,1   | 859,5    |
| Գավառ, կենար. կոոպ. . . . . | 1.594,8  | 2.143,6  | 1.705,3 | 2.403,1  |
| Գյւղական կոոպ. . . . .      | 2.971,4  | 4.908,6  | 3.025,6 | 5.510,1  |
| Ընդամենը . . . . .          | 8.390,2  | 11.728,8 | 86.12,2 | 13.607,8 |

Գնման շրջանառությունները 1924/25 թվ. մինչև 1925/26 թ. ավելացել են 40 տոկոսով: Առանձնապես մեծ աճում են ցուցահանում ալյտեղ գործարանային կոոպերատիվները՝ 177 տոկոսով, և գյուղականները՝ 60 տոկոսով: Վաճառքի շրջանառությունները բարձրացել են 58 տոկ., ալյտեղ և ամենաուժեղ աճումն ցույց են տալիս գործարանային կոոպերատիվները 224 տոկոսով և գյուղականները 82 տոկոսով:

ԳՆԵՐԸ ՅԵՎ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ

Գների ուսումնասիրութիւնը հանդիսանում է մեր տնտեսութեան մեջ կատարվող պրոցեսների պարզաբանման միջոցներից մեկը:

Սակայն, հաժազանց դժվար է գնորի շարժման տեսությունը տալ վերջին յերկու հաշվետու տարվա վերաբերմամբ: Դժվարությունները կայանում են հետևյալում:

Երջանառության բնագավառում որին աշակերտ յունները սահմանելու առաջին արգելափակ պատճառն այն է, Վոր չբերորդական հանգամանքներն ու պատահական յերեւոյթները դադարեցնում կամ թուլացնում են ընդհանուր պատճառների գործողութիւնը:

Յերկրորդ պատճառը վերաբերվում է արդեն իր իսկ նյութի վորակի  
խնդիրներին:

Հ. Ս. Խ. Հ. Պետպլանի Կոնյուկտուրային Բյուրոն իր աեսությունների մեջ քանիցս ընդգծել է ինդեքսների կառուցման մեթոդների անճշտությունը և այն հանգամանքը, վոր բյուջեական հավաքը չի համապատասխանում կյանքի փոփոխված պայմաններին: Ներկայումս այդ թերությունները ճանաչված են ամենքի կողմից, և աշխատանք է կատարվում նրանց վերացման համար:

Բայց ինդեքսների՝ մեթոդոլոգիական տեսակետից անգամ թերի կատարած կառուցումը կարող եր գործնական նշանակություն ունենալ, յեթե միայն կառուցման յեղանակները բավարար լինեյին տեխնիքական տեսակետից: Դժբախտաբար, այդ չի կարելի ասել:

Այս յերկու տարվա՝ 1924/25 և 1925/26 թ. վերաբերմամբ կատարած ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչ դժվարություններ են զգացվում ինդեքսները կազմելիս: Շատ հաճախ միանգամայն բացակայում են այնպիսի ապրանքներ, վորոնք յենթակա յեն ուսումնասիրություն և վորպես բաղկացուցիչ մաս մտնում են ինդեքսի մեջ. յերբեմն թյան և վորպես բաղկացուցիչ մաս մտնում են ինդեքսի մեջ. յերբեմն կազմողը ապրանքի մի տեսակի բացակայությունը պատճառով հարկադրված է վերցնել այլ տեսակ և այլն:

Ահա վասիլկայա պատճառներն են—ինչպես որ յեկտիվ (պարանքների կամ նրանց վորոշ տեսակների պակասութիւն), նույնպես և սուր յեկտիվ (աշխատա կիցների անպատրաստութիւն և այլն) բնույթի—վորոշ ֆարկաբրում են լինել շատ զգուշ յեզրակացութիւններ անկիրա:

Այս բոլոր նկատառումներով մինք կտանք գների ղինամիկայի  
ամենաընդհանուր բնութագիրը, կանգ առնելով մեծածախի և մանրածախի  
մկրատի, գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների  
տարբերությունների խնդիրներին վրա: Այն ընթերցողը, վոր չի բավարարվի  
այս ընդհանուր դատողություններով, պետք է դիմե հենց ազդուսականներին,  
վորտեղ շատ տեղ է հատկացված գների ղինամիկային:

Քննությունն անցնելով հաշվետու յերկու տարվա վերաբերմամբ գոյու-  
թյուն ունեցած գները, մենք բավականին նկատելի աճումն ենք տեսնում  
կենդանական մթերքների գների, — մանավանդ վերջին ժամանակներս:  
Դրա հետևանքով գույղատնտեսական ապրանքների ինդեքսը ուժեղ տա-  
տանումներ չի կրում, վերովհետև այդպիսի թանկացումը մասամբ, հավա-  
սաբար կապվում է հացահատիկների և ալյուրի եժանացմամբ, վորպիսի հան-  
գամանքը հետևանք է լավ բերքերի: Կենդանական մթերքների գների ա-  
ճումանքը հետևանք է լավ բերքերի: Կենդանական մթերքների գների ա-  
ճումը, վոր առանձնապես ակներև արտահայտվում է քաղաքներում, նկատ-  
վում է նաև Միություն մեջ, բայց մեղանում, նա, մեր մի քանի առան-  
ձնահատկությունների շնորհիվ դառնում է ավելի աճի ընկնող յերևույթ:

Գնեբրի աճուժը մեզանում առաջանում է պահանջի և առաջարկի միջև յեղած հավասարակշռության խախտումից, մի հանգամանք, վոր չի կարող համարվել ժամանակավոր յերևույթ: Վերջին տարիների ընթացքում Հ.Ս.Խ.Հ.-ում սաստիկ ընդարձակվեց քաղաքային շուկան՝ ավելի քան յերկու անգամ: Իսկ կենդանաբուծության և բանջարաբուծության մթերքներ կուտանգամ: Իսկ կենդանաբուծությունը դեռևս ի վիճակի չի յեղել վերաշուկա հանող գյուղատնտեսությունը դեռևս ի վիճակի չի յեղել վերաշուկա հանող գյուղատնտեսությունը Սհա այս անհամապատասխանությունն է, վոր վեր է մղում կենդանական մթերքների և բանջարաբուծության, վոր վեր է մղում կենդանական մթերքների և բանջարաբուծության ներքին: Արդյունաբերությունն առարկաների գների իջեցման վերաբերմամբ մեր նյութերը ճիշտ պատկեր չեն տալիս: Համեմայն դեպս մի բան պարզ է. յեթե գների իջեցում մեզանում կա էլ, ապա նա շատ աննշան է: Ավելի ճիշտ կլինեք ասել, թե մեզանում գների կայուն դրություն է նկատվում:

Կոռպորատիվ գների և մասնավոր շուկայի գների տարբերությունը



մեզանում բավականին մեծ է, խոշոր է նաև գյուղական ու քաղաքային գների տարբերությունը: Գյուղական վայրերում (մանավանդ լեռնային մասում) գները բավականին բարձր են, այստեղ հաղորդակցության պայմաններից զատ, վորոնք առաջացնում են այդ թանկությունը,—նշանակալից թույլ ունի նաև սեզոնային գերազանցը, վոր սնում է մասնավոր առևտրականին: Դա կարելի է դիտել ամսական գներից: Կոոպերատիվում ապրանքների պակասություն յեղած գեպքում, մասնավոր առևտրականի գներն իսկույն թռչում են վերև: Սաստիկ տատանումներ կրող մթերքներից հիշատակենք աղը, մանուֆակտուրան, շինարարական վորոշ նյութեր: Բացի այն աղյուսակներից, վոր մենք այստեղ դետեղում ենք, գոյություն ունեն մի շարք նյութեր, վորոնք կարող եյին ոգտագործվել տեսություն համար, սակայն այդ բոլոր տվյալները, մեր կարծիքով, վատորակ են:

26/27-րդ տարին մենք մտնում ենք գների խնդրի նկատմամբ խըստորոշ գծով, գների իջեցման կոշտ գծով, և պետք է կարծել, վոր այդ իսկ շրջանից մեզ կհաջողվի ավելի լավ կազմակերպել գների շարժման վերաբերմամբ մեր դիտողությունները:

## ՎԱՐԿ, ԲՅՈՒՋԵ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

### Վ Ա Ր Կ Ը

Մեր տնտեսության՝ նախընթաց եջերում նշված աճումը, մի շարք ճյուղերում ունեցած մեր լուրջ հաջողությունները, առատակույս, ավելի կլինին, յեթե մենք հարկադրված չլինեյինք վարել վարկային կոշտ քաղաքականություն, վորը սակայն վերջին հաշվով աջակցող գործոն է մեր տնտեսության համար:

Նշելով այս հանգամանքը, վոր կարմիր թելի նման անցնում է բոլոր կոնյունկտուրային տեսությունների միջով, մենք, այնուամենայնիվ, պետք է ընդունենք, վոր բանկերի վարկային գործառնությունների աճումը հաշվետու ժամանակաշրջանում յեղել է բավական զգալի:

Հ.Ս.Խ.Հ. -ում գործող բանկերի հավաքական հաշվեկշիռի (сводный баланс) գլխավոր հոդվածները ցուցադրում են հետևյալը. (հազար ուրլին.)

|                             | առ I/X 1924 թ. | առ I/X 1925 թ. | առ I/X 1926 թ. |
|-----------------------------|----------------|----------------|----------------|
| Հաշվեկշիռ . . . . .         | 4.040,8        | 9.765,1        | 1.4790,1       |
| Գանձարկղը և ընթացիկ         |                |                |                |
| հաշիվ. վարկային հիմնարկ. .  | 315,7          | 438,1          | 362,4          |
| Զեղջ-փոխառու գործառն.       | 2.609,4        | 6.524,0        | 11.064,2       |
| Ավանդներ և ընթաց. հաշիվն. . | 1,314,8        | 1.754,0        | 2.568,5        |

Բանկերի հավաքական հաշվեկշիռը վերջին տարվա ընթացքում, ինչպես աղյուսակից յերևում է, աճել է 1925 թ. համեմատությամբ 51,3%-ով, իսկ 1924 թվ. հաշվեկշիռի համեմատությամբ՝ 266%-ով:

Վարկային հիմնարկների մեջ գանձարկղն ու ընթացիկ հաշիվները վերկայում են գանձարկղային պահեստների լարված կացության մասին:

Ինչ վերաբերում է ավանդներին ու ընթացիկ հաշիվներին, ապա նրանց աննշան աճումը հանդիսանում է պետարդյունաբերության նեղ դրության ցուցիչ, ինչպես և այն հանգամանքի, վոր պետառևտուրն ու կոոպերացիան շրջանառության միջոցներ չունեն բավարար չափով. բավական քիչ են նաև գյուղացիական ավանդները: Ավանդային գործառնություններն ըստ կլիենտուրայի խմբերի առ 1-ն հոկտ. 1926 թ. հետևյալ պատկերն էյին ներկայացնում.

(Հազար ուրլին.)

|                        |         |
|------------------------|---------|
| Ֆինոբանները            | 0,3     |
| Պետառևտուրը            | 233,0   |
| Պետարդյունաբերությունը | 243,3   |
| Այլ պետհիմնարկներ      | 1.444,3 |
| Կոոպերացիան            | 229,0   |
| Վարկային հիմնարկներ    | 229,0   |
| Մասնավոր կլիենտուրա    | 115,6   |
| Այլ »                  | 74,0    |

ԸՆԴԱՄԵՆԸ

2.568,5



Ստացված գումարների այսպիսի աննշան քանակի պարագայում բանկերը հարկազրկած են յեղել պահանջների բավարարման համար գերմե-  
լու գերազանցապես իրենց սեփական միջոցներին:

Զեյ, Զ-Փոն ԱՏՎԱԿԱՆ Հաշվետու շրջանի վերաբերմամբ լավ աճեցողու-  
 ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ  
 ԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Այդ գործառնությունների մնացորդը առ  
 1-ն հոկտ. 1926 թ. բացարձակապես ավելացել է 4540 հազ. ռ. կամ 85 %-ով:  
 Իսկ 1924 թվ. հոկտ. մնացորդի համեմատությամբ զեղծ—փոխառվական  
 գործառնությունները աճել են 8455 հազ. ռուբլով կամ 324 %-ով:

1925/26 թ. ընթացքում բանկերի կողմից բաց թողնված վարկերն ըստ զեղչ—փոխառվական գործառնությունների միջին թվով ընկնում են՝

Համամխութեան ձեռնարկութ, մինչև 6 տոկ.  
Աղբրկովական ,, 2 տոկ.  
Հ.Ս.Խ.Հ. ,, 92 տոկ.

Վարկավորման առանձին տեսակների նկատմամբ այդ գործառնու-  
թյունները բաշխվել են հետևյալ կերպ:

|                         | Առ 1-ն հոկտ. | առ 1-ն հոկտ. | առ 1-ն հոկտ. |
|-------------------------|--------------|--------------|--------------|
|                         | 1924թ.       | 1925 թ.      | 1926 թ.      |
| Նպատակային վարկեր       | 45,9         | 928,8        | 3.111,6      |
| Մուրհակային վարկ        | 1.319,5      | 3.070,8      | 6.394,0      |
| Ապրանքով ապահովվ. վարկ. | 519,8        | 654,4        | 754,7        |
| Արժեքներով » »          | 30,2         | 15,2         | 766,4        |
| Այլ կարգի »             | 694,0        | 1.853,8      | 37,5         |
| Ընդամենը                | 2.609,4      | 6 524,0      | 11.064,2     |

Ինչպես յերևում է այդ բերված տվյալներից, վարկավորման առան-  
ձին տեսակների մեջ ամենամեծ տոկոսը կազմում է կարճատև վարկավո-  
րումը՝ մուրհակների զեղծման ձևով:

Նշանավոր գումար են կազմում նպատակային փախտվությունները: 3111,6 հազար ռուբլի գումարը (առ 1-ն հոկտ. 1926 թ.), բաց է թողնված՝ Դյուդատնա. բանկի կողմից՝ գյուղատնտեսության համար—2.481,8 հազ. ռ. կոմունալ » » արդյունաբ. և շինար. » 629,8 հազ. ռ. Քննության յենթակա շրջանում ապրանքով ապահովված վարկերն անընդան աճեցողություն են ցույց տալիս:

Արժեքներով ապահովված վարկերի խոշոր չափով նկատվող աճումը քննության յենթակա վերջին տարվա ընթացքում, գրեթե 750 հազար ռուբլ. կազմում են Պետբանկի հատկացրած փոխատվություններն արդյունաբերություն տնտեսական վերականգնման համար:

ՎԱՐԿԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ Անցնենք վարկերի բաշխմանն ըստ կլիենտուրայի  
ԸՍՏ ՎԱՐԿԱՌԻ- խմբերի:  
ՆԵՐԻ: Ձեզ՛-փոխառվական գործառնություններին ըստ  
կլիենտուրայի խմբերի (հազար ուրբլին.)

|                          | 1924 թ. 1/X    | 1925 թ. 1/X    | 1926 թ. 1/X    |
|--------------------------|----------------|----------------|----------------|
| Պետձեռնարկություն.       | 1.288,6        | 3.506,6        | 5.827,4        |
| Կոոպերացիա               | 781,6          | 1.927,9        | 3.800,4        |
| Մասնավոր կլիենտուրա      | 432,9          | 436,7          | 530,7          |
| Կոմմունալ տնտեսություն*) | 75,2           | 313,8          | 463,9          |
| Վարկային հիմնարկներ      | 31,2           | 339,0          | 441,8          |
| <b>Ընդամենը</b>          | <b>2.609,4</b> | <b>6.524,0</b> | <b>11064,2</b> |

Ինչպես աղյուսակից յերևում է, պետձեռնարկությունների պարտքը կազմում է բոլոր զեղջ-փոխառվական գործառնությունների բարձրագույն տոկոսը: Պետձեռնարկությունների պարտքի մնացորդն առ 1-ն հոկտ. 1926 թ. կազմում է 5827,4 հազար ռուբլի, կամ բոլոր այդ կարգի գործառնությունների 52,7 տոկոսը: 1924 թ. հոկտ. 1-ի մնացորդի համեմատությամբ աճույնը կարտահայտվի 4578,8 հազար ռուբլով կամ 352 տոկոսով, 1925 թ. հոկտ. 1-ի մնացորդի համեմատությամբ՝ 2320,8 հազար ռուբլով կամ 66 տոկոսով: Կոոպերացիայի պարտքը 1926 թ. հոկտ. 1-ին հասավ 3800,4 հազար ռուբլու, կամ զեղջ-փոխառվական գործառնությունների 34 տոկոսին: Առ 1-ն հոկտ. 1924 թ. յեղած պարտքի մնացորդի համեմատությամբ աճումն արտահայտվում է 301,8 հազար ռուբլով կամ 386 տոկոս, իսկ 1925 թ. հոկտ. 1-ից—1872,5 ռուբլով կամ 97 տոկոսով:

Կոռուպցիոն հատկացված վարկերը բաշխվել են հետևյալ կերպ  
(հազ. ուրի):

|                             | Առ 1-ն հոկտ. | առ 1-ն հոկտ. | առ 1-ն հոկտ. |
|-----------------------------|--------------|--------------|--------------|
|                             | 1924 թ.      | 1925 թ.      | 1926 թ.      |
| Սպառող. կոոպերացիա          | 492          | 776          | 1.299        |
| Արհեստագործ. և գյուղ. կոոպ. | 118          | 454          | 1.094        |
| Վարկային կոոպ.              | 171          | 703          | 1.407        |

Մասնավոր անձերի պարտքը կազմում է վարկային գործառնությունների ընդհանուր գումարի աննշան տոկոսը—առ 1-ն հոկտ. 1926 թ. ընդամենը 530,7 հազ. ռուբլի կամ 4,8 տոկ : Այս գումարից պետք է հանել 290<sup>0</sup> հազ. ռուբլի գումաքը, լոր գյուղատնտեսական բանկի հաշվեկշռի մեջ է մտնում և նպատակ ունի գյուղացիությանը սերմվարկ հասցնելու : Այսպիսով, մասնավոր անձերը վարկավորվել են 240 հազար ռուբլու սահմաններում : 1924 թ. համեմատությամբ մասնավոր կլիենտուրայի պարտքն աճում է 22 տոկոսով, 1925 թ. համեմատությամբ՝ 21 տոկոսով :

ՎԱՐԿԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ, Այժմ տեսնենք, թե ինչպես են բաշխվում  
ՄԸ ԸՍՏ ԺՈՂՈՎՐԻՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐՆԵՐ ըստ Ժողովրդական տնտեսության ճյուղերի (հազ. ոտւր.):

\*) Բնակարանային շինարարություն մեծ մասամբ վարկավորվել է Ու. Ս. Հ. Մ. Կոմ-  
մունալ բանկի միջոցով և այդ պատճառով չի արտացոլվում մեր բանկերի գործունեություն  
մեջ:



|                   | Առ 1-ն X<br>1924 թ. | առ 1-ն X<br>1925 թ. | առ 1-ն X<br>1926 թ. |
|-------------------|---------------------|---------------------|---------------------|
| Արդյունաբ.        | 404,2               | 1.325,9             | 3.735,4             |
| Գյուղատնտես.      | 662,2               | 2.069,3             | 3.586,8             |
| Առևտուր           | 1.432,2             | 2.265,5             | 2.720,2             |
| Կոմմուն. տնտես.   | 75,1                | 313,8               | 463,9               |
| Վարկային հիմնարկ. | 31,2                | 339,0               | 441,8               |
| Այլը              | 4,5                 | 210,5               | 116,1               |
| Ընդամենը          | 2.609,4             | 6.524,0             | 11.064,2            |

Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի վարկավորման բնագավառում, անցյալ 1925/26 տնտեսական տարում հատուկ ուշադրություն է յեղել դարձված մեր վերականգնող արդյունաբերության վարկերի զարգացմանը: Այսպես, որինակ՝ համաձայն վերը բերված տվյալների արդյունաբերության պարտքը, վր 1925 թ. հոկտ. 1-ին կազմում էր 1325,9 հազ. ռուբլի, կամ բոլոր զեղջ-փոխառվական գործառնությունների 20,3 տոկ., ավելանալով ամբողջ տարվա ընթացքում, մինչև 1926 թ. հոկտ. մեկը, հասնում է 3735,4 հազ. ռուբլու, կամ բոլոր հիշված գործառնությունների 33,8 տոկոսը, այսպիսով մի տարում ունենալով բացարձակորեն 2409,5 հազար ռուբլու և հարաբերական իմաստով 182 տոկոս աճեցողություն: Իսկ 1924 թ. հոկտ. 1-ին յեղած մնացորդի համեմատությամբ արդյունաբերության պարտքն աճել է 3331,2 հազ. ռուբլի կամ 825 տոկոսով: Պետարդյունաբերության վարկավորումը տնտեսական տարվա ընթացքում կատարվել է առավելագույն Պետբանկի միջոցով. այդ վարկավորումը արդյունաբերության հատկացված բոլոր վարկերի 70 տոկոսն է կազմում:

Պետբանկի կողմից արդյունաբերության համար բաց թողնված 2.580,8 հազար ռուբլու ընդհանուր գումարից առ 1-ն հոկտ. 1926 թ. ընկնում էր՝

|                           |       |          |
|---------------------------|-------|----------|
| Լեռնարդյունաբերության     | մինչև | 30 տոկոս |
| Մանրարդյունաբերության     | »     | 24 »     |
| Տեքստիլ արդյունաբ.        | »     | 27 »     |
| Կաշվի արդյունաբ.          | »     | 8 »      |
| Անտառային և փայտի մշակման | »     | 3 »      |
| Երկրաբանական-արդ.         | »     | 2 »      |
| Այլ ճյուղերի              | »     | 6 »      |

Հաշվետու տնտեսական ամբողջ տարվա ընթացքում անընդհատ աճումն ցուցահանելով, գյուղատնտեսության պարտքը առ 1-ն հոկտ. 1926 թ. հասել է 3.586,8 հազ. ռուբլու, կամ զեղջ-փոխառվական բոլոր գործառնությունների 32,4 տոկոսին. 1925 թ. հոկտ. 1-ին յեղած մնացորդի համեմատությամբ նշենք աճումն՝ բացարձակապես 1517,5 հազ. ռուբ. և հարաբերաբար — 73 տոկոսով: Իսկ 1924 թ. հոկտ. 1-ի մնացորդի նկատմամբ գյուղատնտեսության հատկացված վարկերը ավելացել են 2924,6 հազ. ռուբ. կամ 442 տոկոսով:

Զեղջ-փոխառվական գործառնություններից առաջացած ընդհանուր պարտքի մեջ գյուղատնտեսության պարտքը կազմել է՝

|              |         |           |
|--------------|---------|-----------|
| Առ 1-ն հոկտ. | 1924 թ. | 25,4 տոկ. |
| »            | 1925 թ. | 31,7 տոկ. |
| »            | 1926 թ. | 32,6 տոկ. |

Գյուղատնտեսությանը հատկացված վարկերի բաշխումը.

|                                      | Առ 1-ն հոկտ.<br>24 թ. | Առ 1-ն հոկտ.<br>25 թ. | Առ 1-ն հոկտ.<br>26 թ. |
|--------------------------------------|-----------------------|-----------------------|-----------------------|
| Գյուղատնտեսներ և այլն                | 162,8 հազ. ռ.         | 612 հազ. ռ.           | 772,6 հազ. ռ.         |
| Գյուղատնտ. կոոպ. և տնայնագործ. կոոպ. | 7,8 »                 | 454 »                 | 1.094,4 »             |
| Վարկային կոոպերաց.                   | 171,6 »               | 703 »                 | 1.407,0 »             |
| Սերմավարկ գյուղացիներին,             |                       |                       |                       |
| այգեգործ., խաղողագործ.               | 320,0 »               | 300 »                 | 425,0 »               |
| Ընդամենը                             | 662,2 հազ. ռ.         | 2069 »                | 3.699,0 »             |

Հաշվետու տարվա մեջ առևտրական գործարքների հետ կապված պարտքերը նշանավոր աճեցողություն չեն ցույց տալիս:

1926 թ. հոկտ. 1-ի մնացորդը՝ 2720,2 հազար ռուբլի՝ 1925 թ. հոկտ. 1-ի վերաբերմամբ աճել է 455 հազ. ռ. կամ 20 տոկոսով:

Իսկ 1924 թ. հոկտ. 1-ի մնացորդի համեմատությամբ առևտրի համար վերցված վարկերը ավելացել են 1288 հազ. ռուբլով կամ 90 տոկոսով:

Առևտրի համար արված պարտքերը տոկոսային հարաբերությամբ վերցրած իջել են (յեթե նկատի առնենք բոլոր զեղջ-փոխառվական գործառնությունների ընդհանուր պարտքը): Այսպես, առևտրի համար արված պարտքը բոլոր զեղջ-փոխառվական գործառնությունների վերաբերմամբ կազմել է՝

|              |       |             |
|--------------|-------|-------------|
| Առ 1-ն հոկտ. | 24 թ. | 54, 0 տոկոս |
| »            | 25 »  | 34, 8 տոկ.  |
| »            | 26 »  | 24, 6 տոկ.  |

Առևտրի համար արված պարտքը բաշխվել է՝

|                    | Առ 1-ն հոկտ.<br>24 թ. | Առ 1-ն հոկտ.<br>25 թ. | Առ 1-ն հոկտ.<br>26 թ. |
|--------------------|-----------------------|-----------------------|-----------------------|
| Պետառևտուր         | 883 հազ. ռ.           | 1.435 հազ. ռ.         | 1.304 հազ. ռ.         |
| Սպառող. կոոպերացիա | 492 »                 | 770 »                 | 1.299 »               |
| Մասնավոր առևտուր   | 107 »                 | 59 »                  | 117 »                 |
| Ընդամենը           | 1.432 »               | 2.264 »               | 2.720 »               |

Բերված տվյալներից յերևում է, վր սպառողական կոոպերացիայի վարկերն աճել են վերջին հաշվետու տարվա ընթացքում կես միլիոն ռուբլով: Յեվ, ընդհանրապես, վրոշ նվազում է նկատվում ըստ պետառևտրի առ 1-ն հոկտ. 1925 թ. մնացորդի համեմատությամբ 130 հազար ռուբլու:

Կոմմունալ տնտեսության պարտքը — 463,9 հազ. ռուբլի առ 1-ն հոկտ. 1926 թ., կամ 4,2 տոկոսը բոլոր վարկային գործառնությունների, — մի տարվա մեջ աճել է 150 հազար ռուբլով կամ 48 տոկոսով: Իսկ 1924 թ. հոկտ. 1-ի մնացորդի համեմատությամբ կոմմունալ տնտեսության ստացած վարկերը 388,8 հազար ռուբլու, կամ 519 տոկ. հավելում են տվել:

Կոմմունալ տնտեսության հատկացված վարկերը բաշխվել են (հազար ռուբլին.) այսպես,

|                 | Առ 1-ն հոկտ.<br>24 թ. | Առ 1-ն հոկտ.<br>25 թ. | Առ 1-ն հոկտ.<br>26 թ. |
|-----------------|-----------------------|-----------------------|-----------------------|
| Շինարարություն  | 46                    | 223,7                 | 400                   |
| Գործկոմիտեներին | 29                    | 90,1                  | 63,8                  |
| Ընդամենը        | 75                    | 313,8                 | 463,8                 |



Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻ  
ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԸ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻ 1924/25 և 1925/26 թ. ՀՍԽ. Հանրապետության պետա-  
ՅԵԿԱՄՏՈՅԻՆ ՄԱ- կան բյուջեն արտահայտվում է հետևյալ՝ գումարներով,

| ՍԸ:                   | 1924/25 թ. | 1925/26 թ. |
|-----------------------|------------|------------|
| Սովորական յեկամուտներ | 735.810    | 2.358.483  |
| Դոտացիա               | 1.972.347  | 4.066.799  |
| Բյուջեյի ընդ. գումարը | 2.708.157  | 6.425.282  |

(1924/25 թ. վերցված և իրրե կատարված, 1925/26-ը՝ համաձայն հա-  
խատեցման)

1924/25 թ. և 1925/26 թ. պետբյուջեները համեմատելիս պետք է նկատի առնել, Վրդ զբաղված միատեսակ չեն կառուցված:

25/26 թ. ԲՅՈՋՆԵՅԻ տունն ձևահատկությունն այն է, վոր նա կազմված է բրուտտո, ալյախքն՝ պարունակում է նաև այն յեկամուտները, վորոնք պետական ԲՅՈՋՆԵՅԻց հատկացվում են տեղականին, ըստ վորում նրանց հավասար գումար է ցույց տրվում նաև ծախսի մասում:

Վերադառնալիս այդ յերկու տարիների բյուջեները համեմատելի կարելի լինի, անհրաժեշտ է 25/26 թ. բյուջեյից հանել, նրա և՛ ծախսի, և՛ յեկամտային մասից, այդ հատկացումների գումարը, ընդամենը՝ 751.731, Այդ ուղղումից հետո կստանանք հետևյալ պատկերը.

|                       |            |            |
|-----------------------|------------|------------|
|                       | 1924/25 թ. | 1925/26 թ. |
| Սովորական յեկամուտ.   | 735.810    | 1.606.752  |
| Դոտացիա               | 1.972.347  | 4.066.799  |
| Բյուջեյի ընդ. գումարը | 2.708.157  | 5.663.551  |

Այս տվյալներից յերևում է, վոր սովորական յեկամուտների աճումը 870.942 է յեղև կամ 118,5 տոկոս, իսկ գոտացիաների աճումը՝ 2.094.452, կամ 106 տոկոս: Սակայն սովորական յեկամուտների տեսակարար կշիռը վորոշ մեծացում է տալիս, վորովհետև բյուջեյի ընդ. գումարի 27,2 տոկոսի փոխարեն նրանց կշիռը բարձրանում է 28,3 տոկոսի, ի հաշիվ վորի դոտացիան 24/25 թ. բյուջեյի ընդ. գումարի 72,8 տոկոսից իջնում է 71,7 տոկոսի:

Ընդհանուր առմամբ 25/26 թ. նեատոտ բյուջեն 24/25 թ. բյուջեյի համեմատությամբ ավելանում է 2,965,394 դոլարով, կամ 109,5 տոկոսով:

Յեթե համեմատվող տարիների պետրյուՋեյի յեկամտային մասերը քննելու լինենք, կտեսնենք, վոր 24/25 թ. սովորական յեկամուտների բոլոր գումարներից հարկային (ուղղակի հարկ) յեկամուտներին ընկնում է 479.779, կամ 65,1 տոկոս, իսկ վոչ-հարկային յեկամուտներին՝ 256.011 կամ 34,9 տոկոս:

25/26 թ. ըստ բյուջեյի նշանակված (նետոտո) բոլոր սովորական յեկամուսններից հարկային յկամուսներին ընկնում է 987.602 կամ 61,4 տոկոս, իսկ վոչ-հարկայններին՝ 619.150 կամ 38,6 տոկոս:

Այդպիսով, գուտ յեկամտային մասի ընդհանուր գումարի նկատմամբ ուղղակի հարկերի վորսշ համեմատական պակասումն է նկատվում, 65,1 տոկոսից 61,4 տոկոսի և ընդհակառակն՝ վոշ - հարկային յեկամտաների աճումն՝ 34,9 տոկոսից 38,6 տոկոսի:

Ընդհանուր գումարի մեջ 25/26 թ. հարկային յեկամուսները 24/25 թ. համեմատությամբ ավելանում են 507.823-ով կամ 106 տոկոսով, վոր բացատրվում է վոչ այնքան նրանց աճումով, վորքան 25/26 թ. պետրյուէյի առանձնահատուկ (24/25 թ. հետ համեմատած) կառուցվածքով:

Այդ առանձնահատկությունն այն է, վոր մինչև 25/26 թ. գյուղատնտեսական հարկը վոչ թե պետական, այլ ֆեզերատիվ բյուջեյով էր անցնում, և միայն 25/26 թ.-ից է, վոր անցնում է Հ. Ս. Ս. Հ. պետրյուշեյով տեղերին արվող հատկացումներով: Բացի դրանց՝ 25/26 թ. յեկամտային մասուհին էն զետեղված ռենտային տուրքադրամը և ժառանգական հարկը, վորոնք 24/25 թ. վոչինչ չեն տվել:

Յեթե յեկամուտի այդ նոր աղբյուրները հանենք, վոր ընդհանուր առմամբ 472.307 ո. են տալիս, ցաղա նույնատեսակ ուղղակի հարկերի աճումը համեմատվող տարիներին հավասար է 35,616 ո. կամ 7,5 տոկոսի:

Ուղղակի հարկերի ընդհանուր գումարի մեջ 25/26 թ. նկատելի տեղ  
և բռնում գյուղատնտեսական հարկը, ընդ վորում պետք չէր անցել և  
գյուղահարկի ամբողջ գումարից (819,260) միայն 449.808. իսկ մնացածը,  
վորպես հատկացում, արվում է տեղական բյուջեյին: Այդպիսով 25/26 թ.  
գյուղահարկը բյուջեյի 7,8 տոկոսն է կազմում:

Այնուհետև ուղղակի հարկերի մեջ գլխավոր տեղը բռնում են արհեստագործական (промысловый) և յեկամտային (подход.) հարկերը, վորոնցից առաջինը 24/25 թ. 234.061 ո. յիւ հավասար, իսկ յերկրորդը՝ 245.718 ո. ինչ վերաբերում է նրանց նշանակումներին 25/26 թ., ապա այստեղ միայն արհեստագործական հարկն է ավելանում 35.560-ով, վոր բացատրվում է առևտրադրոշմարեբական ձեռնարկությունների քանակական և հարաբերական աճումով, իսկ յեկամտային հարկի գումարը, զրեթե նույնն է թողնված, ինչ վոր 24/25 թ.:

Սակայն, չնայած բյուջեյի յեկամտային մասի աճմանը՝ ուղղակի հարկերի տեսակարար կշիռը մի քիչ իջնում է.—յեթե 1924/25 թ. ուղղակի հարկերը բյուջեյի ընդհ. գումարի 17,7 տոկոսն էյին կազմում, ապա 25/26 թ. իջնում են 17,4 տոկոսի:

Իսկ յեթե վերցնենք ուղղակի հարկերի հարաբերությունը զուտ յեկամտային մասի նկատմամբ (առանց դոտացիայի), ապա, ինչպես վերևում ասվեց, 24/25 թ. այդ հարկերը 65,1 տոկոս էյին, իսկ 25/26 թ.՝ 61,4 տոկոս, վոր ցույց է տալիս, թե նրանք վորոշ չափով իջել են, թեև ընդհանուր առմամբ այդպիսի փոխհարաբերությունը հիմք է տալիս հետևյալին, վոր պետրյուշեյի յեկամտային մասն ամենից շատ յեկամուտների հարկային աղբյուրներից է դոյանում, այսինքն՝ ուղղակի հարկերի կշիռը բյուջեյում դեռ մեծ է:

Անցյնելով այժմ վոչ-հարկային յեկամուաներին՝ կարելի յի նկատել նրանց աստիճանական աճումը: Այսպես, որինակ՝ 24/25 թ. նրանք արտահայտվում են 256.011 ո. գումարով, իսկ 25/26 թ., 619.150 ուղւրով, այսինքն՝ բացարձակ աճումը հավասար է 363.139 կամ 142 տոկոսի:

Վոչ-հարկային յեկամուտները այդպիսի աճումը, վոր անշուշտ դրա-  
կան գործոն է, պայմանավորված է մեր ժողովրդական տնտեսության  
զարգացումով և միշտը յեկամտային աղբյուրների բարձրացումով, վորոն-  
ցից ամենապլրավորներն են՝ ա) անտառային յեկամուտները, բ) արդյու-  
նաբերությունից, առևտրից և բանկերից ստացվող յեկամուտները:



Անտառային յեկամուտը, վոր 24/25 թ. 78.268 ո. եր, 25/26 թ. ավելանում է 41.607-ով (25/26 թ. գումարը վերցված է նետտո) կամ 53 տոկոսով. սակայն նրա տեսակարար կշիռն իջնում է բյուջեյի ընդհանուր գումարի 2,9 տոկոսից 2,0 տոկոսի:

Շատ բնորոշ աճումն են հանդես բերում այն յեկամուտները, վոր պետբյուջե յեն մտնում պետական առևտրից, արդյունաբերությունից և բանկերից՝ իբրև վաստակներից արվող հատկացումներ:

Այսպես՝ 24/25 թ. այդ յեկամուտներից պետբյուջե յե մտնում 124,748 ո., մինչդեռ 25/26 թ. նրանց նշանակումները հասնում են 349.600, այսինքն՝ ավելանում է 224.852 ո. կամ 180%-ով. և այս տեսակետից կարելի յե ասել, վոր վոչ—հարկային յեկամուտների և վոչ մի աղբյուր այդպիսի խոշոր աճում չունի:

Հասկանալի յե, իհարկե, վոր այդ աճումը բնորոշում է մեր առեվտրոս—արդյունաբերական ձեռնարկությունների վերելքը և մեր ժողտնտեսության մեջ ունեցած նրանց տեսակարար կշիռի մեծացումը:

Ընդհանուր առմամբ պետառեվտրից, պետարդյունաբերությունից և բանկերից ստացված յեկամուտների տեսակարար կշիռը 4,6%-ից բարձրանում է բյուջեյի ընդհ. գումարի 6,1%-ի:

Մի կողմ թողնելով մյուս վոչ—հարկային յեկամուտները, վորոնց տեսակարար կշիռը պետբյուջեյի յեկամուտային մասի նկատմամբ աննշան է, պետք է նկատել, վոր ընդհանուր առմամբ վոչ—հարկային յեկամուտները վորոշ չափով բարձրանում են.—և յեթե 24/25 թ. նրանք բյուջեյի 9,5%-ն էին, ապա 25/26 թ. հասնում են 10,9%-ի, այսինքն՝ ավելանում են 1,4%-ով. նույնն է ցույց տալիս նաև վոչ—հարկային յեկամուտների հարաբերությունը զուտ յեկամուտային մասի ընդհ. գումարի նկատմամբ, վորովհետև նրանք պետ. բյուջեյի զուտ յեկամուտային մասի ընդհ. գումարի 34,9%-ից 25/26 թ. բարձրանում են 38,6%-ի:

Անցնելով այժմ դոտացիային՝ պետք է ասել, վոր մեր իրականության պայմաններում դժվար է հանրապետական կարիքները յեկամուտային սպասումների շրջանակներում բավարարելու պետական կարիքները և պարզ է, վոր այդ միշտ դեֆիցիտ կառավարչի, վորովհետև, ինչպես վերևում ասվեց, 24/25 թ. պետբյուջեն ծախսերը յուր յեկամուտներով ծածկել կարողացավ 27,2%-ով, իսկ 25/26 թ.՝ 28,3%-ով. մնացած մասը ծածկվեց դոտացիայով:

25/26 թ. դոտացիայի ընդհանուր գումարը 24/25 թ.-ի համեմատությամբ ավելանում է 2.094,452 ուրբով կամ 106,1%-ով. ընդ վորում այդպես զգալի աճումը, բացի բյուջեյի բնական աճումից, բացատրվում է նաև նրանով, վոր դոտացիոն գումարների զգալի մի մասը գնում է այնպիսի կարիքների բավարարման, ինչպես I և II աստիճանի դպրոցների մանկավարժական կազմի սուբվենյան է, իսկ 25/26 թ. բացի դրանից նաև տեղերին ռժանդակություն տալն է, պահեստի ֆոնդն է, քաղաքների շինարարության հատկացումներն են և այլն:

Սակայն, ընդհանրապես պետք է շեշտել, վոր դոտացիայի տեսակարար կշիռը վորոշ չափով իջել է՝ 72,8%-ից 71,7%-ի, այսինքն՝ 1,1%-ով:

### ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻ ՅԵԿԱՄՈՒՅԻՆ ՄԱՍԸ

Անցնելով այժմ Հ. Ս. Խ. Հ. տեղական բյուջեյի յեկամուտային մասի համառոտ վերլուծությանը՝ մենք նկատում ենք հետզհետե աճող դեֆիցիտայնությունը:

Այսպես՝ 24 թ. հունվարի 1-ից մինչև նույն թվի 1-ն հոկտեմբերի դեֆիցիտը հավասար էր բյուջեյի գումարի 8%-ին, 24/25 թ.՝ 12,7%-ին, իսկ 25/26 թ.՝ բարձրանում է համարյա 40%-ի. այդ բացատրվում է ներանով, վոր բյուջեյի յեկամուտային մասի աճումը ծախսային մասի աճմանը չի հասնում:

Դեֆիցիտի աճման վրա ազդում է, իհարկե, նաև այն, վոր պետբյուջեյից տեղական բյուջե յեն փոխադրված մի շարք զուտ տեղական նշանակություն ունեցող ծախսեր, սակայն զրանում չպետք է փնտրել դեֆիցիտի աճման բացատրության բանալին:

Մեր իրականության պայմաններն այնպես են, վոր տեղական բյուջեյի տնտեսական նախադրյալները շատ թույլ են, վորովհետև այդ բյուջեն յեկամուտային ամուր հիմք չունի:

Յեթե դառնանք անմիջապես տեղական բյուջեյի յեկամուտային մասին, ապա կնկատենք, վոր 1924/25 թ. այն կատարվել է 3.447,6 հազար գումարով, իսկ 25/26 թ.՝ 7.013,5 հազ., այսինքն՝ աճումը հավասար է 3.565,9 հազարի, կամ 103%-ի:

Տեղական բյուջեյի այդ զրությունը, միայն ըստ այդպիսի արտաքին հատկանշի, կարելի կլինի բարենպաստ համարել. սակայն իրապես նրա արտադրական հնարավորությունները տարեց-տարի սահմանափակվում են. այդ է ցույց տալիս 1925/26 թ. համեմատությունը 24/25 թ. հետ:

Յեվ իսկապես, յեթե 25/26 թ. բյուջեյից հանենք հատուկ սուբվենյանները ու շինարարության փոխառությունը, 25/26 և 24/25 թ. բյուջեյի բացարձակ թվերի միջև յեղած տարբերությունն աննշան է (մինչև 570.000):

Իսկ յեթե ուշադրության առնենք՝ 1) վոր միայն հաստիքային (շտապային) միավորներով տեղական բյուջեն 930 միավորով է մեծացել, վորի մեջ մտնում են արգարադատության և միլիցիայի նոր հաստիքները (շտապայինները): վոր անցել է պետբյուջեյից և 2) վոր մյուս հաստիքային միավորներին նվազագույնը 8-ից բարձրացել է 9-ի, ապա պարզ կլինի, վոր հիշյալ տարբերության ամբողջ գումարը գնացել է հաստիքային—կոպարային (տարիֆային) գծով:

Տեղական բյուջեյի յեկամուտային մասի ամբողջ գումարից ուղղակի հարկերին ընկնում է 24/25 թ.՝ 1.423,4 հ., իսկ 25/26 թ.՝ 1.789,4 հ., այսինքն՝ վերջին տարվա աճումը 24/25 թ. դիմաց կազմում է 366 հազար, կամ 26%:

Հարկային յեկամուտների այդպիսի աճումը մասամբ բացատրվում է տեղական հարկերի և դանձումների, այսինքն՝ զուտ տեղական բնույթ ունեցող յեկամուտների ավելացմամբ, սակայն այդ պայմանավորված է զրկափորապես նրանով, վոր տեղական բյուջեյի մեծ դեֆիցիտի հետեվանքով, նրա յեկամուտային մասը ուժեղացնելու նպատակով պետբյուջեն պետհարկերից տեղերին արվող հատկացումները ավելացրել է:

Յեվ իսկապես, ուղղակի հարկերի մեջ գլխավոր տեղը պատկանում է պետհարկերի հավելումներին, վոր 24/25 թ. 366 հ. էին կազմում, 25/26 թ.



բարձրանում են մինչև 659 հ., այսինքն՝ աճում են 80%-ով, մինչդեռ տեղական հարկերն ու տուրքերը միայն 20%-ով են աճում:

24/25 թ. տեղական հարկերի և տուրքերի ընդհ. գումարը 244,2 հ. եր, իսկ 25/26 թ.՝ 293,4 հ., թեև այստեղ բացարձակ ավելացում է նկատվում, սակայն, հարաբերաբար, նրանց բաժինը բյուջեյի յեկամտային մասի նկատմամբ 7,1-ից իջնում է 4,1 տոկոսի:

Անշան չափով իջնում են նաև պետհարկի հավելումները (թեպետ և բացարձակ աճումը հավասար է 80 տոկոսի) 10,6-ից մինչև 9,4 տոկ. բյուջեյի ընդհ. գումարի: Ինչ վերաբերում է պետհարկից արվող հատկացումներին (մասհանումներ), ապա նրանք, ինչպես բացարձակորեն, այնպես և հարաբերականորեն, իջնում են 656,7 հ.-ից 627,4 հազ. ո., այսինքն՝ բյուջեյի ընդհ. գումարի 19-ից մինչև 8,9 տոկոսը:

Առհասարակ տեղական բյուջեյի յեկամտային մասում, թեև ուղղակի հարկերը բացարձակորեն աճում են, նրանց տեսակարար կշիռն իջնում է. և յեթե 24/25 թ. նրանք բյուջեյում 41,3 տոկ. էյին կազմում, ապա 25/26 թ. նրանց բաժինն արդեն պակասում է և իջնում 25,5 տոկոսի:

Ինչ վերաբերում է վոչ-հարկային յեկամուտներին, ապա նրանց մուծումը 24/25 թ. 1,459,6 հ. եր, իսկ 25/26 թ. 1,779,7 հ., այսինքն՝ 25/26 թ. բացարձակ աճումը հավասար է 320,1 հ. կամ 22 տոկոսի:

Վոչ-հարկային յեկամուտների մեջ կարեւոր տեղ են բռնում կոմունալ տնտեսությունների յեկամուտները, վոր 24/25 թ. 895,2 հ. ո. են կազմում, իսկ 25/26 թ.՝ 858,3 հ., այսինքն՝ 25/26 թ. իջնում են 4,1-ով:

Այնուհետև վոչ-հարկային յեկամուտների մեջ մեծ տեղ են բռնում պետյեկամուտից արվող հատկացումները, վոր 204,7 հազարից բարձրանում են 25/26 թ. 10 տոկոսով:

Սակայն ընդհանրապես, թե կոմունալ տնտեսության յեկամուտները ու պետյեկամուտներից արվող հատկացումները և թե առհասարակ վոչ-հարկային յեկամուտների իրենց՝ բյուջեյի յեկամտային մասի նկատմամբ ունեցած տեսակարար կշիռը նվազում է: Այսպես, կոմունալ տնտ. յեկամուտները 26-ից իջնում են 12,2 տոկ., պետյեկամուտներից արվող հատկացումները՝ 5,9 տոկ. 3,2 տոկ. իսկ ընդհանրապես վոչ-հարկային յեկամուտները բյուջեյի ընդ. գումարի 42,3-ից իջնում են 25,2 տոկոսի:

Բոլորովին այլ պատկեր են առաջին դոտացիան, սուբվենյիան, փոխառությունները, ֆոնդերը և այլն, վորոնք 564,6 հ.-ից բարձրանում են 25/26 թ. 3,444,4 հ., այսինքն՝ զրեթե 510%-ով:

Ահա ընդհանուր և համառոտ գծերով Հ.Ս.Ս.Հ. պետ. և տեղ. բյուջեյի յեկամտային մասի զարգացման հիմնական ուղիները 24/25 - 25/26 թ.թ.:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

### (Капитальные вложения)

Արտադրության ասպարիզում կատարած նվաճումներն, անտարակույս, կունենան հարաբերական իմաստ, յեթե մենք աչքաթող անենք ժողովրդական տնտեսության մյուս կտրված բեկեր՝ հիմնական ֆոնդերի գինամիկան:

Դժբախտաբար, այս տեսակետից փոքր է շատե խոր անալիզ կատարելու համար մեր հնարավորությունները շատ սահմանափակ են ու միջոցները թերի: Առայժմ մենք անգոր ենք ընդգրկել ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը գնահատելու կարևոր ու միաժամանակ խիստ

դժվարին գործը: Այդ ուղղությամբ փորձեր կատարվելու յեն միայն առաջակայում:

Այստեղ միայն թուղթիկ կերպով կանդրադառնանք Հ. Ս. Ս. Հ. ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի և կապիտալ ներդրումների խնդրին:

Պատերազմի և հետագա անցքերի ընթացքում հիմնական ֆոնդերը խիստ նվազեցին. այդ վատնումը տեղի յե ունեցել վոչ միայն բնական մաշվածքի դժով, վորն, ի հարկե, չէր լրացվում՝ շինարարության կատարյալ բացակայության պատճառով, այլ նաեւ այն բոլոր արտաքին ավերիչ գործոնների հետևանքով, վորոնք խախտել են ժողովրդական տնտեսության հիմքերն առհասարակ: Այսպիսով, տնտեսության տարբեր ճյուղերում յերկար տարիների ընթացքում կուտակված ժողովրդական հարստության նշանավոր մասը կամ բառացի իմաստով վոչնչացվել է, կամ, անխնամ մնալով ու մաշվելով, անպետքացել ու կորցրել է իր շահագործական ակտիվությունը:

Գյուղատնտեսության մեջ յեղած գույքը նվազեց՝ շինությունների, կառուցվածքների և շատ տեղերում նույնիսկ ամբողջ գյուղերի ավերման, գյուղատնտեսական մեռյալ ինվենտարի մաշվելու ու անպետքանալու և բանվոր ու ոգտագործական անասունների կրճատվելու հետևանքով: Գյուղատնտեսության մյուս կարեւոր նյարդը, վորոգման սխտեմը, նույնպես յենթարկվեց լուրջ ավերումներին: Արդյունաբերության հիմնական ֆոնդերի քայքայման մասին իր տեղում արդեն ասված է: Ավելի վատ դրություն հասավ քաղաքային տնտեսությունը և հատկապես բնակարանային ֆոնդը, վորի անկման հետևանքները մենք ապրում ենք դեռ այժմ: Հաղորդակցության ճանապարհները, մի շարք տարիների ընթացքում մնալով առանց նորոգության, փչացան:

Խորհրդայնացումից հետո անհրաժեշտ էր յեռանդուն միջոցների գիմել առաջին հերթին կասեցնելու մեզ թողած ծանր ժառանգության վերջնական վոչնչացումը, ապա վերականգնել, վերստեղծել հիմնական ֆոնդերը, ու միաժամանակ ձեռնամուխ լինել նոր ֆոնդեր կուտակելուն, վորով կարելի կըլիներ ապահովել տնտեսության շուտափուլ վերականգնումն ու հետագա զարգացումը:

Սկզբնական շրջանում հիմնական ներդրումները մեծ չափերի չէյին հասնում և նրանք գլխավորապես ուղղված էյին հիմնական ֆոնդերի քայքայումը կասեցնելու ուղղությամբ և դա հասկանալի է: 1923/24 թ. ներգրված հիմնական կապիտալներն արոհն հասնում են շուրջ 2,8 միլ. ռուբլու, վորի խոշոր մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը և ջրային տնտեսությանը: Վերջինիս դրամական հատկացումների զգալի մասը ծախսվել է նոր կառուցումների վրա:

Այնուհետև հիմնական ներդրումները շարունակում են պրոգրեսիվ կերպով աճել, ըստ վորում խոշոր հատկացումներ են կատարվում նոր շինարարության համար:

1924/25 և 25/26 թ. թ. հիմնական ներդրումների նախնական հաշվարկումը արտահայտվում է հետևյալ աղյուսակով՝ (հազար ռուբ.)







|                                                            | 1924/25 թ. | 1925/26 թ. | Ընդամենը |
|------------------------------------------------------------|------------|------------|----------|
| Վոլոգդուսն և մեյիորացիա                                    | 16,8       | 14,5       | 15,3     |
| Գյուղատնտեսություն                                         | 16,8       | 10,2       | 12,3     |
| Գյուղատնտ. և ջրային տնտեսու-<br>թյունը միասին              | 33,6       | 24,7       | 27,6     |
| Արդյունաբեր., ելեքտրիֆ., և բան.<br>բնակ. շինարարություն    | 41,5       | 46,5       | 44,9     |
| Կոմսոմոնալ տնտեսություն և բնակա-<br>րանային շինարարություն | 15,9       | 17,4       | 16,9     |
| Ճանապարհների շինարարություն                                | 4,9        | 6,5        | 6,0      |
| Կուլտ-կրթական և բժշկա-սանիտա-<br>րական շինարարություն      | 4,1        | 4,9        | 4,6      |
| Ընդամենը՝                                                  | 100        | 100        | 100      |

Մինչդեռ 1923/24 թ. գյուղատնտեսության և ջրային տնտեսության հիմնական ներգրուսների տեսակարար կշռի ցուցիչն առավելագույնն էր, 1924/25 թ. սկսած այս տեսակետից առաջին տեղը գրավում է արդյունաբերությունը, վորի հիմնական ներգրուսների տեսակարար կշռի աստիճանական բարձրացումը միանգամայն համապատասխանում է այն քաղաքականությունը, վոր վարում է խորհրդային իշխանությունը տնտեսական շինարարության բնագավառում և վորը պիտի շարունակվի համաձայն Միության ինդուստրիալիզացիայի լոզունգին: Ուստի սկզբնական շրջանում ուղղորդության կենտրոնում գտնվող և համեմատաբար ավելի վերականգնված գյուղատնտեսությունն այժմ, բնականաբար, իր դիրքերը զիջել է և պիտի զիջի արդյունաբերության:

## ԱՄՓՈՓՈՒՄՆ ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Կոմունիստական կուսակցության յեվ Խորհրդների ղեկավարությունը Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսությունը յեռանդուն թափով անում է: Չնայած վոր մեր ամբողջ արդյունաբերությունը արտադրանքը դեռ յետ և մնացել նախապատերազմյանից, բայց յեվ այնպես մեր զուտ ցենզային արդյունաբերության արտադրանքը 25/26 թվին մոտ է նախապատերազմյան մակարդակին: Խորհրդային Հայաստանի արդյունաբերության հիմնական կապիտալը ներդրումների շնորհիվ մեծ չափով անել և յեվ ստեղծվել են արդյունաբերության մի բանի նոր ճյուղեր:

Նախապատերազմյան չափին հասնելու տեսակետից յետ և մնում գյուղատնտեսության արտադրանքը, սակայն 26/27 թ. նա յեվս բավական մոտ է նախապատերազմյան մակարդակին: Անում է գյուղատնտեսության ապրանքայնությունը: Առեվտրի մեջ կոոպերացիայի յեվ պետորգանների դերը մեծացել է: Ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական ելեմենտները տարեց-տարի ավելացել յեվ ուժեղացել են: Այսպիսով, Միությանական յեվ Անդրկովկասյան տնտեսության վերելքի գիծը, բնականաբար, իր արտացոլումն է գտել Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ:

Ինչպե՞ս են արտահայտվել անման հիմնական գծերը մեր տնտեսության մեջ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Ցանքսի տարածությունը բավականաչափ արագ վերականգնում է՝ 1925 թվին հասնելով 86,3 տոկոսի, 26 թ. 90,7 տոկոսի: Մեր հետա-մնացությունը Միության համեմատությամբ բացատրվում է մեր տնտեսու-թյան կրած խոշոր վնասով: Ցանքսի տարածության հետ միաժամանակ անում է նայել մշակույթների բերքատվությունը, վոր իմպերիալիստա-կան պատերազմի յեվ դաշնակցականների որոք շատ եր իջել: Ներկայումս նախապատերազմյան մակարդակից յետ և խաղողի բերքատվությունը (200 փ. 500 փթի փոխարեն):

Մյուս մշակույթները 26 թ. լավ բերք են տվել: Բամբակը, ծխախո-տը յեվ ձիթաբույսերը ամբողջությամբ վերցրած՝ 1925 թ. մեծապես ա-նել են յեվ անցել նախապատերազմյան մակարդակից: Սակայն, վերջին տարում բամբակի տարածությունն ու բերքատվությունն ուժեղ կրճատ-վել են յեվ դրա հետեվանքով գյուղատնտեսության այս ճյուղը նախըն-թաց տարիների համեմատությամբ յետ և մնացել: Աննպաստ դրություն մեջ է խաղողաբուծությունը, վոր 24/25 թ. չտեսնված ձմրան պատճառով խիստ տուժեց:

Հացաբույսերի ցանքսի տարածությունը 26 թվին հասնում է նախա-



պատերազմյանի 90,1 տոկոսի: Հացարույսերը, վորոնք գյուղացու տնտեսության հիմքն են կազմում, 26 թվականին մեծ բերք են տվել:

2. Անասնապահությունը մեզանում ավելի յե տուժել, քան մյուս նյութերը: 26 թվականին անասունների բոլոր տեսակները վերածած խոշոր յեղջյուրավոր անասունների, վերականգնել ե 84,1 տոկոսով: 27 թվին յենթադրվում ե, վոր այդ վերականգնումը կը հասնի 92,4 տոկոսի: Ամենից շատ տուժել ե ձիաբուծությունը (57,7 տոկոս մնաս), վոր դանդաղությունը ե վերականգնում. — 27 թ. նա կվերականգնի միայն 61,9 տոկոսով: Մեծապես տուժել են նայել անասունները, մանավանդ լծկանները, վորոնց թիվը 27 թ. կվերականգնի 87,4 տոկոսով: Վոչխարաբուծությունը կվերականգնվի 89,8 տոկոսով: Կենդանաբուծության մյուս նյութերը, ինչպես՝ խոզաբուծությունն ու այծաբուծությունը նախապատերազմյան մակարդակից բարձրացել են: Ժանտախտի համաճարակն, անասունների կերի խնդիրը, նախախորհրդային շրջանում անասնապահության կրած խոշոր վնասը, խոչընդոտներ են նրա վերականգնման համար:

3. Վերականգնման պրոցեսը գյուղատնտեսության մեջ սկզբում ընդգրկում ե սպառողական մշակույթները, յեվ հետզհետե ծավալվում ուրիշ նյութերում յեվս: Մյուս կողմից նկատելի յե, վոր քանի գյուղատնտեսությունը մոտենում ե նախապատերազմյան մակարդակին, այնքան վերականգնման տեմպը դանդաղում ե: Վերականգնման միջոցները սկսում են սպառվել: Գյուղատնտեսության հետագա աճումն արդեն մեծ ջանք ու ծախս ե պահանջում ու այլևս այնպես արագ չի ընթանա:

4. Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության վորոշ նյութերը բարձր չափով ապրանքային են: Գյուղատնտեսության ապրանքայնությունը, վոր նախախորհրդային շրջանում խիստ ընկել եր, արագ վերականգնում ե: Հետագայում նրա վերականգնման տեմպը կախված ե վոչ միայն այս կամ այն մշակույթի տարածության ընդարձակումից, բերքավորության բարձրացումից, այլ նայել հացահատիկների յեվ տեխնիքական մշակույթների գների փոխհարաբերությունից:

5. Հացահատիկների գների կարգավորումը, տեխնիքական մշակույթների համար նպաստավոր պայմաններ ստեղծելը, վարկի ուղղումը թե հողագործության յեվ թե կենդանաբուծության բարձր ապրանքայնությունն ունեցող նյութերի մեջ յեվ մի շարք այլ ձեռնարկումներ պիտի աջակցեն գյուղատնտեսության ապրանքայնության բարձրացմանը: Այստեղ կարևոր դեր պիտի խաղա նայել հայթայթիչ որգանների ուժեղացումը, ժամանակին ֆինանսավորելը յեվ առհասարակ հայթայթողական աշխատանքի ծավալումը գյուղատնտեսական կոոպերացիայի յեվ պետորգանների միջոցով: Իհարկե, մեր ուշադրությունը դարձնելով բարձր ապրանքայնություն ունեցող նյութերի վրա, միյնվում յե ժամանակ կարևոր ուշադրություն պիտի դարձնենք նայել հացաբույսերի բերքատվության բարելավման վրա, քանի վոր սրա դերը բավական մեծ ե գյուղատնտեսության մեջ:

6. Գյուղատնտեսության վերականգնման գործում զգալի դեր ե կատարում գյուղատնտեսական կոոպերացիան, վորի զարգացումն, ընթանալով բավական արագ (26 թ. հոկտեմբերի 1-ին ունենր 30.075 կոոպերացված տնտեսություն) զարկ ե տալիս գյուղատնտեսության ինտենսիֆիկացիային յեվ ուղղում ե գյուղատնտեսության ապրանքայնությունը սոցիալիստական կուտակման հունով:

7. Պետք ե սպասել, վոր Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսությունն ընդհանրապես նախապատերազմյան չափից կանցնի 1928 թվին: Սակայն մի քանի նյութերում կարող ե հետամնացություն լինել, վորը կփոխառուցվի մյուս մշակույթների աճումով: Մասնավորապես խաղողաբուծությունը չափի կարողանա դեռ մի տարում բոլոր վերբերք բույսեր: Նույնը վերաբերում ե նայել ձիաբուծությանը:

Հիմք ունենր կարծելու, վոր Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության մեջ նկատվող հիմնական տենդենցը՝ տեխնիքական յեվ ապրանքային մշակույթների ու արդյունաբերական կենդանաբուծության զարգացման գիծն առաջիկա 1926-27 թ. ել ավելի ցայտուն կերպով կարտահայտվի:

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի արդյունաբերությունը, վոր մեծ անկման եր հասել իմպերիալիստական պատերազմի յեվ դաշնակցականների իշխանության շրջանում, աճում ե ավելի բարձր տեմպով, քան թե Միության ուրիշ հանրապետություններում, վորովհետեվ նա սկսել ե վերականգնել շատ ավելի իջած մակարդակից (մինչև խորհրդայնացումը արդյունաբերության արտադրանքը կազմել ե նախապատերազմյան 10 տոկոսը), յեվ բարձրանալով, գրեթե հասնում ե նախապատերազմյան աստիճանին: Ծիշտ ե, արդյունաբերության ամբողջ արտադրանքը 25-27 տոկոսով յետ ե նախապատերազմյան ամբողջ արտադրանքը 25/26 թ. հավասար ե 7,324,4 հազար (նախապատերազմյան ուրբ.) — 1913 թ. 8.000 հազարի համեմատ:

2. Արդյունաբերության արտադրանքը 1925/26 թ. շատ ավելի բարձր կլիներ, յեթե յետ չմնային պղնձի արդյունաբերություն (համեմատաբար ուշ սկսվեցին վերականգնման աշխատանքները) յեվ գինու-կոնյակի արտադրությունը (խաղողաբուծության հետամնացության պատճառով): Ներտադրությունը (խաղողաբուծության հետամնացության արտադրանքը 1913 թ. համեմատական) պղնձարդյունաբերության արտադրանքը 1913 թ. համեմատական կազմում ե 17,1 տոկոս. գինու-կոնյակի արդյունաբերության արտադրանքը կազմում ե նախապատերազմյան 45,2 տոկոսը:

3. Խորհրդային Հայաստանի արդյունաբերությունը սկսած 1923/24 թ. բավական մեծ փոփոխությունների յենթարկվեց: Ստեղծված են մի շարք նոր նյութեր (պեմզայի, տեքստիլ արդյունաբ. յեվ այլն), վորոնք նկատելի են խաղում Հայաստանի արդյունաբերական արտադրանքի մեջ. մի քանի նյութեր վերակառուցված են նոր տեխնիքական բազայի հիման վրա: Արդյունաբերության վերակառուցման յենթարկված յեվ նոր ստեղծված նյութերը տալիս են արդյունաբերության ընդհանուր արտադրանքի 62 տոկոսը: Ելեբորաշինարարության շնորհիվ արդյունաբերության շատ նյութեր ելեբորիֆիկացիայի յեն յենթարկված:

4. 1924-26 թ. շրջանում, արդյունաբերության մեջ կատարված են կապիտալային խոշոր ծախսումներ, վորոնք արտահայտվում են 9,1 միլիարդ ռ., ըստ վորում կապիտալային մուծումները 24/25 թ. կազմում են լիոն ռ., ըստ վորում կապիտալային մուծումները 24/25 թ. կազմում են 41,5 ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ մուծած կապիտալների 41,5 տոկոսը, իսկ 1925/26 թ. 46,5 տոկոսը. կապիտալային մուծումները արտադրական արդյունք կտան մեծ մասամբ 26/27 թ.:

5. Բանվորական զբաղված ուժի քանակը ցնցային արդյունաբերու-



Թյան մեջ շարունակում ե անել: 25/26 Թվականին 24/25 Թ. համեմատությամբ անումը հավասար ե 107 տոկոսի: Զբաղված բանվորական ույժի յետ մնալը նախապատերազմյանի համեմատությամբ բացատրվում ե արդյունաբերության ռեկոնստրուկցիայով յեվ նրանով, վոր լիովին չի վերականգնել պղնձարդյունաբերությունը: 25/26 Թ. նկատելի բարձրացել ե աշխատավարձը 24/25 Թ. համեմատությամբ: Բանվորական ույժի նույն-որինակ անման պրոցեսս մենք նկատում ենք, յեթե վերցնենք զբաղված բանվորական ույժը բոլոր հիմնարկներում յեվ ձեռնարկություններում: Զբաղված բանվորական ույժը բացարձակ թվերով մեր հիմնարկություններում յեվ ձեռնարկություններում բարձրացել ե 23.182-ից (1924թ. հոկ-1-ին) մինչև 39.718-ի (1926 Թ. հոկտեմբ. 1-ին), կամ 71 տոկոս. սակայն, չնայած այսպիսի անման, ինչպես յեվ արդյունաբերական բանվորների թվի ավելացման՝ գործազրկությունն անում ե. նույն ժամանակաշրջանի ընթացքում գործազրկությունն արհմիությունների անդամների մեջ անել ե 52,2 տոկոսով:

Պետք ե նկատել, վոր գործազրկության անումը մեծ չափով սեզոնային բնույթ ե կրում յեվ, հարկավ, այդ յերեվույթի վերացումը կապված ե ժողովրդական տնտեսության ընդհանուր անցողության հետ, մանավանդ այստեղ չի կարելի հաշվի չառնել գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի վերաբերմամբ արվելիք ձեռնարկումները:

6. Արդյունաբերության արտադրանքի անման տեմպը կոնտրոլ թվերով 26/27 Թվականին 25/26 Թ. հետ համեմատած ընդհանուր առմամբ հավասար կլինի մոտ 50 տոկոսի, իսկ արտադրանքը կը կազմի 10.990,8 հազար նախապատերազմյան ուրբի, անցնելով նախապատերազմյան մակարդակից համարյա 37,5%-ով:

Յենթադրվում ե, վոր պղնձարդյունաբերության արտադրանքը բավական կբարձրանա. կանի նայել զինու-կոնյակի, տեքստիլ արդյունաբերության արտադրանքն ու այս տարի կաշխատեն ծիթոնառի, կարբիդի գործարանները:

Յենզային արդյունաբերության մեջ զբաղված բանվորական ույժի բանակը 26/27 Թ. 60 տոկոսով պիտի անի 25/26 Թ. համեմատությամբ:

7. Ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրանքի անման տեմպը շատ ավելի բարձր ե, քան գյուղատնտեսական արտադրանքի, թե անցյալ տարիներում յեվ թե 26/27 Թ.: Հետագայում յեվս այդ յերեվույթը նկատվելու յե Հ. Ս. Խ. Հ.-ի ժողովրդա-տնտեսական կյանքում: Դրա հետ միասին Հայաստանի արդյունաբերության անման տեմպը բարձր կլինի Համաժողովրդական նորմայից, վորովհետեվ կապիտալային նոր մոծումներն ու առհասարակ ամեն մի նոր ձեռնարկություն՝ Հայաստանի արդյունաբերության հիմնական կապիտալի թուլության յեվ այդ արդյունաբերության արտադրանքի փոքրության հետեվանքով բավականին ուժեղ կերպով կանդրադառնան նրա անման վրա:

8. Հ. Ս. Խ. Հ.-ի արդյունաբերության անումը մեր առջև դնում ե մի շարք խնդիրներ՝ արդյունաբերության կառավարման բարելավում, արտադրանքի ինքնարժեքի իջեցում, խնայողության ռեժիմի կիրառումն յեվ այլն: Այս խնդիրները պետք ե մեծ ուշադրության արժանանան արդյունաբերական կազմակերպությունների կողմից, մանավանդ, նկատի առնելով ծնվող արդյունաբերության յերիտասարդությունը:

9. Անհրաժեշտ ե նշել տնտեսագործական արդյունաբերության համեմատաբար թույլ անումը, մի ճյուղի, վոր պատերազմից առաջ զգալի դեր եր խաղում Հայաստանում: Նմանապես պետք ե հավաստել, վոր բավականաչափ միջոցներ չեն ձեռնարկված մանր արդյունաբերություն ստեղծելու համար՝ գործկոմներին կից, կամ կոոպերացիայի միջոցով:

## ԱՂՐԱՆԲԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսական յեվ արդյունաբերական արտադրության անման հետ տարեց-տարի անում ե ապրանքաշրջանառությունը:

23/24 Թ. շրջանառությունն ըստ մեծածախ յեվ մանրածախ կազմել ե 31 միլլ. չերվ. ուրբի (այստեղ նկատի յե առնվել վաճառքը), 24/25 Թ. 51,4 միլլ. ու., 25/26 Թ. 74 միլլ. ու.: Այսպիսով, տարեց-տարի ապրանքաշրջանառությունն անում ե զրեթե մեկ յեվ կես անգամ: Վոչ այդքան ուժեղ, բայց, այնուամենայնիվ, նկատելի անցողություն են ցուցահանում բորսային գործարքները:

2. Ապրանքաշրջանառության անման հետ միաժամանակ փոփոխություն ե տեղի ունենում նայել առեվտուր անող կազմակերպությունների տեսակարար կշռի մեջ պետորգանների, կոոպերացիայի յեվ մասնավոր առեվտրականի: Այդ փոփոխությունների ելությունը կայանում ե նրանում, վոր, պետորգանների յեվ կոոպերացիայի շրջանառություններն անում են ավելի արագ, քան թե մասնավոր առեվտրականի շրջանառությունները: 25/26 Թ. պետական յեվ կոոպերատիվ առեվտուրը իր շրջանառությունը բարձրացրել ե 24/25 Թ. համեմատությամբ 52 տոկոսով, մասնավոր առեվտրականը՝ 23 տոկոսով:

3. Մասնավոր կապիտալը հանձնում ե իր դիրքերը թե մեծածախ յեվ թե մանրածախ առեվտրի մեջ: 23/24 Թ. մասնավոր առեվտրականի մասնակցությունը մեծածախ առեվտրի մեջ արտահայտվել ե 17,4 տոկոսով, 24/25 Թ. — 11,2 տոկոսով, 25/26 Թ. — 10,1 տոկոսով: Մասնավոր առեվտրականի մասնակցության տոկոսը մանրածախ առեվտրի մեջ արտահայտվել ե 23/24 Թ. — 61,5 տոկոսով, 24/25 Թ. — 45,7 տոկոսով, 25/26 — 39,3 տոկոսով: Ուժեղ կերպով անում ե կոոպերացիան, մանրածախ առեվտրի ասպարիզում մասնավոր առեվտրականից յեվ պետառեվտրից առաջ անցնելով: Մանրածախ առեվտրի մեջ կոոպերացիայի շրջանառությունը կազմում եր 23/24 Թ. բոլոր շրջանառությունների 30,8 տոկոսը, 25/26 Թ. կոոպերացիայի մասնակցությունն արդեն արտահայտվել ե 49 տոկոսով:

4. Նշելով պետական յեվ կոոպերատիվ կազմակերպությունների առողջ անումը, անհրաժեշտ ե նկատել, վոր վորոշ շեղում ե տեղի ունեցել, առեվտրական քաղաքականության ընդհանուր գծից. այսպես որինակ, Հայառը իր վաճառքային գործարքների մեջ, ըստ Յերեվան քաղաքի, մեծ տեղ ե տվել մասնավոր առեվտրականներին:

Դրա հետ միասին պետք ե նշել, վոր չեն ճշտված առեվտուր անող կազմակերպությունների ֆունկցիաների ճշտորոշումն ու սահմանազծումը:

Անհրաժեշտ ե հավաստել նմանապես, վոր Խորհրդային Հայաստան ներածվող ապրանքների պլանը մի բանի դեպքերում, վորոշ չափով չեր համապատասխանում բնակչության վճարունակության պահանջին, վորոշ



7. 26/27. Թ. արդյունաբերական ապրանքների գների իջեցման համար կիրառվող համառ. կամպանիան, հացահատիկների գների իջեցման առոգջ տեխնիկները, ստեղծելով համեմատաբար կանոնավոր հարաբերություն տեխնիկական մշակույթների յեվ հացահատիկների գների միջեվ, կիջեցնի արդյունաբերական յեվ գյուղատնտեսական ապրանքների ինդեքսները, կը փոխի մեծածախ յեվ մանրածախ առեվտրի գների մկրատը, սեղմելով այն, յեվ դրա հետեվանքով առաջ կը բերի ապրանքների պահանջ, ապրանքաշրջանառության աշխուժացում, չխտեելով մի շարք ուրիշ հետեվանքների մասին, վորոնք յեվս տեղի կունենան ամբողջ տնտեսու-

ՖԻՆԱՆՍՆԵՐ ՅԵՎ ՎԱՐԿ

4. Վարկային գործառնություններն առ 1 հոկտ. 26 թվականի, 24 թ. հոկտ. 1-ի համեմատությամբ ավելացել են 324 տոկոսով: Ինչ վերաբերում է ժողովրդական տնտեսությունից առանձին նյութերի վարկավորման, ապա հատուկ ուշադրություն է դարձվում արդյունաբերությունից: Արդյունաբերությունից պարտքն առ 1-ն հոկտ. 26 թվականի՝ 24 թվականի նույն ժամկետի համեմատությամբ ավելացել է 825 տոկոսով, կազմելով բոլոր զեղջ-փոխառվական գործառնությունների 33,8 տոկոսը: Նույն ժամանակաշրջանում գյուղատնտեսությունից վարկերն աճել են 442 տոկոսով, 26 թ. հոկտ. 1-ին կազմելով բոլոր զեղջ-փոխառու գործառնությունների 32,5 տոկոսը:



5. Սակայն, չնայած այս ահմանը, անհրաժեշտ է նկատել, Վոր դրամական միջոցների սուր պակասությունն է զգացվում յեվ առաջնակարգ խնդիրներից մեկը պետք է համարել բանկերի վարկային միջոցների ու կապիտալների ուժեղացումը: Այս խնդիրն առանձնապես թեւադրվում է Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության ահման փաստով:

6. Պետք է նշել այն կապիտալային ծախսումները, Վոր կատարված են Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ: Այդ մուծումների ընդհանուր գումարը, Վոր 3 տարվա մեջ (23 թ.—26 թ.) անում է 22 կես միլիոն ռուբլի, (մուծումներ թե ըստ վարկի, թե բյուջեյի արտակարգ մասի յեվ թե սեփական հանրապետական միջոցներից) խոշոր միջոց է Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության բարձրացման համար: Տարեց-տարի այդ մուծումները կրկնապատկվում են:

Կապիտալային մուծումները 26/27 թ. պակաս չեն 25/26 թ. մուծումներից: Հետագայում յեվս ժողովրդական տնտեսության մեջ պետական յեվ կոոպերատիվ կազմակերպությունների կողմից կապիտալային ծախսումները ավելի կը ծավալվեն յեվ ավելի կը բարձրանան:

7. Կարեւոր է շեշտել մի հանգամանք յեվս: Քանի Վոր ժողովրդական տնտեսության մեջ մուծվող դրամազուխների մեծագույն մասը հատկացվում է շինարարությանը, ապա որվա հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում շինարարության ռացիոնալիզացիան յեվ եժանացումը: Այդ պրոբլեմի հաջող լուծումը հնարավորություն կտա խնայողության խիստ ռեժիմի պայմաններում հասնել առավելագույն արդյունքների:

Սա անհրաժեշտ յեվ անհետաձգելի պահանջ է մեզ համար:

8. Չնայած խոշոր մուծումներին, բնակարանային ֆոնդը մեղանում կատաստրոֆիկ դրության մեջ է: Այս բնագավառում սոսկ մուծումներով չի կարելի փրկել գործը: Բնակարանային ֆոնդը մաշվում է յեվ նրա շարունակվող քայքայման առաջն առնելու համար պահանջվում է բնակարանային ճիշտ քաղաքականություն: Այստեղ մեծ դեր ունի կատարելու բնակարանային կոոպերացիան, նայել միջոցներ պետք է ձեռք առնել ընդլայնելու մասնավոր կապիտալի նախաձեռնությունը բնակարանային ֆոնդի պահպանման յեվ նոր ֆոնդ ստեղծելու գործում:

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ



## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակների առթիվ . . . . . 3

### 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| № №                                                                   | Եջ  |
|-----------------------------------------------------------------------|-----|
| 1. Ցանքերի տարածությունը Հայաստանում . . . . .                        | 5   |
| 2. Անասունների բանակը Հայաստանում . . . . .                           | 6   |
| 3. Գյուղատնտեսության բնական արտադրանքը . . . . .                      | 7   |
| 4. Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքը . . . . .            | 8—9 |
| 5. Գյուղատ. մթերքների յեվ արդյուն. հում նյութ. մթերույթները . . . . . | 10  |

### 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ

Ա. Շ. Խ Ա. Տ Ա. Ն Ք

|                                                                                                                                          |    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 6. Հայաստանի ցենզային արդյունաբերության ընդհանուր արտադրանքի արժեքը . . . . .                                                            | 11 |
| 7. Զբաղված բանվորական ույժը ցենզային արդյունաբ. մեջ . . . . .                                                                            | 12 |
| 8. Ցենզային արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրանքի արժեքը յեվ զբաղված բանվորական ույժը . . . . .                                 | 13 |
| 9. Գործարանային բանվորների ամսական միջին աշխատավարձը . . . . .                                                                           | 14 |
| 10. Զբաղված բանվ. ույժը Հայաստանում, զործագրվությունը Արհ. անդամների մեջ յեվ Հայաստանի Արհմիությունների անդամների թվական կազմը . . . . . | 15 |

### 3. ԱՌԵՎՏՈՒՐ ՅԵՎ ԿՈՊԵՐԱՑԻԱ

|                                                                                             |       |
|---------------------------------------------------------------------------------------------|-------|
| 11. Միջնորդական (առևտրական) ապրանքաշրջանառությունը Հայաստանում . . . . .                    | 16    |
| 12. Սպառկոոպերացիայի սկզբնական ցանցի զնումները յեվ փոքրաբանակ վաճառքը . . . . .             | 17    |
| 13. Յերեվանի մեծածախս պետական յեվ կոոպերատիվ կազմակերպությունների շրջանառությունը . . . . . | 18-19 |
| 14. Սպառողական յեվ գյուղատնտեսական կոոպ. ցանցի աճումը . . . . .                             | 20    |
| 15. Սպառկոոպերացիայի սկզբնական ցանցի ֆինան. դրությունը . . . . .                            | 21    |
| 16. Ապրանքների պլանային ներածումը . . . . .                                                 | 22    |



#### 4. ԻՆԴԵՔՍՆԵՐ ՅԵՎ ԳՆԵՐ

|                                                                          |       |
|--------------------------------------------------------------------------|-------|
| 17. Բյուջետային հավարի արժեքը . . . . .                                  | 23    |
| 18. Ֆերեվանի յեվ Համահայաստանյան մանրավ. գների ին-<br>դեքսները . . . . . | 24-25 |
| 19. Մանրավաճառ գները Ֆերեվանի շուկայում . . . . .                        | 26    |
| 20. Մանրավաճառ միջին գները 6 գավառային կենտրոններում . . . . .           | 27    |

#### 5. ՎԱՐԿ ՅԵՎ ԲՅՈՒՋԵ

|                                                                        |       |
|------------------------------------------------------------------------|-------|
| 21. Մուրհակների զեղջի յեվ փոխառվական գործառնություն-<br>ները . . . . . | 28-29 |
| 22. Հայաստանի պետական բյուջեն . . . . .                                | 30    |
| 23. » տեղական » . . . . .                                              | 31    |

#### ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Աղյուսակները մշակվել են Պետականի Տնտեսա-վիճակագրական սեկ-  
ցիայի վիճակագր. բյուրոյում: Վորպես նյութ ոգտագործվել են մասամբ  
Ժող. տնտես. կոնտրոլ թվերը յեվ մասամբ՝ համապատասխան գերատես-  
չություններից ու հիմնարկություններից ստացված կոնյունկտուրային յեվ  
ընթացիկ հաշվետվության տվյալները:

Տպագրական յեվ տեխնիքական աննպատ պայմանների շնորհիվ  
ներկա հրատարակության մեջ տեղ են գտել բյուրոյի արամադրության  
տակ յեղած հարուստ նյութերից յեվ մշակած համեմատաբար մեծաթիվ  
աղյուսակներից միայն կարեւորագույններն, այն ել համառոտած ձևով:

Աղյուսակները կազմելիս ոգտվել են հետեւյալ նյութերից:

**1. Գյուղատնտեսությունը, № 1-4 աղյուս.՝** Տնտ. վիճ. Սեկցիայում  
կատարված «Հայաստանի գյուղատնտեսության արտադրանքը» ընդարձակ  
աշխատությունից, վորը հավանական է լույս կտեսնի առանձին հրատա-  
րակություն: № 5 աղյուս.՝ Ն. Առ. Ժ. Կ. լիազ. կոնյունկտուր տվյալ-  
ներով:

**2. Արդյունաբերությունը յեվ աշխատությունը, № 6 յեվ 7 աղ. նույնպես**  
Տնտ. վիճ. սեկցիայի աշխատությունից, վորը կատարվել է Կենտվիճվարի  
Արդ. վիճ. բաժնի հետ միատեղ, Ժող. տնտ. խորհի մասնակցությամբ:  
Համաձայն Անդրժողովխորհի 1296 թ. ապրիլ 30-ի № 22 վորոշման «ցեն-  
զային» արդյունաբերության մեջ մտել են նաեւ այնպիսի ձեռնարկու-  
թյուններ, վորոնք թեյեւ չեն բավարարում սահմանված ցենզին (16 բանվոր  
յեվ շարժիչ մեքենա, կամ 30 բանվ. առանց շարժ մեք.), բայց կարեւոր  
միավորներ են համարվել մեր արդյունաբեր. ձեռնարկ. շարքում: Դրանք  
են որինակ՝ փայտասղոցարանները, ռճառի արտադր., պանրագործարան-  
ները, դինգեր, փորը ելեքտրոկայանները:

Ինչպես գյուղատնտեսության, նույնպես յեվ արդյունաբերության  
արտադրանքի նախապատերազմյան յեվ ժամանակակից արժեքներն ստաց-  
վել են բնական արտադրանքը համապատասխան գներով ուղղակի հաշ-  
վարկելու միջոցով: Բացառություն են կազմում մետաղամշակման յեվ  
պոլիգրաֆ արտադրությունները, վորոնց արտադրանքի նախապատերազմ-  
յան արժեքը պայմանորեն ստացվել է՝ ժամանակակից արժեքը նույն  
տարվա համաարդյունաբերական ինդեքսով վերաժելու միջոցով: Իրակա-  
նում նրանց նախապատ. արժեքը կարող է ավելի պակաս լինել:

№ 8 աղյուս.՝ կոնյունկտուր յեվ արդ. ընթացիկ վիճակ. տվյալներով:

№ 9 յեվ 10 աղյուս.՝ Աշխ. վիճ. Բյուրոյի տվյալներով:

**3. Առեւտուր յեվ կոոպերացիա № 11 աղյուս.՝** Տնտ. վիճ. Սեկցիայի  
յեվ Ն. Ա. Ժ. Կ. լիազ. տվյալներով: № 12, 14 յեվ 15 աղյուս.՝ Հայկոո-



**Ի. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**  
**ՑԱՆՔՍԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

պի (№ 14 նայել Հայգյուղկոռպի) տվյալներով: № 13 յեվ 16 աղյուսակ:  
Ն. Ա. Ժ. Կ. լիազ. կոնյունկտուր տվյալներով:

4. Խնդեհսներ յեվ գներ. № 17 աղյուսակ: Աշխ. Վին. բյուրոյի, իսկ  
№ № 18 19 յեվ 20 աղյուսակ: Կենսավիճակարի ֆին. առ. կոռպ. բաժնի տրվ-  
յալներով:

5. Վարկ յեվ բյուջե: № 12 աղյուսակ: տեղական բանկերի կոնյունկ-  
տուր տվյալներով: № № 22 յեվ 23 աղյուսակ: Ֆին-ժող. կոմ. ~~վարկ~~ յեվ  
Պետպլանի ֆին.-բյուջ. Սեկցիայի տվյալներով:

| ԿՈՒՆՏՐԱՆԵՐԻ<br>ԱՆՈՒՆՆԵՐԸ           |                                           | Բացառակ թվերով<br>(Հազար դրամ.) |       |       |       |       | ‰ առ 1909—13 թ. |       |        |                     |
|------------------------------------|-------------------------------------------|---------------------------------|-------|-------|-------|-------|-----------------|-------|--------|---------------------|
|                                    |                                           | 1909-13 թ.                      | 1923  | 1924  | 1925  | 1926  | 1923            | 1924  | 1925   | 1926                |
| <b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՄԵՐ</b>              |                                           |                                 |       |       |       |       |                 |       |        |                     |
| 1                                  | Աշխան ցորեն . . . . .                     | 87,4                            | 64,5  | 62,7  | 70,0  | 72,4  | 73,8            | 71,7  | 80,2   | 82,8                |
| 2                                  | Գարնան ցորեն . . . . .                    | 88,0                            | 56,3  | 66,0  | 71,8  | 88,0  | 64,0            | 75,0  | 81,6   | 100,0               |
| 3                                  | Գարի . . . . .                            | 91,2                            | 69,6  | 72,6  | 73,9  | 74,7  | 76,3            | 79,6  | 81,0   | 81,9                |
